

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Մակրոտնտեսական ցուցանիշներ	6
Ֆինանսական միջոցներ	7
Աուդիտ	14
Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր	16
Արդյունաբերություն	21
Քաղաքաշինություն	23
Տրանսպորտ, ճանապարհաշինություն գործունեության բնագավառ	26
Ջրամատակարարում	31
Բնակարանային եւ ենթակառուցվածքների	32
Գազամատակարարում	34
Էներգամատակարարում, Կապ	35
Գյուղատնտեսություն	40
Բնապահպանություն	47
Հողաշինություն և հողօգտագործում	49
Առևտուր և սպասարկում	51
Տարածքային կառավարում	52
Տեղական ինքնակառավարում	54
Կրթություն	64
Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր	72
Առողջապահություն	79
Սոցիալական ապահովություն	93
Ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանություն	99
Արտաքին կապեր, միջազգային կազմակերպություններ	101
Փոխհարաբերություններ մարզպետարանի և պետական մարմինների միջև	104
Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր	108
Քաղաքաշինություն և արտակարգ իրավիճակներ	111
Զորակոչ և զորհավաքային նախապատրաստություն	113
Օրինականության պահպանում	115
Աշխատանք կադրերի հետ և աշխատանքային կարգապահություն	117
Մարզպետի կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները	



Ն Ա Խ Ա Ք Ա Ն**Ընդհանուր տեղեկություններ**

Աշխարհագրական դիրքը՝	Հայաստանի Հանրապետության հյուսիս
Բնակավայրերը՝	ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա
Պետական սահմանը՝	Վրաստանի Հանրապետության հետ՝ 110 կմ
Տարածությունը՝	3799 քառ. կմ

Բնակչության թիվը՝	217.8 հազար մարդ, այդ թվում՝
➤ քաղաքային	128.9 հազար մարդ,
➤ գյուղական	88.9 հազար մարդ,

Մարզի համայնքների թիվը՝	56, որից՝
խոշորացված համայնքներ	11
Բնակավայրերի թիվը	130

➤ Մարզկենտրոնը	ք. Վանաձոր
➤ Կառավարման ձևը	տարածքային կառավարում

Ազգային կազմը	
➤ հայեր	97.0 %,
➤ ռուսներ	1.5 %,
➤ հույներ	1.0 %,
➤ այլ ազգություններ	0.5 %:

Սահմանամերձ բնակավայրերը՝ 5 (Ջիլիգա, Պաղաղբյուր, Ապավեն, Արծնի, Ձորամուտ)

2018 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման բնագավառում աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել.

- Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը.

- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի համագործակցության արդյունավետության բարձրացումը.

- Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպումը.

- Իրավական հսկողությունը մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ և ՏԻՄ-երին մեթոդական, խորհրդատվական, գործնական օգնության կազմակերպումը.

- Համայնքներում առկա խնդիրների լուծմանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության առավել ակտիվ ներգրավումը:

Հաշվետու ժամանակաշրջանում Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2018թ. աշխատանքային ծրագրի համաձայն մարզի տարածքային կառավարման իրականացման հիմնական նպատակային դրույթներ են եղել՝

- Պետական և տեղական բյուջեների միջոցների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը:

- Կրթական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը և հանրակրթական դպրոցների ջեռուցման համակարգերի գազաֆիկացումը:

- Արտադրական հզորությունների վերագործարկումը և նորերի շահագործումը՝ առաջնահերթությունը տալով լեռնամետալուրգիային, հանքարդյունաբերությանը և սննդի արդյունաբերություններին:

- Փոքր և միջին ձեռներեցության զարգացման խթանում և աջակցումը:

- Տրանսպորտային փոխադրումների կանոնակարգումը և ընդլայնումը:

- Կապի նոր ծառայությունների բացմանը աջակցումը և սպասարկման որակի բարելավման խթանումը:

- Մասնավոր գյուղացիական տնտեսություններին վարկերի (լիզինգների) հատկացման աջակցումը:

- Բնական աղետների հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը:

- Առողջապահության բնագավառի աշխատանքների բարելավումը:

- ՀՀ կառավարության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը:

- Նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով աղքատության մակարդակի իջեցումը:

- «Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքով նախատեսված միջոցառումների իրականացումը:

- 2018 թվականին անցկացվել են ՏԻՄ-երի ընտրություններ 10 համայնքներում, որից 1-ում համայնքների ղեկավարների և ավագանիների, 6-ում համայնքի ղեկավարի, 3-ում ավագանու անդամների:

- Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են 171 մրցույթներ, որոնցից կայացել են 111-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 136 քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են 127-ը: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչվել և թափուր պաշտոններում նշանակել են 111-ը:

2018թ. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱԿՐՈՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2018թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների համախառն արտադրանքը

(ծավալը) (մլն. դրամ)

	2018թ. տարեկան /փաստացի/	Աճը 2017թ. տարվա նկատմամբ, %	Տեսակարար կշիռը հանրապետական ծավալում, %
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	71840.3	47.1	4.1
Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը	72700.0	92.1	8.2
Շինարարության ծավալը	20038.0	116.2	4.7
Մանրածախ առևտրի շրջանառությունը	43290.4	115.0	3.1
Ծառայությունների ծավալը	20783.8	114.1	1.2
Ընդամենը մարզում	228652.5	76.5	3.7
Էլեկտրաէներգիայի արտադրությունը (մլն ԿՎտ/ժ)	202.1	124.3	2.6 (ՀԷԿ-ի 8.7%)
Արտաքին ապրանքաշրջանառությունը (հազ. դոլար), այդ թվում՝	369195.7	84.72	5.1
ա/ արտահանում	254762.8	76.5	10.7
բ/ ներմուծում	114432.9	111.4	2.4

2018թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների համախառն արտադրանքը (ծավալը) կազմել է 228.5 միլիարդ դրամ (հանրապետականի 3.7%-ը) կամ աճը 2017թ. նկատմամբ կազմել է 76.5%:

Համախառն ներքին արտադրանքը (ՀՆԱ) 2017թ. մարզում կազմել է 261.9 մլրդ դրամ (հանրապետականը՝ 5043.6 մլրդ դրամ), մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 1028677 դրամ (հանրապետականը՝ 1697645 դրամ) կամ հանրապետականի 60.6%: 2017թ. Լոռու մարզի ՀՆԱ-ի տեսակարար կշիռը հանրապետական ընդհանուր ցուցանիշում կազմել է 4.5%: ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով մարզում ազգային միջին տոկոսի նկատմամբ կազմել է 68.9%, 2009թ. 42%-ի և 2015թ. 63%-ի դիմաց:

Մեկ շնչին ընկնող տնտեսական ցուցանիշները ՀՀ-ում և Լոռու մարզում 2018թ.

(մշտական բնակչության թիվը 1.01.2019թ. ՀՀ – 2969.0 հազ. մարդ, առանց Երևան քաղաքի – 1890.1 հազ. մարդ, Լոռի – 216.0 հազ. մարդ)

	Չափի միավոր	ՀՀ	Լոռի	Լոռի ±	Լոռի %
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	դրամ	585276.4	332592.6	-252683.8	56.8
Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը	դրամ	299663.2	336574.1	+36910.9	112.3
Շինարարության ծավալը	դրամ	142237.1	92768.5	-49468.6	65.2
Մանրածախ առևտրի շրջանառությունը	դրամ	475168.2	200418.5	-274749.7	42.2
Ծառայությունների ծավալը	դրամ	594392.5	96221.3	-498171.2	16.2
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	ԿՎտ/ժ	2619.4	935.6	-1683.7	35.7
Արտաքին ապրանքաշրջանառությունը	դոլար	2418091.3	1709239.3	-708851.9	70.7
ա/ Արտահանում	դոլար	802.2	1179.4	+377.26	147.0
բ/ Ներմուծում	դոլար	2346.4	529.8	-1816.6	22.5
Համայնքների սեփական եկամուտներ (փաստ)	դրամ	14.142	10.598	-3244	74.9
ա/ ընդամենը	դրամ	10.899	10598	-30	97.2
բ/ առանց Երևան քաղաքի					

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

2018թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ
ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

Մարզի համայնքների բյուջեներով 2018թ. կտրվածքով նախատեսված մուտքերը ապահովվել են 99.4%-ով կամ նախատեսված 7735.8 մլն. դրամ մուտքերի դիմաց հավաքագրվել է 7688.1 մլն. դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները փաստացի կազմել են 6725.4 մլն. դրամ, այդ թվում սեփական եկամուտները՝ 2289.1մլն. դրամ:

(հազար դրամ)

h/ h	Եկամուտների անվանումը	2017թ. Բյուջե			2018թ. Բյուջե			2018թ-ի աճը 2017թ-ի նկատ.	2018թ- 2017թ-ի փաստ. նկատ. (%)
		պլան	փաստ.	կատ %	պլան	փաստ.	կատ %		
1	Հողի հարկ	357876 .1	312926.7	87.4	362074.1	306398.4	84.6	-6528.3	97.9
2	Գույքահարկ	711676. 9	738979.3	103.8	803136.9	785631.3	97.8	46652.0	106.3
3	Պետական տուրք	45850. 0	50950.1	111.1	47796.0	57369.8	120.0	6419.7	112.6
4	Տեղական տուրք	110787. 2	116456.8	105.1	113419.6	113136.5	99.8	-3320.3	97.1
5	Գույքի վարձ. վճար	217662. 3	221675.1	101.8	254042.4	273202.2	107.5	51527.1	123.2
6	Այլ հարկային եկամուտներ								
7	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	24005. 0	21529.2	89.7	3880.0	8008.5	206.4	-13520.7	37.2
8	Տեղական վճարներ	335802 .0	330598.2	98.5	625573.0	600236.5	95.9	269638.3	181.6
	որից աղքատիության վճար	241956 .8	226199.8	93.5	328905. 2	286292.1	87.0	60092.3	126.6
9	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	4852.4	7254.5	149.5	3965.0	4813.0	121.4	-2441.5	66.3
10	Մուտքեր տույժերից, տուգանքներից	2640.0	1315.5	49.8	2215.0	2474.1	111.7	1158.6	188.1
11	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							0.0	
12	Այլ եկամուտներ	56509. 4	51164.5	90.5	129651.7	137874.2	106.3	86709.7	269.5
13	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման	430146 1.5	4301461. 5	100.0	4270708. 5	4270626.9	100.0	-30834.6	99.3

	սկզբունքով տրամադրվող դոտացիաներ								
	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ	230364 .9	7677.8	3.3	881.4	881.4	100.0	-6796.4	11.5
14	Պետ.բյուջ. պատվիր.լիազ.կատ. միջոց	80857. 0	80688.4	99.8	80849.3	80485.3	99.5	-203.1	99.7
15	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	170209 .4	164806.1	96.8	94430.5	84218.7	89.2	-80587.4	51.1
	ԴԱՀ-ով տարված գումարներ բյուջեի վարչական մասից		-552.1					552.1	0.0
	Ընդամենը վարչ. բյուջեի եկամուտներ	66505 54.1	6406931. 6	96.3	6792623. 4	6725356.8	99.0	318425.2	105.0
16	Տարեսկզբի ազատ մնացորդ	29829. 7	29829.7	100.0	35164.2	35164.2	100.0	5334.5	117.9
	Ընդամենը վարչ. բյուջեի մուտքեր	66803 83.8	6436761. 3	96.4	6827787. 5	6760521.0	99.0	323759.7	105.0
1	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	9508.6	8639.2	90.9	19930.3	18542.5	93.0	9903.4	214.6
2	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	88716. 0	86627.3	97.6	404746.4	426392.8	105.3	339765.5	492.2
3	Հատկացումներ պահուստ. ֆոնդից	144662 .5	105937.0	73.2	256572.3	183484.6	71.5	77547.6	173.2
4	Այլ մուտքեր	500.0	500.0	100.0	2000.0	2000.0	100.0	1500.0	400.0
	ԴԱՀ-ով տարված գումարներ բյուջեի ֆոնդային մասից								
	Ֆոնդային բյուջեի եկամուտներ	243387 .0	201703.5	82.9	683249. 0	630420.0	92.3	428716.5	312.5
4	Տարեսկզբի ազատ մնացորդ	554155 .1	554155.1	100.0	481334.5	480633.5	99.9	-73521.6	86.7
	Ֆոնդային բյուջեի մուտքեր	797542 .1	755858.6	94.8	1164583. 5	1111053.5	95.4	355194.8	147.0
	Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ	186766 1.3	1852849. 9	99.2	2345753. 7	2289144.5	97.6	436294.6	123.5
	Ընդամենը բյուջեի եկամուտներ	674927 8.6	6502698. 1	96.3	7219300. 1	7172292.2	99.3	669594.1	110.3
	Ընդամենը բյուջեի մուտքեր	733326 3.4	7086682. 9	96.6	7735798. 7	7688089.8	99.4	601406.9	108.5


Վարչական բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 99.0%-ով՝ նախորդ տարվա

96.3%-ի դիմաց: Իսկ Ֆոնդային բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 92.3%-ով՝ նախորդ տարվա 82.9%-ի դիմաց:

Համայնքների սեփական եկամուտները 2017թ. կտրվածքով կազմել է 1852.8 մլն դրամ, 2018թ. կտրվածքով կազմել է 2289.1 մլն դրամի դիմաց կամ եկամուտների ինդեքսի աճը 2017թ-ի նկատմամբ կազմել է 123.5%, բացարձակ աճը 2017-ի նկատմամբ՝ 436.3 մլն. դրամ:

Պետք է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների աճ են գրանցել Ստեփանավանի տարածաշրջանի համայնքներում՝ 108.7%, Գուգարքի տարածաշրջանի համայնքներում՝ 123.3%, Տաշիրի տարածաշրջանի համայնքներում՝ 111.3%, Սպիտակի տարածաշրջանի համայնքներում՝ 109.1%, Թումանյանի տարածաշրջանի համայնքներում՝ 148.7%:


Եթե դիտարկենք սեփական եկամուտների հավաքագրումը ըստ տարածաշրջանների՝ ապա կտեսնենք, որ եկամուտների գերակշիռ մասը ապահովում է Գուգարքի տարածաշրջանը՝ 45.5%, ապա Թումանյանի տարածաշրջանը՝ 23.8%, Սպիտակի տարածաշրջանը՝ 11.2%, Ստեփանավանի տարածաշրջանը՝ 10.6%, Տաշիրի տարածաշրջանը՝ 8.9%:



2018թ.ին նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրումը նվազել է մարզի 14 համայնքներում (համայնքների 25.0%-ը, այդ թվում՝ Սպիտակում՝ 4 համայնք, Գուգարքում՝ 6 համայնք, Թումանյանում՝ 3 համայնք, Ստեփանավանում՝ 1 համայնք:

Սեփական եկամուտների գծով 2018թ. համար նախատեսվել են 2345.8 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 2289.1 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 97.6%, 2019թ. համար նախատեսվել է 2460.1 մլն. դրամ, կամ աճը 2018թ. պլանի նկատմամբ նախատեսվել է 104.9%, փաստացիի նկատմամբ 107.5%: Մարզի 1 բնակչի հաշվով սեփական եկամուտների գծով ցուցանիշը 2018թ. համար կազմում է 10597 դրամ, 2019թ. համար նախատեսվել է 11389 դրամ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2017 թ-ին սեփական եկամուտները մինչև 80% կատարել էին 5 համայնք, 2018 թ-ին՝ 9 համայնք, 80-100% համապատասխանաբար 23 և 24 համայնքներ, 100%-ից ավել՝ 28 և 23 համայնքներ, այսինքն մինչև 80% սեփական եկամուտներ ունեցող համայնքների թիվը աճել է 4-ով, 80-100%-ից ավել աճել՝ 1-ով, իսկ 100%-ից ավել նվազել՝ 5-ով:



2018 թվականին մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների ընդհանուր ծավալում հողի հարկի փաստացի տեսակարար կշիռը կազմել է 13.4%, գույքահարկինը՝ 34.3%, գույքի վարձակալության վճարները (այդ թվում պահուստային հողերի վարձավճարներ) 11.9%, տեղական տուրքը՝ 4.9%, պետական տուրքը՝ 2.5%, այլ եկամուտները՝ 33.0%, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 16.9%, 39.9%, 12.0%, 6.3%, 2.7% և 22.2%-ի դիմաց, ինչը խոսում է այն մասին, որ 2018թ. սեփական եկամուտների տեսակարար կշռում ավելացել է այլ եկամուտների, մասնավորապես, տեղական վճարների բաժինը, որը պայմանավորված է հիմնականում ծնողական վճարները որպես տեղական վճար համայնքի բյուջեում ներառելով, ինչպես նաև աղբահանության գծով վճարների ավելացմամբ:


2018թ. հողի հարկի 362.1 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է ընդամենը 306.4 մլն դրամ, կամ 84.6%, (2017թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 97.9%) որը նախորդ տարվա փաստացի մուտքերից պակաս է 6.5 մլն. դրամով: Մարզի 1 բնակչի հաշվով հողի հարկի հավաքագրման ցուցանիշը 2018թ. համար կազմում է 1418 դրամ, 2019թ. համար նախատեսվել է 1713 դրամ:

Հողի հարկի հավաքագրումը հատկապես վատ է Տաշիրի տարածաշրջանում՝ 63.6% , իսկ Ստեփանավանի տարածաշրջաններում 81.0%, Թումանյանի տարածաշրջանում 86.0%, Գուգարքի տարածաշրջանում 98.6%, Սպիտակի տարածաշրջանում 92.1%:

Նույն ժամանակահատվածում հողի հարկի հավաքագրումը նախատեսվածի մինչև 80% կատարողական են ապահովել 15 համայնք, 80%-ը գերազանցում է 41 համայնքներում, որից 100%-ը 19 համայնքներում:

Հողի հարկի հավաքագրումը 2017թ. համեմատությամբ նվազել է 32 համայնքներում, կամ համայնքների 57.1%, այդ թվում՝ Թումանյանի տարածաշրջանում՝ 6, Գուգարքի տարածաշրջանում՝ 9, Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջաններում՝ 2 ական, Սպիտակի տարածաշրջանում՝ 13 համայնքներ:

Հողի հարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



ՀՀ Լոռու մարզի համայնքների հողի հարկի
հավաքագրումը 2015-2019թթ. (մլն. դրամ)

■ 2015թ. ■ 2016թ. ■ 2017թ. ■ 2018թ. ■ 2019թ. պլան

Գույքահարկի գծով 2018թ. համար նախատեսվել է 803,1 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 785,6 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 97,8%, (2017թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 106,3%) նախորդ տարվանից ավելի է հավաքագրված 46,7 մլն. դրամ:


Մարզի 1 բնակչի հաշվով գույքահարկի հավաքագրման ցուցանիշը 2018թ. համար կազմում է 3637 դրամ, 2019թ. համար նախատեսվել է 4130 դրամ:

Գույքահարկի հավաքագման գործընթացը լավ է ընթացել մարզի կտրվածքով կազմելով՝ 97,8%, Գուգարքի տարածաշրջանում՝ 94,4%, Սպիտակի տարածաշրջանում՝ 102,5%, Թումանյանի տարածաշրջանում՝ 96,8% , Տաշիրի տարածաշրջանում՝ 115,6% և Ստեփանավանի տարածաշրջանում՝ 98,7%:

Գույքահարկի գանձման բարձր մակարդակ է գրանցվել (ավելի քան 80%) մարզի 12 համայնքներում, 100%-ի սահմանագիծը հատել են 43 համայնքներ:


Նախորդ տարվա համեմատությամբ գույքահարկի ծավալները ըստ տարածաշրջանների աճել են Սպիտակում՝ 108,9%, Ստեփանավանում՝ 101,1%, Գուգարքում՝ 104,6%, Թումանյանում՝ 107,7%, Տաշիրում՝ 117,1%, :

Վերջին 5 տարիների ընթացքում գույքահարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



2018թ. ընթացքում համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների 254,0 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել 273,2 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 107,5%,

(2017թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 123,2%, որը նախորդ տարվանից ավել է հավաքագրված 51,5 մլն. դրամ: Մարզի 1 բնակչի հաշվով այս ցուցանիշը 2018թ. համար կազմում է 1265 դրամ, 2019թ. համար նախատեսվել է 1109 դրամ:



Տեղական տուրքերի հավաքագրման մակարդակը կազմել է 99,8%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 105,1%-ի դիմաց, փաստացի հավաքագրումը նվազել է 3,3 մլն. դրամով: 2018թ. ընթացքում տեղական տուրքերի գծով մուտք չեն ունեցել 5 համայնք:

Պետական տուրքի գանձումը կազմել է 120,0%, փաստացի հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 6,4 մլն. դրամով:

Մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ինքնաձախսածակման եղանակով կատարելու և անհրաժեշտ մակարդակի գանձումներ ապահովելու նպատակով մարզի բոլոր համայնքներում, բացի շատ փոքր համայնքներից, առաջարկվել է նախատեսել աղբահանության գծով վարձավճարներ և ապահովել դրանց գանձումը: Ըստ համայնքների կողմից ներկայացված 2019թ. բյուջեների, աղբահանության գծով վարձավճարները նախատեսվել է 317,8 մլն. դրամ, 2018թ. նախատեսված 328,9 մլն. դրամի կամ փաստացի 286,3 մլն. դրամի դիմաց: Նախատեսվել է աճ 2018թ. փաստացիի նկատմամբ 111,0 %:

2018թ. պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 4271568,3 հազ.դրամ ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիա, որը հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով ֆինանսավորվել է 100%-ով, 2019թ. համար նախատեսվել է 4759218,3 հազ. դրամ դոտացիա, 2018թ. նկատմամբ 487650,0 հազ. դրամ ավել, կամ աճը նախատեսվել է 111,4%:

Մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերը 2018թ-ի համար նախատեսվել են 6827,8 մլն. դրամ, 31.12.2018թ. դրությամբ փաստացի վճարվել է 6235,3 մլն. դրամ, կամ 91,3 %, ֆոնդային բյուջեի ծախսերը նախատեսվել 1164,6 մլն. դրամ, որից վճարվել է 573,2 մլն. դրամ, կամ ծախսերը ֆինանսավորվել է 49,2%-ով:

հազար դրամ

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Բյուջեով նախատեսված	փաստացի վճարում	կատարման %	Տեսակարար կշիռը %
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2290897.5	2087234.9	91.1	33.5
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1500.0	300.0	20.0	0.0
3	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՆՎՈՐՈՒՄ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ				

4	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	155505.1	122578.9	78.8	2.0
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	748624.5	704436.1	94.1	11.3
	այդ թվում աղքատացումը	594577.3	557543.1	93.8	
6	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	328740.2	295672.4	89.9	4.7
7	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ՝	3270.0	2160.0	66.1	0.0
8	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	580039.2	542917.0	93.6	8.7
9	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	2183074.0	2130810.8	97.6	34.2
10	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	180233.0	165612.6	91.9	2.7
11	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	355904.0	183555.6	51.6	2.9
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում*	256572.3	183484.6	71.5	2.9
Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր		6827787.5	6235278.3	91.3	94.1
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	472565.3	376730.0	79.7	65.7
2	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	51445.9	-253466.7	-492.7	-44.2
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	249802.6	207803.4	83.2	36.3
	այդ թվում աղքատացումը	55369.5	30436.9	55.0	
4	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	263166.4	166338.1	63.2	29.0
5	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	3330.0	3238.5	97.3	0.6
6	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	79575.4	58706.6	73.8	10.2
7	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	44698.0	13812.7	30.9	2.4
8	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ				0.0
Ընդամենը ֆոնդային բյուջե		1164583.5	573162.6	49.2	8.7
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ		7735798.7	6624956.3	85.6	

ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեների ծախսերը 2018թ. համար նախատեսվել են 7735,8 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 6625,0 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 85,6%: 2018թ. համար 1 բնակչի հաշվով ծախսերի միջին մարզային ցուցանիշը կազմում է 30670 դրամ: Համայնքների բյուջեների վարչական մասի կատարված փաստացի 6235,3 մլն. դրամ ծախսի մեջ համայնքապետարանների պահպանման ծախսերը կազմում են 1866,9 մլն. դրամ կամ 29,9%, 1 շնչին ընկնող ապարատի պահպանման ծախսի միջին մարզային ցուցանիշը կազմում է 8643 դրամ:

Մարզի 56 համայնքների 2018թ.բյուջեների վարչական ծախսերի մեջ աշխատավարձերի գծով ծախսերը կազմել է 1701,8 մլն դրամ, որը կազմում է ծախսերի մոտ 27,3%-ը, կամ

ապարատի պահպանման ծախսերի 91,2%-ը: Համայնքներում վարչական ծախսերի ընդհանուր ծավալում բարձր է մնում աշխատանքի վարձատրության հոդվածով կատարվող ծախսերի տեսակարար կշիռը:

Մարզի համայնքների բյուջեների աշխատավարձի գծով պարտքերը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 337,8 հազար դրամ, որը Ձորագյուղ համայնքի պարտքն է մանկապարտեզի աշխատակիցներին:

Ըստ ոլորտների ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն կրթության բնագավառին ուղղված ծախսերը՝ 34,2%, այդ թվում նախադպրոցական կրթությանն ուղղված ծախսերը՝ 56,7%, կամ բյուջեների վարչական մասի 19,4%-ը: Ընդ որում 2018թ. մարզում համայնքային բյուջեներից ֆինանսավորվող նախադպրոցական կրթության հիմնարկների թիվը 70 է, որոնք սպասարկում են 27 համայնքների, այս համայնքներում 1 երեխայի կտրվածքով տարեկան միջին ծախսը կազմում է 21,6 հազ. դրամ կամ տատանվում է 16,6 հազ. դրամից մինչև 45,1 հազ. դրամ:

Աղբահանության գծով համայնքային բյուջեներով որպես ընթացիկ ծախս 2018թ. նախատեսվել է 594,6 մլն. դրամ, փաստացի կատարվել է 557,5 մլն. դրամ, 2019թ. բյուջեներով նախատեսվել է 597,1 մլն. դրամ, կամ ծախսի աճ է նախատեսվել 100,4% պլանի նկատմամբ և 107,1% փաստացիի նկատմամբ: 2018թ. փաստացի ծախսածածկումը կազմել է 51,4%, 2019թ. համար նախատեսվել է 53,2%:

Աղբահանության գծով մարզում ծախսեր իրականացրել են 42 համայնքներում, որի համար 2018թ. ծախսվել է 588,0 մլն. դրամ, որից վարչական բյուջեով՝ 557,5 մլն. դրամ, ֆոնդային բյուջեով՝ 30,5 մլն. դրամ: Աղբահանության գծով ընթացիկ ծախսը կազմել է վարչական բյուջեի ծախսերի ընդհանուր գումարի 8,9%ը, կամ մարզում 1 բնակչի հաշվով ծախսվող միջին գումարը կազմում է 2581 դրամ:

Աղբահանության համար վարչական բյուջեով կատարված 2018թ. փաստացի ծախսը Վանաձորում կազմել է 234,6 մլն. դրամ (կատարողականը՝ 90,3%, տեսակարար կշիռը՝ 10,4%), Ալավերդիում՝ 72,9 մլն. դրամ (կատարողականը՝ 100,0%, տեսակարար կշիռը՝ 12,8%), Ստեփանավանում՝ 60,1 մլն. դրամ (կատարողականը՝ 99,9%, տեսակարար կշիռը՝ 14,5%), Սպիտակում՝ 42,3 մլն. դրամ (կատարողականը՝ 91,4%, տեսակարար կշիռը՝ 11,9%), Ախթալայում՝ 10,7 մլն. դրամ (կատարողականը՝ 98,2%, տեսակարար կշիռը՝ 6,3%) և Թումանյանում՝ 5,0 մլն. դրամ (կատարողականը՝ 100,0%, տեսակարար կշիռը՝ 4,8%):

Սոցիալական պաշտպանության բնագավառում մարզի համայնքներում ծախսը 2018թ. կազմել է 165,6 մլն. դրամ կամ վարչական ծախսերի 2,7%-ը: Մարզի 56 համայնքներից սոցիալական ծրագրեր (հիմնականում սոց. օգնությունների տեսքով) իրականացվել են 52 համայնքներում, բացառություն են կազմել Ձորագյուղ, Վահագնաձոր, Ձորագետավան և Անտառաշեն համայնքները:



ԱՌԴԻՏ

2018թ.-ին ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է 86 աուդիտ, որից՝ 80-ը ծրագրային, 6-ը՝ արտածրագրային:

Տարեկան ծրագրի շրջանակներում բաժնի կողմից իրականացվել մարզային ենթակայության կրթական՝ 50 կրթական և մեկ մշակութային ՊՈԱԿ-ներում /ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական բնույթի տեղեկություններում և հաշվապահական հաշվառման գրանցումներում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանս-

սական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում/, իսկ առողջապահական 26 ընկերություններում /«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման օրինականություն/ և ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնում, Կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնում, Իրավաբանական բաժնում /ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանն առնչվող գործառույթներ/:

Համաձայն ՀՀ Լոռու մարզպետի հանձնարարականի՝ տարեկան ծրագրից դուրս, լրացուցիչ իրականացվել է ևս 6 աուդիտ, որից՝ 5 կրթական («Վանաձորի թիվ 2 հիմնական դպրոց», «Լեռնավանի միջնակարգ դպրոց», «Աթանի հիմնական դպրոց», Ոռուտի միջնակարգ դպրոց», «Տաշիրի թիվ 2 հիմնական դպրոց») և մեկ՝ ՀՀ Լոռու մարզպետարանի Թումանյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում:

Հրավիրվել է մարզպետարանի Ներքին աուդիտի կոմիտեի մեկ նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ, որոնց հիման վրա խախտում թույլ տրված մեկ ՊՈԱԿ-ի տնօրեն ենթարկվել է կարգապահական տույժի՝ ստացել է «խիստ նկատողություն», իսկ ևս մեկը՝ «նկատողություն»: Արձանագրվել է 64.24 մլն դրամի տարաբնույթ խախտումներ, որից՝ շուրջ 6.23 մլն. դրամը վերականգնման կամ վերաձևակերպման գումար է /նախորդ տարի՝ 4.24 մլն դրամ/, որից՝ ավելի քան 1.42 մլն դրամը ենթակա է պետբյուջե վերադարձման /նախորդ տարի՝ 1.5 մլն դրամ/, մնացած՝ 4.81 մլն կազմակերպության բյուջե /նախորդ տարի՝ 2.7 մլն դրամ/:

Նախկինում աուդիտի ընթացքում արձանագրվել են հետևյալ խախտումները.

1. Տնօրենների կողմից տրված հրամաններում բացակայում են իրավական հիմքերը՝ ՀՀ օրենքներին և ՀՀ կառավարության որոշումների համապատասխան հոդվածներին հղումները:

2. Դպրոցի կառավարման խորհրդի ձևական գործունեությունը.

3. Դպրոցներում իրականացվող դասաժամերի ոչ պատշաճ ձևով հաշվառումները.

4. Աշխատողներին տարաբնույթ վճարումների կարգի և չափերի՝ կապված վարձատրության, արձակուրդի, ինչպես նաև տոնական և հիշատակի օրերի հաշվարկման հետ կապված խախտումները.

5. Նախահաշիվների, ծախսային և հաշվապահական հաշիվների, դրամարկղային գործառնությունների վարման, եկամտային հարկի, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման հետ կապված խախտումներ.

6. Գույքի դուրս գրման, տարբեր միջոցների անհարկի վատնման, շինարարական աշխատանքների ծախսային մասերում կատարված խախտումները.

7. Մի շարք դեպքերում գնումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքին ոչ համապատասխան, իսկ առանձին դեպքերում խախտվել են նաև ինչպես «Հաշվապահական հաշվառման մասին», այնպես էլ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին», «Հարկային օրենսգրքի» (նախկին՝ «Շահութահարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին», «Եկամտային հարկի մասին»), «Կուտակային կենսաթոշակների մասին» և այլ ՀՀ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի պահանջները:

Բաժնի գոյության անցած 6 տարիների գործունեության արդյունքում կարող ենք փաստել, որ 2013թ. համեմատ 2018թ. պատկերը կտրուկ լավացել է, նվազագույնի են հասցված նախկին խախտումները և թերությունները, մասնավորապես՝ ուսուցիչների բաց թողած և փոխարինած ժամերի մատյանների վարման, գործավարության, աշխատանքի հաճախումների մատյանների

վարման, աշխատակիցների անհարգելի բացակայություններ և մի շարք այլ գործառույթների գծով գրեթե խախտումներ չեն արձանագրվում:

Ելնելով դրանից՝ Աուդիտի բաժինը, հիմք ընդունելով իր վեցամյա գործունեությունը, նախատեսում է հետագա աշխատանքներում ներառել այն գործառույթները, որոնք վերադաս ստուգող մարմինների /մասնավորապես՝ ՀՀ վերահսկիչ պալատ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն և այլն/ ուշադրության կենտրոնում են՝ դրանով իսկ առավել հստակեցնել և կառավարելի կարելի է դարձնել մարզում հետագա ստուգումների ընթացքը՝ բացառելով խախտումները և թերացումները:

Մարզպետի կողմից գրություններ են հասցեագրվել աուդիտի ենթարկված կազմակերպությունների տնօրեններին: Ներքին աուդիտի բաժնի կողմից արձանագրված գումարային խախտումների վերականգնման նպատակով կազմվել են ժամանակացույցեր, ներկայացվել են փաստացի վերականգնված գումարները հիմնավորող փաստաթղթեր: Ներքին աուդիտի բաժնի աշխատակիցների կողմից իրականացվում է ամենօրյա խորհրդատվական աշխատանք, իսկ անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են ղեկավարների և հաշվապահների մասնակցությամբ համապատասխան թեմատիկ խորհրդակցություններ: Ստեղծված է գործունեության գրագետ և փոխվստահության միջավայր՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2018 թվականի ընթացքում մարզպետարանի գործունեության համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի պահանջների, Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրի գերակայությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. հուլիսի 6-ի նիստի N29 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության» (այսուհետ՝ ՄՁՌ) հիմնարար դրույթների ու զարգացման գերակա ուղղությունների համադրումը:

ՄՁՌ-ի հիմնական տեսլական է ունենալ բազմաճյուղ, զարգացող արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն եւ զարգացած զբոսաշրջություն, ՏՏ ոլորտ, որին հասնելու նպատակով իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանվել են ռազմավարական նպատակները.

- 1) Մինչև 2025թ. մարզի տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառում, աշխատատեղերի ստեղծում, աղքատության կրճատում՝ մինչև 10%,
- 2) Մինչև 2025թ. մարզի երեք տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովում՝ շեշտը դնելով սահմանամերձ և թույլ զարգացած բնակավայրերի վրա,
- 3) Մինչ 2025թ. ՀՀ Լոռու մարզում կրթելավի տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունները և համակարգերը:

Դրանից բխող զարգացման երեք առաջնահերթ գերակայությունները.

- 1) Արտահանմանը միավորված արդյունաբերության զարգացում, մասնավորապես՝ հանքային արդյունաբերության, թեթև արդյունաբերության, սննդի արդյունաբերության և ՏՏ ոլորտի,
- 2) Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում,

3) Մշակութային, գյուղական տուրիզմի զարգացում, ներառյալ ծմեռային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացում:

Ըստ ոլորտային աշխատանքային խմբերի (Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն, Գյուղատնտեսություն, բնապահպանություն, սոցիալական (կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր, առողջապահություն և սոցիալական ապահովություն), ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում), քաղաքաշինություն, Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն) մշակվել է ՄՀՌ-ի 2018թ. Տարեկան գործունեության պլանը (հաստատվել է ՀՀ ՏԿՀՆ 2018թ.մայիսի 8-ի N131-Ա հրամանով):

Ընթացիկ տարում ՄՀՌ-ով նախատեսված աշխատանքները ենթարկվել են վերլուծության, կազմվել են ՄՀՌ-ի 2018թ. գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների մոնիտորինգի հաշվետվություններ՝ եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքներով:

Համայնքների զարգացման ոլորտ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2018թ.-ին լուրջ ուշադրություն է դարձվել համայնքային զարգացման 5-ամյա ծրագրերի իրականացման մշակման և հաստատման գործընթացի վրա: 2018թ.-ին համայնքներում մեկնարկվել են տարեկան աշխատանքային պլանների մշակման եւ կիսամյակային կտրվածքով իրականացված աշխատանքների մոնիտորինգի եւ գնահատման աշխատանքների կազմակերպումը:

Համայնքային տեղեկատվական բազաները (այսուհետ՝ շտեմարաններ), թվայնացվեցին եւ այլեւս կվարվեն էլեկտրոնային տարբերակով:

ՀՀ ՏԿՀՆ իրականացված քաղաքականության արդյունքում համայնքներում հիմնվեցին տեղական տնտեսական պատասխանատուների ինստիտուտը, որը հնարավորություն է ստեղծում իրականացնել տնտեսական զարգացմանն ուղղված քաղաքականության պլանավորում եւ իրագործում տեղական մակարդակներում: ԵՄ ֆինանսավորված «Քաղաքապետերը հանուն տնտեսական զարգացման աճի» ծրագրի շրջանակներում սահմանվեցին համայնքների տնտեսական պատասխանատուների աշխատանքի նկարագրությունը: Տաշիր եւ Ալավերդի համայնքների համար նույն ծրագրի շրջանակներում մշակվել եւ կազմվել են Տեղական Տնտեսական զարգացման պլաններ:

2018թ.-ին ՀՀ կառավարությունը մեկնարկեց համայնքների տնտեսական եւ սոցիալական ենթակառուցվածքների վերականգնմանն ուղղված պետական աջակցության (այլ սուբվենցիաների տրամադրում) ծրագիրը: Լոռու մարզից տարվա ընթացքում մշակվել եւ ՀՀ ՏԿՀՆ է ներկայացվել 27 ծրագրային հայտ, որից 16 ծրագիր իրականացվել է ամբողջությամբ, 4-ի իրականացումը տեղափոխվեց 2019թ., հաշվի առնելով շինարարության համար եղանակային ոչ բարենպաստ պայմանները:

Փոքր և միջին ձեռներեցության զարգացման ոլորտ

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2018թ. ՄԶՌ-ով առաջարկվել է բարձրացնել գործարար ակտիվությունը, ավելացնել նոր ստեղծվող ձեռնարկությունների քանակը, մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման, ինչպես նաև խոշորացված համայնքներում տնտեսական պատասխանատվությունների ինստիտուտի ներդրման միջոցով:

2018թ. Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Լոռու մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցության հիմնական ուղղություններն են՝ գործարար տեղեկատվություն, գործարար խորհրդատվություն, գործարար ուսուցում, վերապատրաստում, վարկային երաշխավորության տրամադրում:

ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի արդյունքում 2018թ. ընթացքում Լոռու մարզի ՓՄՁ-ներին տրամադրվել է հետևյալ թիրախային աջակցությունները՝

- ✓ ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում) - 159
- ✓ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն - 1209 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 1841 անգամ աջակցություն
- ✓ ֆինանսական և ներդրումային աջակցություն - 8
- ✓ Ոլորտային բիզնեսներին աջակցություն - 7
- ✓ միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում - 35

Զբաղվածության պետական գործակալությունը ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի հետ համատեղ իրականացրել է «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց ձեռնարկատիրական գործունեության» մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ դասընթացներ: Դասընթացի վերջում առավել իրատեսական գործարար ծրագրեր ֆինանսավորվել են Զբաղվածության պետական գործակալության կողմից՝ ստանալով դրամաշնորհ ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի համար:

2018թ. տարվա ընթացքում տարբեր ընկերությունների կողմից Լոռու մարզում իրականացվել են ներդրումներ, սակայն գործող կամ նոր ստեղծված ձեռնարկությունների քանակի վերաբերյալ մարզպետարանում պաշտոնական տեղեկատվություն չի ստացվել:

ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցությամբ տարվա ընթացքում պետական գրանցում են ստացել և գործունեություն են ծավալում 21 նոր ՓՄՁ-ներ, ստեղծվել են 14 նոր աշխատատեղեր, շրջանառության և աշխատատեղերի աճ են գրանցել ավելի քան 30 գործող ՓՄՁ-ներ:

Զբաղվածության մարզային գրասենյակների միջոցով պետական աջակցությամբ 2018թ.-ին մարզում իրականացվել են գործատուներին աջակցման տարբեր բնույթի ծրագրեր շուրջ 43,4մլն դրամ արժողությամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտ

ՀՀ ՏԿԶ նախարարության նախաձեռնությամբ հաջողությամբ շահագործվում է ՏԿԶԸ էլեկտրոնային կառավարման տեղեկատվական բաց համակարգը, բաղկացած ՀՀ ՏԿԶ նախարարության եւ 10 մարզերի ինտերնետային կայք-էջերից: Այն օժտված է ինովացիոն տեխնոլոգիաների բոլոր հնարավորություններով: Այս կայքերը թույլ են տալիս ազգաբնակչությանը

համացանցի միջոցով ուղիղ կապ հաստատել մարզպետարանի հետ: Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքն է՝ www.ori.mtad.am:

2018թ.-ին ներդրվեց էլեկտրոնային փաստաթղթաշարժի «Mulberry-2» նոր համակարգը, որը նախորդ «Mulberry-1.3» համակարգի նորացված տարբերակն է: Համակարգի միջոցով իրականացվում է մարզպետարանի ներքին փաստաթղթաշրջանառության ամենօրյա, ինչպես նաև էլեկտրոնային ինֆորմացիայի փոխանակման աշխատանքների իրականացումը՝ մարզպետարանի և ՀՀ կառավարության, նախարարությունների, գերատեսչական մարմինների աշխատակազմերի միջև, որտեղ տեղադրված է նմանատիպ համակարգ:

Մարզի համայնքների 56 բնակավայրերում հաջողությամբ շահագործվում է Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգերը (այսուհետ՝ ՀԿՏՀ), որի օգնությամբ ՀԿՏՀ ներդրած 39 համայնքների համակարգերը միացված են Mullbery համակարգին՝ էլեկտրոնային փաստաթղթաշարժ իրականացնելու նպատակով:

Կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը, մարզպետարանը համագործակցում է «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, ինչպես նաև ՏՏ ոլորտի և իրենց գործունեության մեջ ՏՏ ոլորտը կիրառող մարզի առաջատար ձեռնարկությունների հետ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում որպես հաջողված արդյունք կարելի է նշել ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ 2014թ.-ին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) հիմնումը, որի գլխավոր օպերատոր է նշանակվել Հայաստանի Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամը (ՁԻՀ): Կենտրոնի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2016թ.-ի աշնանը ՀՀ Նախագահի անմիջական մասնակցությամբ:

Ծագիրն ուղղված է նպաստելու Լոռու մարզի Վանաձոր քաղաքում ժամանակակից գիտելիքահենք և ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնի ստեղծմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, ինչպես նաև մարզի սկսնակ ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին բիզնես աջակցության ու խորհրդատվության տրամադրմանը:

Ներկայումս Կենտրոնում գործում են տեղեկատվական տեխնոլոգիաների և ճարտարագիտական ոլորտների ուսումնական լաբորատորիաները, Համատեղ աշխատանքային տարածք՝ սկսնակ թիմերի համար:

2018թ.-ին «Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում» (ՎՏԿ) գործունեության են ծավալում թվով 12 ձեռնարկություններ, այդ թվում հոլանդական «Արխիդաշ» եւ «Արդեսկ» կազմակերպությունները: Բոլոր ընկերություններում ներգրավված աշխատողների թիվն 105-ն է: Տարվա ընթացքում կազմակերպվել եւ անց են կացվել թվով 23 միջոցառումներ, կազմակերպվում են բազմաբնույթ վերապատրաստման եւ մասնագետների պատրաստման դասընթացներ:

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը մարզպետարանի հետ համատեղ կազմակերպել եւ անց է կացրել բազմաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝

✓ «Հայաստանում զբոսաշրջության զարգացմանն ուղղված գաղափարների» մրցույթ հեքըթոն, որին մասնակցել են 50 թիմեր,

✓ Ամենամյա դարձած «Ճարտարագիտական 2-րդ ֆորում-էքսպո» ցուցահանդես, որը նպատակ ուներ ցույց տալ Հայաստանում ճարտարագիտական ոլորտի վերջին ձեռքբերումները եւ քննարկել ինժեներական կրթության եւ բիզնես միջավայրի մարտահրավերները, ինչպես նաև ոլորտի գլոբալ զարգացումները: Ցուցահանդեսին մասնակցել են 300-ից ավելի մասնակիցներ

պետական, հետազոտական, կրթական, դոնոր կազմակերպություններ, սկսնակ եւ գործող ինժեներական ընկերություններ, ոլորտի հայաստանյան եւ արտասահմանյան ներկայացուցիչներ: Ցուցահանդեսի ընթացքում ներկայացված էին ավելի քան 35 տեղական եւ միջազգային ընկերությունների ներկայացուցիչներ իրենց արտադրանքները, լուծումները եւ ծառայությունները

2018թ.-ին Լոռու մարզում պաշտոնապես բացվեց Հայաստանի Մանուկներ Հիմնադրամի կողմից ՍՄԱՐԹ կենտրոնը, որի նպատակը գյուղական կյանքի ակտիվացումն է, դպրոցահասակ երեխաների եւ երիտասարդների կարողությունների եւ ունակությունների զարգացումը: Կենտրոնն ապահովվել է 40 նոր աշխատատեղ: Այս կենտրոնն իր բովանդակությամբ եւ տեսակով Հայաստանում առաջինն է, որը նոր հնարավորություններ կստեղծի մարզի գյուղական միջհամայնքային կապի ամրապնդման, փորձի փոխանակման, դպրոցականների կրթությունը նորարարական տեխնոլոգիաներով կազմակերպելու համար: Հիմնադրամի կողմից մարզի 6 համայնքներում ստեղծվել են ստեղծագործարաններ:

Գործունեության ծրագիր

Ըստ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության 2018թ. գործունեության ծրագրի նախատեսված իրատեսական բյուջեն կազմել է 59,991,915.9հազ. դրամ, այդ թվում՝

➤ ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝	34,631,882.4 հազ. դրամ,
այդ թվում՝	
✓ Սեփական միջոցներ՝	21,271,860.4 հազ.դրամ,
✓ Վարկային միջոցներ՝	13,360,022.0 հազ.դրամ,
➤ Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝	352,234.5 հազ.դրամ,
➤ Համայնքային բյուջեների ներդրումներ՝	287,189.0 հազ.դրամ,
➤ Մասնավոր հատվածի ներդրումներ՝	20,980,360.0 հազ.դրամ,
➤ Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝	3,740,250.0 հազ.դրամ:

2018թ. փաստացի իրականացվել է 45,774,617.1հազ. դրամի աշխատանքներ, որից՝

հազ.դրամ

		2018թ. ՏԱՊ- ով պլանավորված	2018թ. Տարեկան իրականաց- րած	Կատարման %
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2018թ. Տարեկան	59,991,915.9	45,774,617.1	76.3
	որից՝			
1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	34,631,882.4	33,089,353.7	95.5
	սեփական միջոցներ	21,271,860.4	19,817,548.7	
	վարկային միջոցներ	13,360,022.0	13,271,805.0	
2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ	352,234.5	749,125.0	212.7
3	Համայնքային բյուջե	287,189.0	324,880.4	113.1
4	Մասնավոր ներդրողներ	20,980,360.0	11,185,058.00	53.3
5	Այլ աղբյուրներ	3,740,250.0	426,200.0	11.4

ՀՀ Լոռու մարզի 2018թ. գործունեության ծրագրի ֆինանսավորումն ըստ բնագավառների

(հազ. դրամ)

	Ոլորտը / ֆինանսավորման աղբյուրը/	2018թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն	Այդ թվում՝ պետական միջոց	2018թ. Տարեկան իրականացրած	Այդ թվում՝ պետական միջոց
1	Արդյունաբերություն, ՓՄՁ և մասնավոր հատված	19,605,942.5	228,058.0	9,347,366.0	223,415.0
1.1	Հանքարդյունաբերություն	1,600,000.0	0.0	1,190,616.0	0.0
1.2	Մշակող արդյունաբերություն	6,585,000.0	0.0	6,129,300.0	0.0
1.3	ՓՄՁ աշակցման ծրագրեր	8,242,212.5	228,058.0	403,092.0	138,415.0
1.4	Զբոսաշրջություն	3,178,730.0	0.0	61,743.0	0.0
1.5	ՏՏ ոլորտ	0		672,615.00	85,000.00
2	Գյուղատնտեսություն	4,405,790.0	205,790.0	2,126,660.0	1,360,060.0
3	Բնապահպանություն	182,643.20	182,643.20	409,179.00	325,404.00
4	Սոցիալական ոլորտներ	20,549,363.2	20,261,363.2	19,663,764.2	19,281,764.2
4.1	Կրթություն	6,851,016.7	6,851,016.7	6,833,310.7	6,833,310.7
4.2	Մշակույթ և Սպորտ	366,601.3	78,601.3	447,333.3	65,333.3
4.3	Առողջապահություն	5,993,635.0	5,993,635.0	6,148,964.0	6,148,964.0
4.4	Սոցիալական պաշտպանություն	7,338,110.20	7,338,110.20	6,234,156.22	6,234,156.22
5	Ենթակառուցվածքներ	11,764,588.00	11,478,228.00	11,627,333.00	10,271,458.00
5.1	Ճանապարհաշինություն	7,359,228.00	7,359,228.00	8,124,683.00	8,020,342.00
5.2	Ջրամատակարարում և ջրահեռացում	46,000.0	46,000.0	116,800.0	53,200.0
5.3	Գազամատակարարում /գազիֆիկացում/	147,960.0	0.0	195,264.0	0.0
5.4	Էներգետիկա	4,211,400.0	4,073,000.0	3,190,586.0	2,197,916.0
6	Քաղաքաշինություն	2,899,908.00	1,692,119.00	2,028,408.30	1,055,345.90
7	Տարածքային կառավարում	583,681.00	583,681.00	571,906.60	571,906.60
	ԸՆԴԱՄԵՆԸ	59,991,915.9	34,631,882.4	45,774,617.1	33,089,353.7


ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2018թ. մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ծավալը ընթացիկ գներով կազմել է՝ 71840.2մլն դրամ, 2017թ. 146408.6 մլն դրամի դիմաց: Համադրելի գներով թողարկվել է 68927.2մլն դրամի արտադրանք, նախորդ տարվա 47.1%-ը: Համադրելի գներով նվազումը կազմում է 77481.4 մլն. դրամ, որը հիմնականում բացատրվում է «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ում, «Թեղուտ» ՓԲԸ-ում, ինչպես նաև Էլ. Էներգիայի արտադրությունում արտադրանքի ծավալների նվազմամբ: Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետական ծավալում կազմում է 4.1 % (6-րդ ցուցանիշը), 2017թ.՝ 8.8%: Պատրաստի արտադրանքի իրացման ծավալը կազմել է 74778.1 մլն դրամ (աճի տեմպը՝ 50.6%), որից՝ ԱՊՀ երկրներ՝ 1234.8 մլն դրամ (աճը՝ 109.2%, տեսակարար կշիռը իրացման ծավալում 1.7%) և այլ երկրներում 41762.6մլն դրամ (համապատասխանաբար՝ 44.9% և 55.8%): Արտասահմանյան երկրներ առաքված արտադրանքի տեսակարար կշիռը իրացված արտադրանքի ընդհանուր ծավալում հանքագործական արդյունաբերությունում կազմում է 68.6%, մշակող արդյունաբերությունում՝ 68.6%, այդ թվում՝ հագուստի

արտադրությունում՝ 96.8%, էլեկտրական սարքավորումների արտադրությունում՝ 99.8%, սննդի արդյունաբերությունում՝ 3.2%, խմիչքների արտադրությունում՝ 2.7%, և այլն:

Ընդհանուր առմամբ մարզի արդյունաբերության պատրաստի արտադրանքի իրացման մեջ արտահանման տեսակարար կշիռը կամել է 57.5%:

Մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները 2018թ. արդյունքներով ունեն այսպիսի տեսք՝



- հանքագործական արդյունաբերություն՝ 7415.7մլն դրամ, ծավալի աճը՝ 9% և տեսակարար կշիռը 10.3% (2017թ.՝ 52.6%);
- մշակող արդյունաբերություն՝ համապատասխանաբար՝ 53914.2մլն դրամ, 88% և տեսակարար կշիռը՝ 75.0% (2017թ.՝ 39.7%);
- էլ.էներգիայի արտադրություն՝ համապատասխանաբար՝ 9646.4մլն դրամ, աճը 95.7% եւ տեսակարար կշիռը 12.9% (2017թ.՝ 6.9%);
- ջրամատակարարում, թափոնների մշակում և այլ ճյուղեր՝ համապատասխանաբար՝ 1247.3մլն դրամ, 98.8% և 1.7% (2017թ.՝ 0.8%):

2018թ. արդյունքներով մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի ունի հետևյալ տեսքը՝ հանքագործական արդյունաբերություն՝ 2.4%, մշակող արդյունաբերություն՝ 4.7%, էլ.էներգիայի արտադրություն՝ 3.6% և ջրամատակարարում և այլ ճյուղեր՝ 4.8%:

2018թ. մարզի մշակող արդյունաբերության մեջ ընթացիկ գներով ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

Հազ. դրամ

Հ/հ	Ճյուղի անվանումը	2018թ.	2017թ.	Աճը, %	Բացարձակ աճը, ±	Տեսակարար կշիռը, %	
						2018թ.	2017թ.
1	Քիմիական արդյունաբերություն	339553	390810	86.9	-51257	0.63	0.7
2	Թեթև արդյունաբերություն	7031481	5579742	126.0	1451739	13.04	9.6
3	Սննդի արդյունաբերություն	17156121	15422167	111.2	1733954	31.82	26.5
4	Մեքենաշինություն և սարքաշինություն	743128	715223	103.9	27905	1.38	1.2
5	Փայտամշակում և կահույքի արտադրություն	124440	44929	277.0	79511	0.23	0.08
6	Մետալուրգիա	27392058	34763414	78.8	-7371356	50.81	59.8

7	Այլ ճյուղեր	1127459	1197077	94.2	-69618	2.09	2.2
	Ընդամենը	53914240	58113362	88.0	-4199122	100	100

2018թ., արտադրության ծավալի աճ են ապահովել մշակող արդյունաբերության թեթև արդյունաբերության, սննդի արդյունաբերության եւ փայտամշակում եւ կահույքի արտադրությունը:

2018թ. արդյունքներով արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը մարզում է կազմել է 7264 մարդ, 201թ. նույն ժամանակաշրջանի 7275 մարդու դիմաց կամ աշխատողների թիվն նվազել է 11 մարդով կամ կազմել է 99.8%-ով: Աշխատողների թիվն ավելացել է հիմնականում մշակող արդյունաբերությունում՝ 808 մարդով (120.9%), այդ թվում՝ հագուստի արտադրությունում՝ 840 մարդով, սննդի արդյունաբերությունում՝ 78 մարդով, հանքարդյունաբերական արտադրությունում նվազել է 820 մարդով, մետալուրգիայում 92 մարդով:

Աշխատանքի արտադրողականությունը անցած տարի մարզի արդյունաբերությունում կազմել է 9889.9 հազ. դրամ (միջին հանրապետականը՝ 19482.9 հազ. դրամ), նախորդ տարվա 20124.9 հազ. դրամի դիմաց (49.1%):

2018թ. մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից բնեղեն արտահայտությամբ արտադրվել է կոնվերտորային պղինձ (սև պղինձ) 8831.0 տոննա (աճը՝ 73.3%), մոլիբդենի խտանյութ՝ 58.0 տոննա, պղնձի խտանյութ՝ 17072.0 հազ. տոննա (աճը՝ 13.7%), լաքաներկանյութեր՝ 55.1 տոննա (աճը՝ 51.1%), ավտոգենային սարքավորումներ 36.4 հազար հատ (աճը՝ 119%), էլեկտրաշարժիչներ՝ 2325 հատ (աճը՝ 147.3%), երկաթբետոնյա իրեր և կոնստրուկցիաներ՝ 11899.0 տոննա (աճը՝ 101.1%), կարի արտադրանք (բաճկոններ)՝ 725.5 հազ. հատ (աճը՝ 144.7%), պանիր՝ 1136.3 տոննա (աճը՝ 206.2%), հաց՝ 3.2 հազ. տոննա (աճը՝ 116.7%), ոչ ալկոհոլային խմիչքներ՝ 2.2 մլն. լիտր (աճը՝ 101.8%), էլ.էներգիա՝ 202.1 մլն Կվտ/ժամ (աճը՝ 124.3%) և այլն:

ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

2018թ. քաղաքաշինության, տրանսպորտի և ճանապարհաշինության, բնակարանային եւ ենթակառուցվածքների ոլորտում մարզում նախատեսված 19633.5 մլն դրամից իրականացվել է շուրջ 16896.7 մլն դրամի շինարարական աշխատանքներ / Հավելված-1/, այդ թվում, քաղաքաշինության ոլորտում նախատեսված 5787.21 մլն դրամից փաստացի իրականացվել են 4842.6 մլն դրամի շինարարական աշխատանքներ,

ըստ ֆինանսավորման աղբյուրների ունի հետևյալ պատկերը՝

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ – 615.7 մլն դրամի, որից

- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե– 280.1 մլն դրամ
- ՀՀ մշակույթի նախարարություն – 50.2 մլն դրամ
- ՀՀ աշխատանքի և սոց. հարցերի նախարարություն-73.0մլն դրամ
- Լոռու մարզպետարան – 88.7 մլն դրամ
- Սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շինար.- 123.7 մլն.դրամ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ/ՀՏՀ/ – 615.9 մլն դրամ

Այլ ֆինանսական միջոցներով- 3611.0 մլն դրամ, որից՝

- Դոնոր կազմակերպությունների և մասնավոր ներդրողների կողմից-1023.8 մլն դրամ
- Համայնքների բյուջեների հաշվին իրականացված աշխատանքներ-87.2 մլն դրամ
- Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ներդրումներ – 2500.0 մլն.դրամ

4842.6 մլն դրամի շինարարական աշխատանքները ըստ ոլորտների բաշխվել են հետևյալ կերպ՝

h/h	Ըստ ոլորտների	Ընդամենը մարզում	ՀՀ պետական բյուջե	Այլ ֆինանսավ.	ՀՏՀՀ
1	Կրթական օբյեկտներ	990.22	368.8	173.8	447.62
2	Մշակութային եւ սպորտային օբյեկտներ	964.09	50.2	850.0	63.89
3	Առողջապահական օբյեկտներ	61.8	0	0	61.8
4	Այլ օբյեկտներ	2826.54	73.0	2710.9	42.64
	Ընդամենը	4842.6	492.0	3734.7	615.95

Քաղաքաշինության ոլորտում իրականացված առավել խոշոր օբյեկտներն են.

- Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքներ՝ իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 1մլր150մլն դրամ նախահաշվային արժեքով: Աշխատանքները սկսվել են 2014թ.-ին /շարունակական/:2018թ. կատարվել է 107.8 մլն.դրամի շինարարական աշխատանքներ:
- «Ալավերդի և Սպիտակ քաղաքներում նոր մանկապարտեզի շենքերի կառուցում» իրականացվում է «Տաշիր»ԲՀ-ի շուրջ 1,0մլր դրամի ֆինանսավորմամբ: Շինարարական աշխատանքները սկսվել են 2016թ -ին /շարունակական/:
- Վանաձորի թիվ 7 դպրոցի կառուցում՝ իրականացվում է ՀՏՀՀ-ի կողմից՝ 798,0 մլր դրամի Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ: Շինարարական աշխատանքները սկսվել են 2017թ: 2018թ. կատարվել է 196.4 մլն.դրամի շինարարական աշխատանքներ: Աշխատանքները կավարտվեն 2019թ:
- Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցում՝ իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Պայմանագրային գումար՝ 135.0մլն.դրամ, որից 39,2մլն.դրամը 2017թ.: Շինարարության սկիզբը՝ 2016թ: 2018թ. ավարտվել է շինարարական աշխատանքները:

ՀՀ Լոռու մարզի աղետի գոտու բնակավայրերում բնակապահովման խնդիրների վերաբերյալ

2018թ. Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2018թ. թիվ 424-Ն որոշմամբ հաստատված , հավելված թիվ 1-ում ընդգրկված 198 գույքը «Գլենդել Հիլզ» ՓԲԸ եւ սնանկության հարցերով կառավարչից ընդունվել է և Հայաստանի Հանրապետության անվամբ գրանցվել է սեփականության իրավունք 197 գույքի նկատմամբ: Նշված հավելվածից ըստ պատրաստակամության աստիճանի ընտրվել է 44 գույք և պետական բյուջեից հատկացված 460.0 մլնդ.դրամ գումարի հաշվին պետք է ավարտվեն բնակելի տները և սեփականության իրավունքով հանձնվեն շահառու ընտանիքներին:

ՀՀ կառավարության որոշմամբ հանձնարարվել է ՀՀ Լոռու մարզպետին կնքել պայմանագիր «Ֆուլեր տնաշինական կենտրոն» հասարակական բարեգործական ընկերության հետ 2019թ. մարտի 10-ից մինչև դեկտեմբերի 1-ը ավարտել 44 տների շինարարական աշխատանքները և հանձնել շահառու ընտանիքներին:

ՀՏՀ-ի /ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ/ ծրագրով

նախատեսված է իրականացնել շուրջ **881.9** մլդ դրամի շինարարական աշխատանքներ:

ՀՏՀ-ով նախատեսված աշխատանքները սկսվել են 2016թ-ից, 2018թ իրականացվել է 615.9 մլն դրամի, իսկ մնացած աշխատանքները կիրականացվեն 2019թ: Այս ծրագրերի իրականացումը մեծ աջակցություն է մարզի համայնքներին:

	Ծրագրի անվանումը	Պլանավորված գումարը (մլն. դրամ)	2018թ փաստացի կատարվել է	Ծանոթություն աշխատանքների կատարման վերաբերյալ
1	Ստեփանավանի մարզադպրոցի հատակների հիմնանորոգում	18.9	18.7	ավարտվել են 2018թ.
2	Տաշիրի համայնքային կենտրոնի հիմնանորոգում և համալիր սոցիալական ծառայության շենքի վերակառուցում	18.34	18.34	ավարտվել են 2018թ.
3	Ախթալայի թիվ 2 դպրոցի հիմնանորոգում	49.3	49.3	ավարտվել են 2018թ.
4	«Ստեփանավանի բժշկական կենտրոն»ՓԲԸ համաբուժարանի հիմնանորոգում	95.0	61.8	վարտվել են 2018թ.
7	Գյուլագարակում մանկապարտեզի կառուցում	18.39	18.4	ավարտվել են 2018թ.
8	Սպիտակի մշակույթի տան վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	75.11	63.89	ավարտվել են 2018թ.
9	Վանաձորի թիվ 11 մանկապարտեզի հիմնանորոգում	111.1	108.0	ավարտվել են 2018թ.
10	Վանաձորի թիվ 7 դպրոցի կառուցում	400.0	196.4	Ավարտը 2019թ.
11	Արևաշողի դպրոցի մարզադահլիճի կառուցում	56.82	56.82	ավարտվել են 2018թ.

2018թ. շինարարական ծրագրերի հիմնական ուղղությունները եղել են՝

Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերականգնում, բակերի բարեկարգում, կոմունալ ենթակառուցվածքների վերանորոգում, խոշորացված համայնքների համակցված գլխավոր հատակագծերի կազմում, մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացում և վերանորոգում, էներգոխնայողության համակարգերի տեղադրում, մշակութային օբյեկտների շենքերի կառուցում և վերանորոգում, գյուղական համայնքներում առողջապահական օբյեկտների կառուցում և վերանորոգում:

Քաղաքաշինության վարչության կողմից արձանագրված խնդիրները և վերացման ուղիները

Քաղաքաշինության բնագավառի գործունեության վարչական ստուգումներ է իրականացվել ըստ հաստատված ժամանակացույցի բոլոր համայնքներում, արձանագրվել են խախտումներ և կազմվել համապատասխան արձանագրություններ: Տրվել է համապատասխան հանձնարարականներ թերությունները վերացնելու ուղղությամբ:

Համայնքներում իրականացված վարչական ստուգումների ժամանակ արձանագրվել են թերություններ, որոնք բնորոշ են համայնքների մեծամասնության համար, մասնավորապես մարզի 7 համայնքներ ունեն գլխավոր հատակագծեր, իսկ մնացածները չունեն, որի պատճառը համայնքների ֆինանսական միջոցների սղությունն է: Համայնքների միավորման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կազմել խոշորացված համայնքների համակցված գլխավոր հատակագծեր: Համայնքներում չի վարվում քաղաքաշինական կադաստր, համայնքները չունեն քաղաքաշինական կանոնադրություն: 2017թ. համեմատությամբ շինարարության

թույլտվությունների, ավարտական ակտերի ձևակերպման և շահագրգիռ մարմիններին ներկայացման գործընթացը բարելավվել է 2018թ.:

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մարզում գործում է 62 ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղի: Այդ երթուղիների սպասարկումը մրցութային կարգով իրականացնում են 14 մասնավոր կազմակերպություններ:

Մարզում գործում է «Հարավկովկասյան երկաթուղու» Գյումրի-Այրում հատվածը՝ 12 կայարանով:

Ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացվում են Վանաձոր, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում: Ուղևորահոսքի սակավության պատճառով մարզի հինգ փոքր համայնքներից՝ Դաշտադեմ, Հովնանաձոր, Կաճաճկուտ, Ծաղկաշատ և Ձորագյուղ, կանոնավոր ուղևորափոխադրումներ չեն իրականացվում: Այդ համայնքներից ուղևորափոխադրումներն իրականացվում են սեփական և տաքսի ավտոմեքենաներով:

Փոխադրողների կողմից նոր ավտոբուսներ և միկրոավտոբուսներ չեն ներկայացվել, քանի որ ուղևորահոսքի նվազման հետևանքով ներմարզային երթուղիներ սպասարկելը տնտեսապես ոչ շահավետ է: Դրան նպաստում է նաև այն, որ տաքսամոտորային փոխադրումները բավականին ազատականացված են և կանոնավոր փոխադրումներ իրականացնողները գտնվում են ոչ մրցակցային պայմաններում:

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի՝ նախատեսվում է մարզի խոշոր քաղաքներից կամ մարզկենտրոնից դեպի Երևան, կամ այլ մարզի խոշոր քաղաքներ և դրա հետ միասին տվյալ խոշոր քաղաքը կամ մարզկենտրոնը իրեն հարող բոլոր բնակավայրերին կապող երթուղիների սպասարկման համար հայտարարել մրցույթներ մեկ փաթեթով: Արդյունքում հնարավոր կլինի ընտրել մեկ փոխադրող, որը կսպասարկի մարզի ինչպես շահութաբեր, այնպես էլ ոչ շահութաբեր երթուղիները ամբողջովին:

2019թ. բացի ընթացիկ աշխատանքներից նախատեսված է կատարել ուսումնասիրություններ՝ բնակչության սպասարկման որակը բարձրացնելու և երթերի կատարման ժամանակացույցը ուղևորներին ավելի հարմարավետ դարձնելու համար, ինչպես նաև բացատրական աշխատանք տանել վարորդների շրջանում պատշաճ մակարդակի սպասարկում ապահովելու նպատակով:

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 891.1կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- միջպետական 218.9 կմ
- հանրապետական 264.3 կմ
- մարզային (տեղական) 407.9 կմ

Մարզում կան

- կամուրջներ և կամրջային անցումներ 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ 5 հատ

Մարզային (տեղական) նշանակության ճանապարհների 407.9 կմ-ից վիճակի լավ գնահատական ունեցող ճանապարհների երկարությունը կազմում է 48.0 կմ; բավարար՝ 124.1 կմ, որից ասֆալտապատ ծածկույթով – 71.2 կմ, կոպճային ծածկույթով – 52.9 կմ; վատ վիճակի՝ 235.8 կմ, որից ասֆալտապատ ծածկույթով – 45.0 կմ, կոպճային ծածկույթով – 86.6 կմ, բնահողից ծածկույթով – 104.2 կմ:

Նշված վատ վիճակի ճանապարհներն սպասարկում են մոտավորապես 40 բնակավայր, որոնցից հրատապ լուծման ենթակա են հետևյալ ճանապարհները.

S-5-26 (Հաղպատի պատմական հուշարձան-Ծաղկաշատ) - 9.0 կմ հատվածը՝ արժեքը – մոտ 800.0 մլն դրամ,

S-5-24 (Ստեփանավան-Կաթնաղբյուր) - 10.0 կմ հատվածը՝ արժեքը - մոտ 900.0 մլն դրամ,

S-5-7 Շիրականուտ-Լեռնավան – 9.3 կմ հատվածը՝ արժեքը - մոտ 850.0 մլն դրամ,

S-5-46 Ալավերդի-Ակներ - 12 կմ հատվածը՝ արժեքը - մոտ 1000.0 մլն դրամ,

S-5-34 Խնկոյան-Լուսաղբյուր - 3 կմ հատվածը՝ արժեքը - մոտ 150.0 մլն դրամ,

Հրատապ լուծման ենթակա հանրապետական նշանակության ճանապարհներից են. Հ-34 (ՄՅ - Ստեփանավան - Պրիվոլնոյե- Վրաստանի սահման) ճանապարհի Ուռուտ-Պրիվոլնոյե-Վրաստանի սահման հատվածը, որի երկարությունը կազմում է 14.0 կմ, Հ-70՝ Մ6-Մարց-Աթան, երկարությունը՝ 29.0 կմ:

2018թ-ի տարեսկզբին ծրագրավորված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է **8.33 մլրդ դրամ**, փաստացի կատարվել է **8.51 մլրդ դրամի** աշխատանք (հավելված 1):

Ճանապարհաշինության ոլորտում բոլոր

Հ/հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2018թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2018թ. (մլն դրամ)	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	8331.616	8508.717	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	1092.828	703.457	
1	ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	829.0	479.5	
2	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	104.53	104.53	
3	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	541.70	355.20	
4	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	6,575.70	7,328.90	
5	ՍՈՒԲՎԵՆՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԽՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	280.69	240.59	

Ֆինանսական աղբյուրներով իրականացված աշխատանքներ

Հավելված 1

Հ/ h	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2018թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2018թ. (մլն դրամ)	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	8,331.62	8,508.72	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	1092.828	703.457	
I	ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	829.0	479.5	
1	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Սոս Սարգսյան-Միլիոնի փողոցի հիմնանորոգում	185.0	144.5	
2	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Գ.Նժդեհի փողոցի հիմնանորոգում	196.0	89.0	
3	ՀՀ Լոռու մարզի Ավալերդի քաղաքի Հ.Թումանյանի փողոցի հիմնանորոգում	298.0	228.0	
4	S-5-25, Մ-3-Լեռնապատ 4.2 կմ երկարությամբ ավտոճանապարհի ասֆալտապատում	150.0	18.0	Մրցույթը կայացել է, Կապալառուկա զմակերպություն նն է «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ; Ծրագիրը փոխանցիկ է; Ավարտը նախատեսված է 2019թ-ին:
II	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԴԵՏԱՐԱՆ	104.53	104.53	
1	Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	104.528	104.528	
III	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	541.70	355.20	
1	Ներհամայնքային ճանապարհների նորոգում	541.70	355.20	
IV	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ	6575.7	7328.9	
1	Մ-6, Վանաձոր - Ավալերդի - Վրաստանի սահման, միջպետական ավտոճանապարհի կմ0+000 - կմ38+450 հատվածի վերականգնման և բարելավման աշխատանքներ - 1-ին փուլ	6575.70	7328.90	
V	ՍՈՒՐՎԵՆՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐ	280.7	240.6	
1	Պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիոն ծրագրերով իրականացված ճանապարհաշինական աշխատանքներ	159.3	119.429	
2	Կապիտալ սուբվենցիաներով իրականացվող ծրագրերին համայնքների համաֆինանսավորում	121.39	121.16	

**ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության
պատվերով իրականացված ճանապարհաշինական աշխատանքներ**

1. Ավարտվել են ՄՃ՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի առաջին փուլով նախատեսված հիմնանորոգման աշխատանքները, որոնց պայմանագրային ընդհանուր արժեքը կազմում է **15.45 մլրդ դրամ**: Առաջին փուլով վերականգնված հատվածի ընդհանուր երկարությունը կազմում է 38.45 կմ, կապալառու կազմակերպություններն են՝ «Արարատի» ՃՇՇ, «Ճանապարհ» ՍՊԸ և «Կապավոր» ՍՊԸ: Այդ ճանապարհահատվածում գտնվող 12 կամուրջներից երեքը վերակառուցվել են, իսկ ինը կամուրջները՝ հիմնանորոգվել: Ճանապարհի երեք թունելներում՝ իրականացվել են վերակառուցման, բետոնապատման, ինչպես նաև հատակի իջեցման, մայթերի, անվտանգության խորշերի կառուցման, ճակատային մասերի վերակառուցման, բետոնե պատերի հիմքերի լրացման, ասֆալտապատման, ներքին հարդարման, լուսավորության, անվտանգության բազրիքների տեղադրման և այլ աշխատանքներ: Թունելները բերվել են ժամանակակից տեսքի, ապահովվել են ստանդարտներով պահանջվող գաբարիտային չափերը:

2. Ներկայումս ընթացքի մեջ են ՄՃ՝ Վանաձոր - Ալավերդի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի երկրորդ փուլով նախատեսված հիմնանորոգման աշխատանքները, որոնց պայմանագրային ընդհանուր արժեքը կազմում է **12.46 մլրդ դրամ**: Կապալառու կազմակերպություններն են. I չափաբաժին - «Հորիզոն-95» ՍՊԸ, արժեքը՝ 4.88 մլրդ դրամ, երկարությունը՝ 9.69 կմ, II չափաբաժին - «ԱԱԲ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ, արժեքը՝ 2.86 մլրդ դրամ, երկարությունը՝ 14.16 կմ, III չափաբաժին - «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղ իտալական կազմակերպությունը, արժեքը՝ 4.72 մլրդ դրամ, երկարությունը՝ 27,891 կմ: Աշխատանքներն սկսված են. ներկայումս ընթանում են ճանապարհի լայնացման, ճանապարհային պաստառի պրոֆիլի բերման, ծածկույթի մասնակի քանդման և հողային աշխատանքներ: Երկրորդ փուլով նախատեսվող ճանապարհահատվածի երկարությունը կազմում է 51.74 կմ, որից 32.95 կմ՝ Լոռու մարզում: Ավարտը նախատեսված է 2020թ-ի աշնանը:

3. Սրբեկանավան քաղաքի Սոս Սարգսյան-Միլիոնի փողոցի հիմնանորոգում. Պայմանագրային արժեքը՝ 144.5 մլն դրամ: Աշխատանքներն ավարտված են:

4. Սրբեկանավան քաղաքի Գ.Նժդեհի փողոցի հիմնանորոգում. Պայմանագրային արժեքը՝ 114.7 մլն դրամ: 2018թ-ին կատարված աշխատանքների ծավալը կազմել է 89.0 մլն դրամ: Կատարվել են երթևեկելի մասի ասֆալտապատման և բազալտե եզրաքարերի տեղադրման աշխատանքները, ընթացքի մեջ են մայթերի կառուցման աշխատանքները: Ծրագիրը փոխանցիկ է. ավարտը նախատեսված է 2019թ-ին:

5. Ալավերդի քաղաքի Հ.Թումանյանի փողոցի հիմնանորոգում. Պայմանագրային արժեքը՝ 228.0 մլն դրամ: Աշխատանքներն ավարտված են:

6. Տ-5-25՝ Մ-3-Լեռնապար 4.2 կմ երկարությամբ ավտոճանապարհի ասֆալտապատում. Պայմանագրային արժեքը՝ 150.0 մլն դրամ: 2018թ-ին կատարված աշխատանքների ծավալը կազմել է 18.0 մլն դրամ: Կապալառու կազմակերպությունն է «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ: Ծրագիրը փոխանցիկ է: Ավարտը նախատեսված է 2019թ-ի վերջին:

Մարզպետարանին հատկացված միջոցներով իրականացվել են մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանում և շահագործում՝ **104.528 մլն դրամ**

ընդհանուր արժեքով, որից ընթացիկ ձմեռային պահպանման համար՝ 40.496 մլն դրամ, ընթացիկ ամառային պահպանման համար՝ 63.582 մլն դրամ:

Համայնքներին տրամադրվող սուբվենցիոն ծրագրերով իրականացված աշխատանքներ

1. Վանաձոր համայնքի փողոցների կապիտալ նորոգում՝ 145.4մլն դրամ: Աշխատանքներում արձանագրվել են թերություններ, ինչի պարճառով կապալառու կազմակերպություններին չի վճարվել 52.8մլն դրամ: Վճարումները կիրականացվեն 2019թ-ին թերությունները վերացնելու և ծրագիրն ամբողջությամբ իրականացնելու դեպքում:
2. Լեռնապատ համայնքի 11-րդ փողոցի ասֆալտապատում՝ 8.754մլն դրամ (աշխատանքներն ավարտված են);
3. Սպիտակ համայնքի Այգեստան թաղամասի Ս.Ավետիսյան 17, 19 և 19ա շենքերի բակերի բարեկարգում, Այգեստան փողոցի 2-րդ նրբանցքի ասֆալտապատում՝ 28.861մլն դրամ (աշխատանքներն ավարտված են);
4. Լեռնավան համայնքի կենտրոնական փողոցի վերականգնում և ասֆալտապատում՝ 15.0մլն դրամ (աշխատանքներն ավարտված են);
5. ՀՀ Լոռու մարզի Շենավան համայնքի ճանապարհների նորոգում՝ 2.865մլն դրամ (աշխատանքներն ավարտված են);
6. ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի գրունտային ճանապարհների նորոգում՝ 5.8մլն դրամ (աշխատանքներն ավարտված են);
7. ՀՀ Լոռու մարզի Շիրակամուր համայնքի ներհամայնքային ճանապարհների նորոգում՝ 5.88մլն դրամ (աշխատանքներն ավարտված են):
8. Օձուն համայնքի Օձուն բնակավայրի 4-րդ փողոցի մասնակի վերանորոգում և ասֆալտապատում՝ 10.6մլն դրամ: Աշխատանքներում արձանագրվել են թերություններ, որոնք հանձնարարվել է վերացնել 2019թ-ին:

2019թ. նախատեսվում է կազմել տեղական (մարզային) նշանակության ճանապարհների վիճակի վերաբերյալ տեղեկատվական բազա, որն իր մեջ կներառի ճանապարհների իրավիճակային նկարագիր և մարզի հրատապ լուծում պահանջող ճանապարհահատվածների հիմնանորոգման մոտավոր հաշվարկ՝ ֆինանսավորման աղբյուրների և դոնորների առկայության դեպքում՝ վերջիններիս առաջարկ տրամադրելու համար:

**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Բնակֆոնդ

Բնակչության կենսապահովման կարևոր բնագավառ է հանդիսանում բնակարանային եւ ենթակառուցվածքների գործունեության ոլորտը, ինչը համակարգում է մարզի բազմաբնակարան շենքերի կառավարումը և կոմունալ գործունեությունը, ապահովում կապը բնակչության, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև:

ՀՀ Լոռու մարզում առկա է 1805 բազմաբնակարան շենք, դրանց կառավարումն իրականացվում է համատիրությունների եւ համայնքների ղեկավարների միջոցով:

Մարզում առկա՝

- ✓ անավարտ մնացած, տարբեր աստիճանի պատրաստվածության բնակելի շենքերը 288-ն են
- ✓ III կարգի վնասվածության եւ ամրացման ենթակա բազմաբնակարան շենքերը – 169
- ✓ տանիքի վերանորոգման կարիք ունի 459 բազմաբնակարան շենք
- ✓ գործող համատիրությունները մարզում 46-են (45 Վանաձորում, 1-ը Գուգարքում)
- ✓ Մարզում առկա 185 վերելակներից 56-ն անսարք են (129 սարքին վերելակները արդեն իսկ և բարոյապես և ֆիզիկապես մաշված են ու վտանգավոր)

Մարզի բնակարանային ֆոնդի կառավարման եւ շահագործման ոլորտում արձանագրված աշխատանքները, թերությունները եւ դրանց վերացմանն ուղղված միջոցառումները:

Լոռու մարզկենտրոն Վանաձորում առկա 45 համատիրությունները սպասարկում են 877 բազմաբնակարան շենք:

Մարզի բնակիչներից ստացվել են դիմում-բողոքներ, որոնք հիմնականում վերաբերվում են աղբահանությանը, շենքի սանիտարական մաքրմանը, բազմաբնակարան շենքերում ջրամատակարարման և կոյուղու համակարգերի մաշվածությանը, ինչպես նաև համասեփականության այլ տեսակներին առնչվող առկա խնդիրներին (տանիք, նկուղ, աստիճանավանդակ, շքամուտքի պատուհան, դուռ): Դրանք պարբերաբար քննարկվում են քաղաքապետարանների համապատասխան բաժինների, համատիրությունների և բնակարանային տնտեսության բաժինների հետ: Խնդիրների կարգավորման դժվարությունը կայանում է նրանում, որ բնակչության կողմից հավաքագրված վարձավճարների ցածր մակարդակը թույլ չի տալիս իրականացնել մեծ ծավալի վերանորոգման աշխատանքներ:

Բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում առկա խնդիրների կարգավորումը կնպաստի բնակարանային ֆոնդի պատշաճ շահագործմանն ու պահպանմանը, բնակչության կենցաղի, բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Ջրամատակարարում և ջրահեռացում

«Վեոլիա Ջուր» ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի միասնական օպերատորը և սպասարկում է մարզի 40 քաղաքային և գյուղական բնակավայր:

2018թ. ընթացքում ընկերության սպասարկման տարածքի մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարավերականգնողական, ջրագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ: Մի շարք բնակավայրերում ջրատար խողովակների վթարված հատվածների փոխարինման շնորհիվ խնայվել է ջրի զգալի քանակ և բարձրացել ջրի ճնշումը: Որոշ համայնքներում կառուցվել են նոր ջրագծեր, ինչի հետևանքով վերացվել են հաճախակի կրկնվող վթարները:

Մարզի հիմնական մասը մատակարարող «Նովուսելցովո» ջրատարի որոշ հատվածներում իրականացվել է բարձրադիր ու ցածրադիր ջրաղբյուրների վերաբաշխում: Իրականացված աշխատանքների շնորհիվ բարձրացել է ջրատար համակարգերի հուսալիության աստիճանը, ինչպես նաև նվազել է վթարների առաջացման հավանականությունը:

2018թվականին կառուցվել է 543,3 գծմ ջրագիծ, 55 գծմ կոյուղագիծ, 4766 գծմ խողովակաշար պիտանի չլինելու պատճառով հանվել է շահագործումից, տեղադրվել է 9 դիտահոր, 4 դիտահորի ծածկ: Կատարվել են 35 ջրաչափի փոխարինման եւ տեղադրման աշխատանքներ:

Մարզի Տաշիր, Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում նույնպես իրականացվել են համայնքների այլընտրանքային ջրամատակարարման ապահովման, պոմպակայանների արդյունավետության բարձրացման, ջրամատակարարման ցանցի բարեկարգման, կապտաժների վերակառուցման եւ այլ աշխատանքներ:

Ներկայումս մարզում առկա է սեփական ջրամատակարարման ցանցը տնօրինող մոտ 60 գյուղական բնակավայր (4 -ը սպասարկվում է «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության հետ համատեղ):

Նշված համայնքները հիմնականում խմելու ջրի պաշարները ստանում են սարերի բնական աղբյուրներից: Վերանորոգված ջրագծերի դեպքում ջրի այդ քանակությունը կբավարարեր տեղի բնակչության խմելու ջրի ողջ պաշարը: Սակայն 60-70-ական թվականների արդեն իսկ քայքայված ջրագծերը գտնվում են անմխիթար վիճակում եւ ջրի մեծ կորուստները դառնում են անխուսափելի: Նույն վիճակում են նաեւ ջրամատակարարման ներքին ցանցերը: Որոշ համայնքներ, ընդհանրապես զրկված լինելով ջրամատակարարման համակարգից, օգտվում են գյուղամիջյան աղբյուրներից, սեփական բակերում ունեցած ջրհորներից եւ գետերի ջրերից, հետեւաբար որակական առումով խմելու ջրի պահանջները երբեմն (հատկապես զարնան վարարումների ժամանակ) չեն համապատասխանում պահանջվող նորմերին:

Չնայած նշված համայնքները սեփական բյուջեի շրջանակներում, ինչու չէ, նաև համայնքի բնակիչների ուժերով իրականացնում են վերանորոգման աշխատանքներ, մեր կողմից նույնպես, կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնախնդիր ունեցող համայնքներն առանձնացվում և ներկայացվում են որևէ ծրագրում ընդգրկելու համար:

2018թվականին ջրամատակարարման բնագավառում իրականացվել են 116.8 մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝

- ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ –ի կողմից Մեծ եւ Փոքր Այրում համայնքներում իրականացվել են խմելու ջրամատակարարման եւ ջրահեռացման բարելավմանն ուղղված 46,0մլն դրամի աշխատանքներ:

- Մեկնարկել և ավարտին է հասցվել խմելու ջրամատակարարման ներքին ցանցի վերանորոգմանն ուղղված «Համայնքներին մաքուր խմելու ջրի մատակարարում» ծրագիրը Վերջին Օրերի Սրբեր Բարեգործական Կորպորացիայի կողմից:

Մարզի Արջուտ, Կաթնաջուր, Գյուլագարակ (Պուշկինո բնակավայր), Լոռի Բերդ (Հովնանաձոր բնակավայր) համայնքներում ծրագրով նախատեսված 30,5մլն դրամ գումարի աշխատանքներն ավատված են:

- Համայնքների սեփական բյուջեներով ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում իրականացված աշխատանքներ 40.3մլն.դրամ

Աղբահանություն

Մարզում համակարգված աղբահանություն իրականացվում է հիմնականում քաղաքային համայնքներում: Գյուղական համայնքներում հատուկ աղբամաններ չեն նախատեսվում, աղբահանությունը կատարվում է լոկալ եղանակով, չկան պահանջվող նորմերին

համապատասխանող աղբավայրեր, չկան նաեւ աղբավայրերից կեղտաջրերի ֆիլտրացման համակարգեր (բացառությամբ Ալավերդի քաղաքի):

Աղբահանության գործընթացը պատշաճ մակարդակի հասցնելու նպատակով նախատեսում ենք պարբերական այցեր համայնքներ՝ համայնքների ղեկավարների հետ քննարկումներ աղբահանության առավել արդյունավետ տարբերակներ գտնելու համար:

ՀՀ Լոռու մարզում գույքագրված է 348 աղբավայր, որից 341-ը փակված է:

2018 թվականին նախատեսվել և իրականացվել է 2 գործող աղբավայրի փակման աշխատանքներ:

«Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում հունվար-ապրիլ ամիսներին բնակչության կողմից էլեկտրոնային քարտեզում տեղադրվել է ոչ սահմանված վայրում աղբաթափման և աղբահանման ուշացման թվով 11 լուսանկար՝ բոլորը Վանաձոր քաղաքում: Նշված թերությունները վերացնելու համար մեր կողմից եղել է արագ արձագանք և համայնքի համապատասխան ոլորտը սպասարկող մասնագետների հետ տեղերում ուսումնասիրվել և վերացվել են թերությունները: Էլեկտրոնային քարտեզում տեղադրվող լուսանկարների նկատմամբ վերոնշյալ ժամանակահատվածում իրականացվել է ամենօրյա հսկողություն:

Ի կատարումն ՀՀ կառավարության 14.12.2017թ. նիստի արձանագրության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 20.12.2017թ. հանձնարարականի, Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության աշխատակիցների կողմից 2018 թվականի հունվար ամսին ուսումնասիրվել են Մ8 Վանաձոր-Դիլիջան, Մ3 ճանապարհի Զրաշեն-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման, Հ33 Ստեփանավան-Յաղդան-Այգեհատ, Հ35 ճանապարհի Այգեհատ-Օձուն-Մ6 և Մ6 ճանապարհի Ալավերդի-Քարկոփ հատվածները: Նշված հատվածներում ինչպես ճանապարհին հարող այնպես էլ վերը նշված ճանապարհներին հարակից համայնքների վարչական տարածքներում արձանագրված կենցաղային և շինարարական աղբի կուտակումները վերացնելու համար մեր կողմից գրություններ է ուղարկվել համապատասխան համայնքների ղեկավարներին և ճանապարհաշինական ձեռնարկություններին, հանձնարարվել է վերացնել նշված աղբակույտերը, արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն եւ նշված աշխատանքները կատարել ողջ տարվա ընթացքում:

Աշխատանքներն իրականացվել են պատշաճ ձևով՝ համապատասխան համայնքների և տվյալ ճանապարհները սպասարկող ճանապարհաշինական ձեռնարկությունների կողմից: Համայնքների կողմից ՀՀ Լոռու մարզպետարան են ներկայացվել նաև մաքրված տարածքների լուսանկարները:

Գազամատակարարում

Լոռու մարզի 56 համայնքները՝ 7 քաղաքային եւ 49 գյուղական, բաշխված են 5 տարածաշրջանների մեջ: Առ 01.01.2019թ. դրությամբ մարզում առկա է գազաֆիկացված 50 (89.3%) եւ չգազաֆիկացված 6(10.7%) համայնք: Գազաֆիկացված չէ նաև 26 բնակավայր:

Առ 01.01.2019թ. դրությամբ Լոռու ԳԳ մասնաճյուղի սպասարկման տարածքի գազամատակարարումը վերականգնված և գազաֆիկացված բնակավայրերում առկա են թվով 65743 բաժանորդներ, 30615 բնակարաններ և 35128 առանձնատներ, որից թվով 31087 Վանաձոր քաղաքում: 2018թ. ընթացքում բաժանորդների թվաքանակը աճել է 566-ով, որից 271 բնակարաններ և 295 առանձնատներ:

2018 թվականին մարզում իրականացվել են 241.8 մլն. դրամ ընդհանուր արժեքով գազամատակարարման աշխատանքներ: 2017թ.-ի 167.0 մլն դրամի դիմաց աճը կազմել է 44.8%:

2018թ-ին իրականացված աշխատանքներ.

- մասնաճյուղի սպասարկման տարածքի մի շարք համայնքներում միջին և ցածր ճնշման վերգետնյա և ստորգետնյա գազատարերի վերատեղադրում և վթարային հատվածների կապիտալ նորոգում.
- մասնաճյուղի սպասարկման տարածքի մի շարք համայնքներում ԳԿԿ-ների (գազակազավորիչ կետեր) և ՊԳԿԿ-ների (պահարանային գազակազավորիչ կետեր) կապիտալ նորոգում
- Բնական գազի կենցաղային հաշվիչների, պաշտպանիչ արկղերի, վթարային անջատիչ կափույրների և ազդանշանային սարքերի տեղադրում.
- **Ճապոնիայի դեսպանատան 93 000 ԱՄՆ** դոլարին համարժեք դրամ՝ **46.5** մլն դրամ, ֆինանսավորմամբ իրականացվել են ՀՀ Լոռու մարզի Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի գազաֆիկացման(1.3 կմ միջին ճնշման գազատար), ջեռուցման համակարգի կառուցման և արևային մարտկոցների տեղադրման աշխատանքներ:

ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի էլեկտրաէներգիայի մատակարարը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ «Հյուսիսային» մասնաճյուղն է, որը հանդիսանում է միջանկյալ օղակ արտադրող կայանների և բաշխիչ ցանցերի միջև ՀՀ հյուսիսային տարածքում: «Հյուսիսային» մասնաճյուղը հանդիսանում է նաև կարևոր օղակ, որի միջոցով կատարվում է էլեկտրաէներգիայի փոխանցումը Վրաստանի Հանրապետություն:

2018 թվականին մարզում իրականացվել են էլեկտրամատակարարման աշխատանքներ՝ 3,186.8 մլն դրամ ընդհանուր արժեքով: 2017թ.-ի 2,988.5 մլն դրամի դիմաց աճը կազմել է 6.6%:

2018թ.-ի ընթացքում «Հյուսիսային» մասնաճյուղի կողմից «Լոռի-1» հողմակայանում իրականացվել են թիվ 2 և թիվ 3 վնասված գեներատորներե վերանորոգման ու սպասարկման աշխատանքներ՝ 7.1 մլն. դրամ և «Գուգարք-1» 220 ԿՎ ՕԳ-ի թվով 135 հենարանների ներկում՝ 128.5 մլն. դրամ:

2018թ-ին վարկային միջոցներով իրականացվել են «Վանաձոր-1» 110/10/6 կՎ ենթակայանի վերակառուցում՝ 1,747.3 մլն դրամ և «Լալվար-Նոյեմբերյան» 110կվ ՕԳ կառուցում՝ 276.4 մլն դրամ:

ՀՀ Լոռու մարզում էլեկտրաէներգիայի մատակարարումն իրականացնում է «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղը, որի սպասարկման տարածքի բնակավայրերում առ 01.01.2019թ. դրությամբ առկա է շուրջ **96 715** բաժանորդ:

2018թ.-ի ընթացքում «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից մարզում իրացվել է 175.9 մլն. կՎտժ էլեկտրաէներգիա, որից 112.1 մլն. կՎտժ-ը բնակչությանը, ինչի համար անհրաժեշտ էր գանձել 7.382 մլդ դրամ, փաստացի գանձվել է 7.413 մլդ դրամ, (100.4%):

«ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից կատարվել է շուրջ **941.9** մլն դրամի ներդրում.

- Նոր բաժանորդների միացման աշխատանքներ
- Տրանսֆորմատորային ենթակայանների տանիքների նորոգման և ենթակայանների հիմնանորոգման աշխատանքներ

- Օդային և մալուխային գծերի հիմնանորոգման աշխատանքներ

Թվով 19 համայնքապետարանների ֆինանսավորմամբ իրականացվել են փողոցային լուսավորության համակարգերի կառուցման և բարելավման աշխատանքներ՝ **85.6** մլն դրամի:

ԿԱՊ

ՀՀ Լոռու մարզում բջջային հեռախոսակապի ծառայություններ են մատուցում երեք օպերատորներ՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ և «ՅՈՒԲՈՒՄ» ՍՊԸ-ները: «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ Լոռու մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ֆիքսված հեռախոսակապի պահանջարկը բավարարված է՝ կայանների ընդհանուր ունակությունը կազմում է 47,680 հեռախոսահամար, ներկայում բաժանորդների քանակը՝ 28,000 (CDMA ռադիոկապի բազային կայաններ տեղադրված են Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի քաղաքներում, ընդհանուր ունակությունը՝ 23,100 հեռախոսահամար, բաժանորդների քանակը՝ 3,400):

«ՎԵՈՆ Արմենիա» ընկերության կողմից 2018 թվականին ՀՀ Լոռու մարզում իրականացվել են.

- Վանաձոր, Ստեփանավան, և Սպիտակ համայնքներում իրականացվել են օպտիկամանրաթելային մալուխի անցկացման աշխատանքներ:
- Վանաձոր և Սպիտակ համայնքներում իրականացվել են MSAN սարքավորումների տեղադրում՝ ինտերնետ կապի որակի բարձրացման նպատակով:
- Ստեփանավան համայնքում իրականացվել են գործող բաժանորդային հեռախոսագծերի վերամիացում VDSL նոր ցանցին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծություն

ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական հողատեսքերը 2018 թվականի **հուլիսի 1-ի** դրությամբ

	(հեկտար)					
	Գյուղ. նշանակության հողեր, ընդամենը	Վարելահողեր	Բազմամյա տնկարկներ	Խոտհարքներ	Արոտներ	Այլ հողատեսքեր
ՀՀ Լոռու մարզ	250903	42037.4	393.7	35059.6	145634.5	27777.8

Մարզում. ցանքատարածությունները կազմել են՝

2018թ.- 23.662 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 56.3 %-ը

Լոռու մարզում 2017-2018թթ. կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի և բերքահավաքի համեմատականները ըստ ԱՎԾ-ի

n/h	Մշակաբույսը	2017թ.		2018թ.		Համեմատական 2017թ-ը 2018թ-ի նկատմամբ			
		ցանք հա	բերքը տ	ցանքը հա	բերքը տ	ցանքը		բերքը	
						հա	%	տ	%
1	Ընդամենը հացահատիկ և հատիկալընդեղ են	12174	33761	11539	36293		-5.2	+2478	+7.3
2	Կարտոֆիլ	4189	73679	3595	52429	-594	-14.1	-21250	-28.8
3	Բանջարաբուս տանային մշակաբույսեր	1608	27781	1345	18168	-263	-16.3	-9613	-34.6
4	Կուտակվել է խոտ		112692		105072			-7620	-6.7
5	Կերային մշակաբույսեր	8957	9266	7112	7321	-1845	-20.5	-1945	-20.9
6	Տեխնիկական մշակաբույսեր	179	386	84.2	150	-94.8	-52.9	-236	-61.1
	Ընդամենը ցանքեր	27110		23662		-3448	-12.7		
7	Պտուղ և հատապտուղ	2314	7919	2310	6403	-4	-0.1	-1516	-19.1

Տարերային աղետների հետևանքով պատճառված վնասները ասնակի փոխհատուցելու նպատակով ՀՀ կառավարությունը 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 1405-Ն որոշմամբ մարզի Արջուտ, Կաթնաջուր, Շամլուղ, Լոռի Բերդ (Սվերդլով, Ուոուտ) համայնքների շուրջ 527 հողօգտագործողների հատկացրել է 8.368.337 ՀՀ դրամ:

ՀՀ հողօգտագործողներին 2018 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ֆոսֆորական, կալիումական պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերի շրջանակներում մարզի 55 համայնքների՝ 1915 շահառուի հատկացվել է՝ 43 տոննա ֆոսֆորական, 24.45 տոննա կալիումական պարարտանյութ և 338.7 հազար լիտր դիզելային վառելանյութ՝ 138 մլն.200 հազ. դրամ արժեքով:

Տրամադրվել է նաև 1700 տոննա ազոտական պարարտանյութ 238 մլն դրամ արժեքով:

Հայաստանի Հանրապետությունում գարնանացան ցորենի, հնդկացորենի, յլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման 2018 թվականի ծրագրի շրջանակներում մարզի 32 համայնքների՝ 690 հողօգտագործողների պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով հատկացվել է 89.489 տոննա գարնանացան գարու, 0.466 տոննա եգիպտացորենի, 2.813 տ առվույտի, 11.410 տոննա կորնգանի և 6.606 տոննա գարնանացան ցորենի սերմացուներ՝ ընդհանուր առմամբ 22 մլն դրամ արժեքով:

«Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում 2018 թվականի գարնանը և աշնանը մարզին անհատույց հատկացվել է 806,08 կգ «Ռոդիֆակում Ս» տեսակի մկնասպան միջոց, որը հողօգտագործողների միջոցով պայքար է իրականացվել 10076 հազար հեկտար վարելահողերում և բազմամյա տնկարկներում:

Նախապատրաստվել և հոկտեմբերի 20-ին անց է կացվել «Բերքի տոն 2018» մարզային ավանդական տոնակատարությունը, որին մասնակցել են 22 համայնքներ, 15 ձեռնարկություններ և Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի պատվիրակությունը:

Անասնաբուծություն և գյուղ. ծրագրերի իրականացում

Լոռու մարզպետի 11.12.2017թ. թիվ 298 կարգադրության համաձայն վերահսկվել է Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2018թ. հունվարի 1-18-ը անցկացված անասնազխաքանակի հաշվառման գործընթացը:

Լոռու մարզի 2019թ-ի անասնազխաքանակի համեմատականը 2018թ-ի նկատմամբ (հունվարի 1-ի դրությամբ) (ըստ ԱՎԾ-ի)

h/h	Անվանում	2019թ. գլուխ	2018թ. գլուխ	Համեմատական	
				գլուխ	%
1	Խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր	67 316 33 337	69 064 33 971	-1748 -634	2.5 1.9
2	Մանր եղջ. կենդ. Որից՝ ոչխարներ այծեր	25 879 24 377 1 502	26 877 25 184 1 693	-998 -807 -191	3.7 3.2 11.2
3	Խոզեր	15 078	12 423	+2 655	17.6
4	Թռչուններ	302 308	326 696	-24 388	7.5
5	Մեղվաընտանիք	23 540	24 920	-1380	5.5
6	Ձիեր	2 369	2 240	+129	5.4
7	Գոմեշներ	12	0		

Լոռու մարզի 2018թ.անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների
համեմատականը 2017թ.նկատմամբ

Անվանում	Չափի միավոր	2018թ.	2017թ.	Համեմատական	
				քանակ	%
Կաթ	տոննա	84900	95 000	-10 100	10.6
Միս	տոննա	20 800	22 500	-1700	7.5
Ձու	մլն. հատ	51.0	50.0	+1.0	2.0

ՄԱԿ-ի ՄԶ/ԳԷՀ փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Լեռնանացք, Սարամեջ, Սարահարթ համայնքներում հիմնվել է 2.5 հա ինտենսիվ այգի: Տնկիների ձեռք բերման գումարը կազմել 7 մլն 950 հազ. դրամ:

- Սպիտակ համայնքում «ԱՎԳԱ» ՍՊԸ-ի կողմից սպանդանոց կառուցելու համար ձեռք է բերվել 12 մլն. դրամ արժեքով արտադրական տարածք

- Ագարակ բնակավայրում «Արմեն Գևորգյան» Ա.Ձ-ի կողմից սպանդանոց կառուցելու համար ձեռք է բերվել 700 հազ. դրամ արժեքով արտադրական տարածք

- Գուգարք համայնքում սառնարանային տնտեսություն հիմնելու նպատակով, կատարվել է 22 մլն. դրամի ներդրում

• Սարալանջ համայնքում մասնավոր ներդրմամբ հիմնվել է 500 գլուխ տարողությամբ ոչխարաբուծական տնտեսություն: Ներդրման գումարը կազմել է 50 մլն. դրամ:

• «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում Ջրաշեն և Գոգարան համայնքների «Արոտագտագործման սպառողական կոոպերատիվին» տրամադրվել է 115 մլն. դրամ արժեքով գյուղատնտեսական տեխնիկա և Գոգարան համայնքի ջրախմոցների կառուցման շինարարական աշխատանքների վրա կատարվել է 60 մլն. դրամի ներդրում: Ներդրման ընդհանուր գումարը կազմել է 175 մլն. դրամ:

• «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում Ջրաշեն համայնքի արոտավայրերում ջրախմոցների կառուցման շինարարական աշխատանքների վրա կատարվել է 50 մլն. դրամի ներդրում:

• Տաշիրի տարածաշրջանում գործող «Բոզոյան» ՍՊԸ-ի կողմից կառուցվող խոզաբուծական տնտեսության կառուցման աշխատանքների վրա ներ է դրվել 500 մլն. դրամ:

• Վանաձոր համայնքում «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի կողմից կառուցվող հակակարկտային ցանցերի արտադրամասի կառուցման համար ներ է դրվել 2.25 մլրդ. դրամ:

• Սպիտակ համայնքում հակակարկտային ցանցով ցանցապատվել է 1.5 հա ինտենսիվ այգի

• Օձուն համայնքի Կարմիր Աղեկի բնակավայրում կառուցվել է 2.5 հազար թև տարողությամբ ածան հավերի թռչնաբուծական տնտեսություն: Ներդրման գումարը կազմել է 24 մլն. 250 հազ. դրամ:

• Լոռի Բերդ համայնքի կարիքների համար «Մեքենասարքավորումների ձեռք բերում» ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել թվով 2 տրակտոր և 5 սարքավորում՝ ներ է դրվել 33 մլն. 850 հազ.դրամ, որից 13 մլն 540 հազար դրամը՝ համայնքի միջոցներով, 20 մլն. 310 հազ. դրամը՝ պետական միջոցների սուբսիդավորմամբ:

• Մեծ Պարնի համայնքում կառուցվել է գյուղատնտեսական մշակաբույսերի թափոններից վառելիքի ստացման արտադրամաս (բրիկետների արտադրություն): Ներդրման գումարը կազմել է 10 մլն. դրամ:

«Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս» ծրագրի շրջանակներում.

Ա. Մարզի թվով 7 բնակավայրերում՝ Բովաձոր, Լեջան, Սվերդլով, Ագարակ Կաթնառատ, Բլագոդարնոյե և Կուրթան հիմնվել են համայնքային անասնաբուժական կետեր, որի ներդրման ընդհանուր գումարը կազմել է 2 մլն 400 հազ. դրամ (որից 505.041 դրամը համայնքային ներդրում է և 1.894.959 դրամը ծրագրի ներդրում է):

Բ. Տաշիրի տարածաշրջանի «Լոռվա կաթ» ՍՊԸ և «Վիգեն Գրիգորյան» ԱԶ կաթի վերամշակման արտադրամասերի ծավալների ընդլայնման և արտադրական կարողությունների հզորացման աշխատանքների վրա կատարվել է 19 մլն. 300 հազ.դրամի ներդրում:

Գ. Տաշիր համայնքում բնակվող ֆերմեր Վիգեն Գրիգորյանին պատկանող անասնաշենքի վերանորոգման նպատակով կատարվել է 12 մլն 940 հազ. դրամի ներդրում:

• Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրում հիմնադրվել է 21 հա ինտենսիվ այգիներ: Ներդրման գումարը կազմել է 72 մլն. դրամ:

• Թումանյան համայնքի Քարինջ վարչական տարածքում «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից կաթի մթերման կետի վերանորոգման աշխատանքների և

սարքավորումների ձեռք բերման վրա ներ է դրվել 13 մլն. 278 հազ. դրամ, որից 5 մլն.դրամը՝ տարածքի վերանորոգման, 8 մլն 278 հազ դրամը սարքավորումների ձեռք բերման համար:

- Թումանյան համայնքի Մարց վարչական տարածքում «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից կաթի մթերման կետի վերանորոգման աշխատանքների և սարքավորումների ձեռք բերման վրա ներ է դրվել 16 մլն. 800 հազ. դրամ, որից 8 մլն.դրամը՝ տարածքի վերանորոգման, 8 մլն 800 հազ դրամը սարքավորումների ձեռք բերման համար:

- Մեծավան համայնքի Ձյունաշող բնակավայրում մասնավոր ներդրմամբ կառուցվում է՝ կաթի վերամշակման և սպանդանոցի արտադրամասերով համալրված, 400 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների տարողությամբ անասնաբուծական համալիր: 2018թ. ներդրման գումարը կազմել է 43 մլն. 650 հազ. դրամ, որից 14 մլն 550 հազ. դրամը՝ անասնաշենքի կառուցման, 29 մլն 100 հազ դրամը գյուղ. տեխնիկայի ձեռք բերման վրա:

- 01.04.2017-30.11.2018թընթացքում «ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության» ծրագրի շրջանակներում, մարզի թվով 19 շահառուների կողմից ձեռք է բերվել 20 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից 10-ը տրակտոր: Լիզինգի գումարը կազմել է 123,121,400 դրամ, որից պետության կողմից սուբսիդավորվել է 5,343,738.դրամ:

- Համաձայն ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից ներկայացված հաշվետվության, գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով, 14.09.2017-30.09.2018թ. դրությամբ մարզի տնտեսավարողներին տրամադրվել է 260 միավոր վարկ՝ 1,008,200.000 դրամ գումարով, սուբսիդավորման գումարը կազմել է 22,021,994 դրամ:

- ՀՀ Լոռու մարզում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում իրականացվել է շուրջ 822503 կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառում, որից՝ խոշոր եղջերավոր կենդանիների բրուցելոզ, սիբիրախտ, դաբաղ, լեյկոզ, տուբերկուլյոզ, էմկար, պաստերելյոզ, , հանգուցավոր մաշկաբորբ հիվանդությունների նկատմամբ՝ 611011 միջոցառում, մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ, սիբիրախտ, բրադզոտ հիվանդությունների նկատմամբ՝ 19041 միջոցառում և ձիերի սիբիրախտ հիվանդության նկատմամբ՝ 1527, խոզերի ժանտախտ 36057, թռչունների ժանտախտ 154867 միջոցառում:

- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ծրագրային դասընթացներում հավաստագրված մասնակիցների թիվը կազմում է 86 մարդ, որոնց ներդրումների ուղղություններն են՝ անասնապահություն - 79 մարդ, ջերմոցային տնտեսություն - 2 մարդ, այգեգործություն - 2 մարդ, դաշտավարություն - 3 մարդ:

Ոռոգման համակարգը

Ըստ մարզային հողային հաշվեկշռի մարզի ոռոգելի հողատարածքները կազմում են 9550,3հա, որից փաստացի ոռոգվում է մոտ 2000-3000 հա:

«Լոռի» ԶՕԸ-ի համակարգմամբ 2018 թվականի ընթացքում կատարված հիմնական աշխատանքները

Ոռոգման ջուր մատակարարող «Լոռի» ԶՕԸ-ն գործունեության արդյունքներով 2018թ. ապահովել է 1581 հա հողատարածքների ջրամատակարարումը՝ 2017թ. 1981 հա-ի փոխարեն կամ պակաս՝ 400 հա-ով:

«Լոռի» ԶՕԸ-ի կողմից 2018թ. կատարվել են ոռոգման ցանցերի, ջրանցքների մաքրման, ՀՏԿ-ների և պոմպակայանների նորոգում:

Նշված նմանապաշխատանքների համար մտարվա կտրվածքով պետ. բյուջեով կատարվել է 23 մլն. 997 հազ. դրամի շինաշխատանքներ (նախատեսված է եղել 17 մլն. ՀՀ դրամ):

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային պետական կոմիտեի մասով ՀՀ Լոռու մարզում 2018 թվականին իրականացվել է հետևյալ ծրագրերը (2018թ. ոռոգման համակարգի հիմնանորոգման աշխատանքներն իրականացվում են համաձայն ՀՀ կառավարության 03.05.2018թ. N514-Ն որոշման), ծախսվել է՝ 14148,0 հազ. ՀՀ դրամ

• Նալբանդի մեծ ջրանցքի հիդրոտեխնիկական կառուցվածքների մետաղական հարթ փականների վերանորոգում՝ 1135,8 հազ. դր.,

• Նալբանդի մեծ ջրանցքի հիդրոտեխնիկական կառուցվածքների d=1200մմ ակվեդուկի ելքի մասի բետոնյա հենարանի վերանորոգում և ակվեդուկի ելքի մասի երկարեցում՝ 1514,1 հազ. դր.,

- Ծաթեր համայնքի 3-րդ բաժանարարի հիմնանորոգում՝ 3942,5 հազ. դր.,
- Օձուն համայնքի 5-րդ բաժանարարի հիմնանորոգում՝ 4412,0 հազ. դր.,
- Սպիտակի աջ /ափ պոմպակայանի վերանորոգում՝ 3143,6 հազ. դր.:

Ոռոգման ջրամատակարարման նժառայության դիմաց հավաքագրումների գծով 2018թ. համակարգի ջրտուքը եղել է 1736,1 հազ. խ.մ., հասույթը կազմել է՝ 31992,4 հազ. դրամ, գանձումը՝ շուրջ 29621,7 հազ. դրամ կամ 98%-ը:

«Լոռի» ԶՕԸ-ի կողմից ջրօգտագործողներին տրված ոռոգման ջրերի, հասույթի և վարձավճարների գանձումը

h/h	ԶՕԸ-ի անվանումը	Ոռոգված տարածքը (հա)			Ջրտուքը հազ. խ.մ.	Հասույթը հազ. դրամ	Գանձումը հազ. դրամ	Գանձման մակարդակը %
		Ընդամենը	որից՝					
			մեխանիկական	ինքնահոս				
1	Լոռի	1581	975	606	1736,1	31992,4	29621,7	98

Բնապահպանություն

ՀՀ Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101,205.0 հա, որից անտառածածկ է 85,799.6 հա-ը: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%-ը: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Մարզի անտառ կազմող հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխինևսոճին, իսկ ոչ հիմնական տեսակներ են համարվում լորենին, կեչին, թեղին, հացենին:

Մարզի անտառների կառավարումն իրականացվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 7 անտառտնտեսությունների կողմից՝ Գուգարքի, Եղեգնուտի, Լավարի, Ջիլիզայի, Դսեղի, Ստեփանավանի և Տաշիրի:


2018թ. ընթացքում պլանային և այլ հատումները կազմել են 10 504մ³:

2018թ. ընթացքում մթերվել է 12 738մ³ թափուկ վառելափայտ:

Լոռու մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում 2018թ. ընթացքում հայտնաբերված ապօրինի հատումները կազմել են 1588 ծառ – 1751մ³ ընդհանուր ծավալով:

Անվանումը	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Օրինական հատումներ (մ ³)	12370	14215	11704	10704	11282	10826	14598	10504
Թափուկ (մ ³)	2435	5147	5727	8588	10954	9910	13167	12738
Ապօրինի հատումներ (մ ³)	219	174	105	93	219	332	697	1751

Ծառահատումներ



ՀՀ Ոստիկանության մարզային վարչության հետ պարբերաբար ամփոփվել է մարզի տարածքում ապօրինի ծառահատումների, փայտանյութի անօրինական տեղաշարժի և օրինախախտումների վերաբերյալ տվյալները.

Անվանումը	Չափման միավոր	2016թ.	2017թ.	2018թ.
Ստուգայցների թիվը	հատ	741	1186	1645
Ապօրինի անտառահատումների, փայտանյութի տեղափոխման և իրացման դեպքերի թիվը	հատ	63	222	233
Հայտնաբերված փայտանյութի քանակը	մ ³	321	1158	764
Հարուցված քրեական գործերի թիվը	հատ	10	46	56
Վարչական պատասխանատվության ենթարկվածների թիվը	հատ	30	41	73

2018թ. ընթացքում Ոստիկանության Լոռու մարզային վարչության և ոստիկանության բաժինների կողմից հարուցված քրեական գործերով պետությանը հասցված վնասի չափը կազմել է 285 մլն. 383 հազ. դրամ, որից վերականգնվել է 19 մլն. 521 հազ. դրամը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի անտառ տնտեսությունների տարածքներում 2018թ. իրականացվել է.

➤ 15 հա անտառ տնկման,

➤ UNDP ծրագրով Լավարի, Գուգարքի և Եղեգնուտի անտառ տնտեսությունների տարածքում 140 հա կոճղաշիվային վերածի, 490 հա բնական վերածի օժանդակման, ստեղծված հարթակներում 157 հա սերմերի ցանքսի և 825 կգ սերմերի մթերման աշխատանքներ:

Թեղուտի անտառ վերականգնման ծրագրի շրջանակներում 2015-17թթ. ընթացքում Շնող համայնքում 46 շահառուի համար իրականացվել են 30 հա պտղատու այգիների հիմնման աշխատանքներ (արքայանարինջ 10.8 հա, կեռաս 1.9 հա, խնձոր 3.4 հա, դեղձ 4.95 հա, սալոր 4.26 հա, ընկույզ 2.3 հա, սերկևիլ 0.7 հա, տանձ 0.6 հա, տխիլ 0.3 հա, թուզ 0.4 հա): 2018թ. իրականացվել է 10 հա պտղատու այգիների մշակում և լրացում ու տրամադրվել սեփականատերերին: 2019թ. նախատեսվում է ևս 15 հա պտղատու նոր այգիների հիմնում:

2018թ. ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում իրականացրել է.

➤ ծառատնկման աշխատանքներ, Ստեփանավան քաղաքի՝ 58.4 հա մակերեսով համայնքային տարածքներում: Ընդհանուր առմամբ մարզում անտառ վերականգնման ծրագրի կողմից տնկվել է 165 664 տնկի:

➤ 84 հա մուլչապատման եղանակով ծառերի խնամքի աշխատանքներ Ստեփանավան և Տաշիր համայնքներում:

➤ Համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում շուրջ 3710 տնկի է տրամադրել Ախթալա, Արջուտ, Ճոճկան, Տաշիր, Մարգահովիտ համայնքներին, Վանաձորի թիվ 6 դպրոցին, տեխնոպարկին և «Ծիծեռնակ» ճամբարին:

2019թ. ծառերի խնամքի, ցանկապատի վերանորոգման աշխատանքները կալանավորվեն տարվա ընթացքում իրականացվող ուսումնասիրություններից հետո ըստ անհրաժեշտության: Նախատեսվում է նաև ծառատնկման աշխատանքներ իրականացնել Ստեփանավան քաղաքի 42 հա մակերես ունեցող տարածքում, ինչպես նաև նախնական պայմանավորվածություն կա մարզի մի քանի համայնքներում նույնպես իրականացնել շուրջ 24 հա անտառ տնկման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ 2019թ. մարզում անտառ վերականգնման ծրագրի կողմից նախատեսվում է տնկել է շուրջ 200 000 տնկի:

Ծառատունկի համար նոր տարածքների ընտրության հարցում մարզպետարանի բնապահպանության բաժինը սերտ համագործակցում է «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի հետ:

Հիմնադրամը մարզում իրականացնում է նաև տարաբնույթ բնապահպանական ուսուցողական դասընթացներ, անվճար հիմունքներով համայնքներին է տրամադրում պտղատու և դեկորատիվ տնկիներ:

Մարզպետարանի հանձնարարությամբ համայնքներում ծառերի էտրկազմակերպվում է ուշա շնանընէտից առաջացած վառելափայտը տրամադրում են սոցիալապես անապահով ընտանիքներին: Մասնավորապես 2018թ. աշնանը.

➤ Վանաձոր համայնքում է տվել է 256 ծառ, որից առաջացած 180մ³ ծավալով վառելափայտը տրամադրվել է սոցիալապես անապահով 156 ընտանիքի և 3 ՀՈԱԿ-ների, որոնց ջեռուցումն իրականացվում է վառելափայտով,

➤Սպիտակ համայնքում էտից առաջացած 36մ³ ծավալով վառելափայտը տրամադրվել է սոցիալապես անապահով 18 ընտանիքի:

➤Ղուրսալի համայնքում էտից առաջացած վառելափայտը տրամադրվել է սոցիալապես անապահով 33 ընտանիքի ևայլն:

Ընդհանուր առմամբ 2018թ. ընթացքում մարզում իրականացվել է շուրջ 90 հա անտառտնկման, ինչպես նաև նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ: Իրականացվել են նաև նախկինում կառուցված ցանկապատի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ:

Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ մշակվում և պարբերաբար անց են կացվում «Անտառների հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով շտաբային ուսումնավարժություններ:

Ընթացքի մեջ է ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում 2018թ. ընթացքում.

➤Սպորտային և արկածային տուրիզմի զարգացում Ստեփանավանում (Ռուսի պարկ);

➤Կայուն եկամտի գեներացում Դեբետի համայնքում 56 տնամերձ հողակտորների մշակման միջոցով յուր. 240 քառ. մ (ազնվամորու թփերի ձեռքբերում և տնկում);

➤Լոռվու մարզի Արդվի համայնքում կառուցվել է 260մ² մակերես ունեցող պասիվ արևային ջերմատուն, որը հանձնվել է «Արդվի» կոոպերատիվին:



➤Լավվարի, Գուգարքի և Եղեգնուտի անտառտնտեսությունների տարածքներում իրականացվել է 605 հա անտառների վերահի օժանդակման աշխատանքներ: Կոճղաշիվայինվեր աճի օժանդակման աշխատանքների ցառաջացած փայտանյութը (շուրջ 300մ³) անվճար տրամադրվել է հարակից համայնքների կարիքավոր ընտանիքներին:



Ծրագրի շրջանակներում 2019թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել.

➤ Մեծ Պարնի համայնքում վառելափայտին փոխարինող բրիկետների արտադրության ընդլայնում:

➤ Լալվարի և Դսեղի անտառտնտեսությունների անտառկառավարման պլանների (ԱԿՊ) պատրաստում և քննարկումներ կատարված աշխատանքի և ԱԿՊ-ի հաստատման ու կիրառության մեջ դնելու գործընթացների վերաբերյալ:

➤ Ստեփանավանի, Տաշիրի և Զիլիգայի անտառտնտեսությունների անտառկառավարման պլանների (ԱԿՊ)-ի պատրաստում և քննարկումներ կատարված աշխատանքի և ԱԿՊ-ի հաստատման ու կիրառության մեջ դնելու գործընթացների վերաբերյալ:

➤ Լալվարի, Դսեղի, Ստեփանավանի, Տաշիրի և Զիլիգայի անտառտնտեսությունների անտառկառավարման պլաններում էկոհամակարգային ծառայությունների, կենսաբազմազանության և անտառային ածխածնի արձանագրությունների ինտեգրումը:

➤ Արբանյակային բարձր լուծաչափի պատկերների ձեռքբերում անտառգույքագրման, սահմանների ճշտման և այլ հարակից աշխատանքներում օգտագործելու համար:

➤ GPS և TDC գնում, ուսուցում և տրամադրում Ա/S-ին և պահպանվող տարածքներին:

➤ Դենդրոխորոնոլոգիական սարքավորումների ձեռքբերում, ուսուցում և տրամադրում ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչությանը:

➤ Կապի միջոցների տրամադրում անտառտնտեսություններին և բնության հատուկ պահպանվող տարածքների անձնակազմերին

➤ 2000 հա դեգրադացված անտառների վերակազմում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու և Տավուշի մարզերի անտառտնտեսությունների տարածքներում՝ հանքայնացման, ցանքսի, կոճղաշիվային աշխատանքների և ցանկապատման միջոցառումների շնորհիվ:

➤ Փոքր դրամաշնորհային ծրագրերի սխեմայով դրամաշնորհային ծրագրերի իրականացում Լոռու մարզում, մասնավորապես նախատեսվում է հակակարկտային ցանցերի, պասիվ արևային ջերմոցների, էներգաարդյունավետ վառարանների և արևային մարտկոցների տեղադրում: Այս ծրագրերի միջոցով կգրանցվեն եկամուտների դինամիկայի ուսումնասիրում՝ որպես անտառից ճնշման թուլացման ինդիկատոր:

Ընթացքի մեջ է «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից էկոհամակարգերի կայուն կառավարում և համայնքային կարողությունների զարգացում» ծրագիրը: Ծրագրի հայեցակարգում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության 3 մարզ, այդ թվում Լոռու մարզը՝ Մարգահովիտ և Ֆիոլետովո բնակավայրերով: Լոռու մարզում իրականացվող ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 79 մլն. 752.6 հազ. դրամ:

2019թ. տվյալ ծրագրի շրջանակներում Լոռու մարզում նախատեսվում է.

➤ Մարգահովիտ և Ֆիոլետովո համայնքներում դեգրադացված բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության բարձրացումը՝ կերի կայուն բազայի ստեղծման, դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման և այլ բնապահպանական ծրագրերի իրականացման ճանապարհով:

➤ Շահառու համայնքների կողմից իրականացված ծրագրերի մոնիտորինգի կատարում:

Ընդերք օգտագործում և շրջակա միջավայր

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է հանրապետությունում:

Մարզի տարածքում 47 կազմակերպություններ ունեն ընդերքարդյունահանման արտոնագրեր, որոնցից 6-ը մետաղական: Մետաղական հանքավայրերից ներկայումս շահագործվում են Շամլուղի պղնձի և Մղարթի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը:

Հանքավայրերի շահագործման և օգտակար հանածոների վերամշակման արդյունավետության բարձրացման համար կազմակերպություններին տրվել է մասնագիտական և խորհրդատվական օգնություն:

Ուսումնասիրվել և համապատասխան առաջարկություններ են արվել ընդերք օգտագործման և բնապահպանության ոլորտներին առնչվող իրավական ակտերի մի շարք նախագծերի վերաբերյալ:

Մարզի հանքարդյունաբերական կենտրոններում պարբերաբար անց են կացվում լեռնարդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող ռիսկերի գնահատման և դրանց մեղմացմանն ուղղված հանդիպում-քննարկումներ: Հանդիպումներին մասնակցում են թիրախային համայնքների ղեկավարներ, ակտիվ քաղաքացիներ, ՀԿ-ների, ՁԼՄ-ների, պետական կառույցների, ինպես նաև հիմնարկ-ձեռնակությունների և այլ շահառու կողմերի ներկայացուցիչներ:

Մարզի ընդերքի օգտագործման և օրինականության վերաբերյալ պահանջվող ձևաչափով համապատասխան գերատեսչություններին պարբերաբար ներկայացվել են տեղեկանքներ:

ՀՀ պետական բյուջեի կողմից 2016-2018թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

հազ. դրամ

Հ/Հ	Համայնքներ	Բնակավայրեր	Տարիները		
			2016թ	2017թ	2018թ
1	Ալավերդի	Ալավերդի		29 757.0	168218.41
		Հաղպատ		3 155.4	1045.68
		Աքրի		24 903.2	1004.66
	Ընդամենը Ալավերդի			57 815.6	170 268.75
2	Օձուն	Օձուն	47 918.2	19 806.2	
		Հազվի		30 051.1	
	Ընդամենը Օձուն		47 918.2	49 857.3	

3	Ախթալա	Ախթալա	4 588.2		
		Ճոճկան		1 192.0	
		Մեծ Այրում		682.3	
	Ընդամենը Ախթալա		4 588.2	1874.3	
4	Շնող	Շնող		2 120.0	
Ընդամենը Լոռու մարզ			52 506.4	111 667.2	170 268.75

2018թ. Ալավերդի խոշորացված համայնքում նախատեսվել է իրականացնել 182 մլն. 643.2 հազ. դրամի աշխատանքներ: Փաստացի իրականացվել է 170 մլն. 268.75 հազ. դրամի աշխատանքներ: Տնտեսումը կազմել է 12 մլն. 374.45 հազ. դրամ:

Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներից 2019թ. համար նախատեսվում է հատկացնել 128 մլն. 937.79 հազ դրամ, համապատասխանաբար.

➤ Ալավերդի – 100 467.39 հազ. դրամ;

➤ Օձուն – 28 470.4 հազ. դրամ:

Ալավերդու քաղաքապետարանի պատվերով իրականացվել են Ալավերդու մկնդեղի թափոնակուտակիչի դիսկերի մեղմանն ուղղված և այն հետագայում անվտանգ վիճակի բերելու միջոցառումների նախագծա-նախահաշվային աշխատանքները: Ըստ նախագծի մկնդեղի գերեզմանոցի կոնսերվացման համար անհրաժեշտ է շուրջ 128 մլն. դրամ:

Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի կողմից նախատեսվում է հանքաքարի վերամշակումից առաջացած հեղուկ պոչանքները հատուկ զտիչների օգնությամբ խոնավությունը հասցնել 7-8%-ի, որից հետո դրանք կտեղադրվեն Շամլուղի պղնձի հանքավայրի պաշարներից սպառված տարածքներում: Թափոնների տեղադրման և պահպանման նման մոտեցումը բնապահպանական տեսնկյունից մի քանի անգամ ավելի նպաստավոր է, քան պոչամբարների ավանդական շահագործումը:

2018թ. ընթացքում Լոռու մարզի 14 համայնքներում, որոնցից 5-ը խոշորացված, իրականացվել է շրջակա միջավայրի պահպանության և ընդերքօգտագործման բնագավառների մասնագիտական հսկողություն ու արդյունքները ներկայացվել տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից իրականացված հողի նմուշ առման հետազոտությունների հիման վրա պարզվել է, որ կապարով և մկնդեղով առավելագույնս աղտոտված է Ախթալայի եկեղեցու բակը: Աղտոտումը պայմանավորված է միջնադարում տվյալ տարածքում մետաղաձուլարանի առկայությամբ: «Բլեքսմիթինստիտուտ» բնապահպանական ՀԿ-ի կողմից կատարվել է Ախթալայի եկեղեցու բակի հողածածկի ռեկուլտիվացիայի ծրագրի իրականացում: Կատարվել է 11500մ² մակերեսի վրա գետտեքստիլ թաղանթի փռում, 20-30 սմ հողածածկում և նոր խոտածածկի հիմնում: Ծրագրի իրականացմանհամարծախսվել է շուրջ 100 000 ԱՄՆ դոլար (48 մլն. դրամ):

Բնապահպանության բաժինը «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի, այլ շահագրգիռ կառույցների հետ համատեղ կազմակերպել և ակտիվ մասնակցություն է ունեցել բնապահպանության ոլորտին առնչվող հասարակական լսումների, սեմինարների, գիտաժողովների և կոնֆերանսների աշխատանքներին: Նշենք դրանցից մի քանիսը.

➤ Ընդերք օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ հասարակական լսումներ:

➤ Կոշտ կենցաղային թափոնների արդյունավետ կառավարմանը նվիրված քննարկումներ:

➤ «Հայաստանի արտադրական լանդշաֆտների կլիմայի փոփոխության նկատմամբ տոկունության հզորացում» ծրագրին ախապատրաստման աշխատաժողով:

➤ «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագրի հանդիպում-քննարկում, խորհրդատվական խորհրդի նիստ:

➤ Ալավերդու պղնձաձուլական գործարանի արտանետումների վերաբերյալ հանդիպում-քննարկում:

➤ Վանաձորի քիմիական գործարանի թափոնակուտակիչի պարունակությանն ու պահպանությանը նվիրված հանդիպում-քննարկում, արխիվային նյութերի տրամադրում և այլն:

Մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումները, հասարակական լուծումները հիմնականում անց են կացվում մարզպետարանի նիստերի դահլիճում:

Հասարակական լուծումներին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ԶԼՄ-ների և հասարակության ակտիվներ կայացուցիչներ:

ՀՈՂԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2018թ. կազմվել և ժամանակավոր սխեմաների միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 13 ժամանակավոր սխեմա Ստեփանավանի Ուրասար, Գյուլագարակի Ամրակից, Կուրթան, Ալավերդու Հաղպատ բնակավայրում, Բազում, Ղուրսալի, Արջուտ, Նոր Խաչակապ, Մեծավան, Ծաղկաբեր, Վահագնի, Սպիտակ համայնքներում, որոնք միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել են դրական եզրակացություն:

2018թ. կազմվել և միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել Վանաձոր, Տաշիր, Ալավերդի, Լեռնանցք համայնքների բնակավայրերի գլխավոր հատակագծերում առանձին հողամասերի նպատակային նշանակության առաջարկությունները, որոնք ստացել են դրական եզրակացություն:

Քաղաքացիների և իրավաբանական անձանց հողամասերի նպատակային նշանակության փոփոխման արդյունքում համայնքների բյուջե է մուտքագրվել 2327.9 հազ. դրամ կադաստրային արժեքների տարբերության վճար:

2018թ. մարզի համայնքներում օտարվել է 161 միավոր հողամաս 32.3 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել է կադաստրային արժեքներով կամ գերազանցել է այն: 2018թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 77.76 միլիոն ՀՀ դրամ: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեք օտարված հողամասերի համար կազմում է 33.2 միլիոն ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 234.0%-ը:

2018թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված 6066.9 հա պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 4682 հա 11724.3 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 12038.8 հազ դրամ վարձավճար, հավաքագրումը կազմել է 103 %:

2018թվականին օտարվել է 0.17 հա պետական սեփականության հողամաս 389.5 հազ. ՀՀ դրամով:

2018թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված 71915.7 հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 48897.3 հա 148197 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 156509.6 հազ դրամ վարձավճար: Լոռու մարզի համայնքների կողմից հողերի վարձակալությամբ տրամադրման վարձավճարների հավաքագրումը կազմել է 105.6 %

• ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի 'Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին' թիվ 656 որոշման համաձայն կազմվել և ժամանակին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ:

Լոռու մարզի հողային հաշվեկշռի համաձայն մարզի վարչական տարածքը կազմում է 379864.5 հա, որից գյուղատնտեսական նշանակության 250902.3 հա, Բնակավայրերի՝ 16486.8 հա, Արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 3989.7 հա, Էներգետիկայի կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1653.9 հա, Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2404.8 հա, Հատուկ նշանակության՝ 1217.1 հա, Անտառային՝ 100603.3 հա, Ջրային՝ 2606.9 հա:

Գյուղատնտեսական նշանակության՝ 250902.3 հա հողերից, որից վարելահող 42037.4 հա, բազմամյա տնկարք 393.7 հա, խոտհարք 35059.6 հա, արոտ 145633.8 հա, այլ հողատեսք 27777.8 հա փաստացի օգտագործվում է, 86706.3 հա, որից վարելահող 32510.4 հա, բազմամյա տնկարք 308.7 հա, խոտհարք 21721.6 հա, արոտ 31450.8 հա, այլ հողատեսք 714.8 հա:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման, օժանդակվել է բնակելի տարածքների նվիրատվության գործընթացին:

Օժանդակվել է պետական սեփականություն հանդիսացող գույքի զբաղեցրած հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերության գործընթացին:

Իրականացվել է Լոռու մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման աշխատանքները և համայնքներին է տրամադրվել գնահատման քարտեզների էլեկտրոնային քարտեզները և տեղեկագրերը:


ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

2018թ. արդյունքներով մարզի մանրածախ առևտրի 677 օբյեկտներ ապահովել են 43290.4մլն. դրամի ապրանքաշրջանառություն, 2017թ. համապատասխանաբար 707 օբյեկտի և 37635.6 մլն. դրամի ապրանքաշրջանառության դիմաց կամ առևտրի ծավալը աճել է և կազմել նախորդ տարվա 115.0%-ը (հանրապետականը՝ 108.7%): Մարզում մանրածախ ապրանքաշրջանառության հիմնական աղբյուրներն են խանութները՝ 291 հատ և 22849.7մլն. դրամի շրջանառությամբ, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական ապրանքների շուկաները՝ 5 հատ և 2157.5 մլն. դրամի շրջանառությամբ, կրպակները՝ 30

5 հատ և 2483.8 մլն. դրամի շրջանառությամբ և առևտրի այլ օբյեկտները՝ 76 հատ և 15799.4 մլն. դրամի շրջանառությամբ:

Սպառողական գների ինդեքսը (գնաճը) հանրապետությունում եթե կազմել է 102.5%, ապա Վանաձորում՝ 99.5%, այդ թվում՝ սպառման ապրանքներինը՝ համապատասխանաբար 101.8% և 99.5%, որից սննդամթերքինը՝ 101.6% և 97.2%, ոչ պարենային ապրանքներինը՝ համապատասխանաբար 103.2%, 100.9%:

Մարզի մեկ շնչին ընկնող մանրածախ առևտրի ծավալը 2018թ. կազմել է 200.4հազ. դրամ միջին հանրապետական 475.2 հազ. դրամի դիմաց կամ ցածր է ավելի քան 2.4 անգամ և 2017թ. 172.8 հազ. դրամի դիմաց:




Շատ վատ վիճակում է գտնվում մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողական աշխատանքները: 2018թ. նշված օբյեկտներում իրականացված ընդամենը 395 հսկողության արդյունքում ոչ մի խախտում չի արձանագրվել 2017թ. համապատասխանաբար՝ 329 հսկողություն, 4 խախտում և 20.0 հազ. դրամ (ք.Սպիտակ):

Ծառայությունների ծավալը մարզում 2018թ. կազմել է 20783.8մլն. դրամ, 2017թ. 18214.7մլն. դրամի դիմաց կամ ծառայությունների ծավալն աճել է 114.1%-ով, իսկ տեսակարար կշիռը կազմել է հանրապետական ծառայությունների 0.8%-ը, նախորդ տարվա 1.3%-ի դիմաց:

Մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը մարզում 2018թ. կազմել է 20783.8մլն. դրամ 2017թ. 83.6մլն. դրամի և միջին հանրապետական 1764751.2մլն. դրամի դիմաց (կամ հանրապետականի 16.2%-ը):

Մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը մարզում 2018թ. տարի կազմել է 96.2 հազ. դրամ 2017թ. 83.6հազ. դրամի և միջին հանրապետական 594.4 488.9հազ. դրամի դիմաց (կամ հանրապետականի 16.2%-ը):



ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ

2018 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման բնագավառում աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել.

- Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը.

- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի համագործակցության արդյունավետության բարձրացումը.

- Իրավական հսկողությունը մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ և ՏԻՄ-երին մեթոդական, խորհրդատվական, գործնական օգնության կազմակերպումը.

• Համայնքներում առկա խնդիրների լուծմանը բնակիչների, քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցության առավել ակտիվ ներգրավումը:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Նախապատրաստվել և անցկացվել է մարզի խորհրդի 1 նիստ:
- Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման և տեղական ինքնակառավարման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ներկայացվել և ընդունվել են մարզպետի **34** որոշումներ:
- Աջակցություն է ցուցաբերվել թիվ 22, 23, 24, 25 տարածքային ընտրական հանձնաժողովներին և տեղամասային ընտրական հանձնաժողովներին՝ ՀՀ Ազգային ժողովի, մարզի համայնքների ՏԻՄ-երի ընտրությունների նախապատրաստման և անցկացման կազմակերպման աշխատանքներում:
- Իրականացվել է ՀՀ օրենսդիր, գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված **7253** գրությունների քննարկման աշխատանքների համակարգումը, **2017թ.-ին՝ 8391**:
- Ներկայացվել է պաշտոնական թղթակցությունների, հանձնարարականների կատարման **770** պատասխանների նախագծեր, **2017թ.-ին՝ 977**:
- Ուսումնասիրվել է քաղաքացիներից ստացված **294** դիմում-բողոքներ և ներկայացվել են դրանց պատասխանների նախագծեր, **2017թ.-ին՝ 106**:
- Ըստ անհրաժեշտության և ստացված հանձնարարականների կազմվել և համայնքների ՏԻՄ-երին է ուղարկվել **182** շրջաբերական գրություններ, **2017թ.-ին՝ 175**:
- **20** համայնքներում իրականացվել է ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն և դրանց վերաբերյալ քննարկումներ են կազմակերպվել Լոռու մարզպետի և մարզպետի տեղակալների մոտ:
- Պարբերաբար կազմակերպվել է մարզպետի, մարզպետի տեղակալների, մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք ուղեկցվել են տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ բնակչությունը հնարավորություն է ունեցել ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:
- Համակարգվել է համայնքների 2017 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններին մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցության աշխատանքները:
- Կազմակերպվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականության վերահսկումը, թերի կամ գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանող որոշումների մասին տեղյակ է պահվել դրանք ընդունող ՏԻՄ-երին և առաջարկվել է դրանք լրամշակել, համապատասխանեցնել գործող օրենսդրությանը: **2018** թվականին ստացվել են համայնքների ավագանիների **2568** և համայնքների ղեկավարների **8330** որոշումներ:

• Ըստ անհրաժեշտության աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ (զինկոմիսարիատներ, ոստիկանության մարզային վարչություն, վիճակագրության ծառայության մարզային բաժին, փրկարարական մարզային վարչություն, «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունք և այլ ծառայություններ):

• Միջոցներ են ձեռնարկվել համայնքների ՏԻՄ-երի և ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրակաշառքի բաժանման դեպքերի և վարչական ռեսուրսի օգտագործման բացառման և թեկնածուների համար հավասար պայմանների ստեղծան ուղղությամբ:

• Հատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ օրենսդիր, գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված գրությունների և դիմումների առավել խորությամբ քննարկմանը և դրանց հստակ պատասխանների ներկայացմանը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

• 2018 թվականին անցկացվել են ՏԻՄ-երի ընտրություններ **10** համայնքներում, որից **1**-ում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, **6**-ում համայնքի ղեկավարի, **3**-ում ավագանու անդամների:

• Կազմվել է մարզում չօգտագործվող համայնքային գույքի շտեմարան:

• Ընտրանքային կարգով Տաշիր համայնքում անցկացվել է հողի հարկի բազայի ուսումնասիրություն, իրականացվել է արդյունքների ամփոփում, վերլուծություն և առաջարկների ներկայացում:

• Սահմանվել և իրականացվել է հսկողություն 2017 թվականի ընթացքում համայնքների ղեկավարների, համայնքապետարանների աշխատակազմերի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, համայնքային ենթակայության կազմակերպությունների և հիմնարկների աշխատակիցներին չտրամադրված արձակուրդները տրամադրելու ուղղությամբ և բոլոր աշխատակիցներին տրվել են չօգտագործված արձակուրդները:

• Ուսումնասիրվել է Վանաձոր համայնքի կայքի կառավարման տեղեկատվական համակարգի ամբողջական կիրառման հետ կապված խնդիրները և Վանաձորի համայնքապետարանի հետ ձեռնարկվել են միջոցներ կայքում տեղադրված հողի հարկի և գույքահարկի բազայի տվյալները քաղաքացիներին հասանելի դարձնելու համար:

• ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացման և տեղական եկամուտների հավաքագրման աճ ապահովելու նպատակով՝ մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների աշխատակազմերին մշտական խորհրդատվական, մեթոդական, գործնական օգնություն է ցուցաբերվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կազմակերպման հարցում: Բյուջեների սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարների և աշխատակազմերի հետ պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ:

• Մշտական մեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին ՏԻՄ ոլորտի գործող օրենսդրության և հատկապես «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների կիրարկման և գործավարության կազմակերպման հարցերում:

• Աջակցություն է ցուցաբերվել համայնքապետարանների աշխատակազմերին գույքահարկի բազաների վարման աշխատանքները կազմակերպելու հարցում, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացվել և աշխատակազմերին է տրամադրվել ֆիզիկական և իրավաբանական անձանց անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցների ցանկը: Ամիսը մեկ անգամ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունքից ստացվել, տեսակավորվել և ըստ համայնքների աշխատակազմերին է տրամադրվել հաշվառված և հաշվառումից հանված տրանսպորտային միջոցների ցուցակները:

• ՀԿՏՀ ներդրած 39 համայնքների համակարգերը միացված են Mullbery համակարգին՝ էլեկտրոնային փաստաթղթաշարժ իրականացնելու նպատակով:

• Պարբերաբար իրականացվել է մարզի համայնքների կողմից ՀԿՏՀ շահագործման մշտադիտարկում, որի արդյունքները ներկայացվել է համայնքապետարանների աշխատակազմերին:

• ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից ստացվել, տեսակավորվել և համայնքապետարաններին է տրամադրվել 2018թ.-ի հունվարի 1-ի և հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված քաղաքացիների ցուցակները:

• Համայնքների ՏԻՄ-երի հետ աշխատանքներ են տարվել աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում ծառայությունների մատուցման կազմակերպման, մատուցված ծառայությունների որակի բարելավման և աղբահանության վճարների հավաքագրման ուղղությամբ:

• Աշխատանքներ են իրականացվել 3000-ից ավելի բնակչություն ունեցող մարզի 14 համայնքների ինտերնետային կայքերի շահագործման մակարդակը, աշխատանքներ են տարվել համայնքների կողմից այդ կայքերում առկա նյութերի թարմացման և բնակչությանը ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՈՒ

• Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են **171** մրցույթներ, որոնցից կայացել են **111**-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են **136** քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են **127**-ը: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչվել և թափուր պաշտոններում նշանակել են **111**-ը:

• Ապահովվել են համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը՝ մարզպետարանի կայք էջում, ֆեյսբուքյան էջում մշտապես տեղադրվել են հայտարարված մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բացի այդ պատշաճ կերպով կազմվել և սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հայտարարությունները և ժամանակացույցերը: Մրցույթների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ամիսը մեկ անգամ ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և հանրային իրազեկման նպատակով դրանք տեղադրվել են մարզպետարանի կայքում:

• Վարչության աշխատակիցները համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում մասնակցել են մարզի համայնքապետարանների աշխատակազմերի 45 համայնքային ծառայողների ատեստավորման աշխատանքներին:

• «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի հետ կազմակերպվել է խոշորացված 7 համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի 24 համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների և 14 համայնքների 44 ավագանու անդամների վերապատրաստումները: Վերապատրաստման գործընթացի նկատմամբ իրականացվել է պատշաճ վերահսկողություն և վերապատրաստումների արդյունքները սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

• Քննարկվել են համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության անվանացանկերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները և դրանք ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին:

• Մարզի համայնքապետարանների աշխատակազմերից մշտապես հավաքագրվել են համայնքային ծառայողների մասին անհրաժեշտ տեղեկությունները (գրանցամատյան Ձև 1, 2) և աշխատակազմերի, բյուջետային հիմնարկների և համայնքային կազմակերպությունների հաստիքացուցակները, դրանք մուտքագրվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից վարվող «Համայնքային պաշտոնների և ծառայողների տվյալների կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգ»-ում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզում 2018թ. գործել է.

ա/ 6 բուհ, որից 2-ը ոչ պետական, 9 միջին մասնագիտական և 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ

բ/ 70 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4859 երեխաներով, 2 ոչ պետական ՆՈՒՀ և 37 նախակրթարան /707 երեխա/

գ/ 163 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում՝ 80-ը՝ միջնակարգ, 68-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ / մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ/, 11 ավագ դպրոց և 3 վարժարան /2-ը՝ մասնագիտացված/:

2017-2018թթ. ուսումնական տարում մարզի 163 հանրակրթական դպրոցներում աշխատել են 3170 ուսուցիչ, այդ թվում 2790-ը՝ մարզային ենթակայության դպրոցներում:

Լոռու մարզում ուսուցիչ աշակերտ հարաբերակցությունը 2017-2018թթ.ուսումնական տարում կազմել է 1/8.6:


Մարզային ենթակայությամբ գործող 149 դպրոցներն ընդգրկում են՝

- ♦ միջնակարգ դպրոցներ - 80
- ♦ վարժարան
- ♦ հիմնական դպրոցներ - 68
- ♦ 27544 սովորողները կոմպլեկտավորվել են 1627 դասարաններում

Նախադպրոցական կրթություն

Մարզում 2009 թվականից գործում են նախակրթարաններ, որոնք սկզբում գործել են «Մատչելիության ապահովում» վարկային ծրագրի շրջանակներում, այնուհետև՝ սկսած 2011 թվականից, աստիճանաբար անցել են պետական ֆինանսավորման:

2012 թ-ին նախակրթարաններ գործել են մարզի 5 դպրոցներում (6 խումբ, 127 երեխա), 2013թ-ին՝ թվով 22 դպրոցում (27 խումբ, 451 երեխա) և 2014թ-ին՝ թվով 21 դպրոցում (23 խումբ, 400 երեխա), 2015թ-ին՝ 21 դպրոցում (21 խումբ, 355 երեխա), 2016թ-ին՝ թվով 24 դպրոցում (26 խումբ, 420 երեխա), 2017թ-ին՝ 34 դպրոցում (34 խումբ, 585 երեխա), 2018թ-ին՝ 37 դպրոցում (707 երեխա), որոնցից 4-ն այս ուսումնական տարում կգործի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթածրագրի շրջանակներում, իսկ 2019-2020 ուսումնական տարուց սկսած կֆինանսավորվի պետբյուջեից:



2018 թ-ին Լոռու մարզում գործել է 70 նախադպրոցական ուսումնական հաստատություն: 2018թ-ին մարզի ՆՈՒՀ- երի թիվն ավելացել է 3-ով. Ալավերդի, Գյուլագարակ և Շահումյան համայնքներում բացվել են նոր մանկապարտեզներ:

Օձուն համայնքի խոշորացման արդյունքում միավորվել են Օձունի N 1, N 2 և Արևածագի մանկապարտեզները, որը հնարավորություն է տվել ֆինանսական միջոցներ տնտեսել և ՆՈՒՀ- երի կառավարումն ավելի արդյունավետ դարձնել:

Գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային հզորությունը կազմում է 5683 երեխա-տեղ, որի միայն 85.5%-ն է շահագործվում:

2018թ-ին ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են 177 խմբով, որտեղ ընդգրկվել է 4859 երեխա:

Վանաձորի թիվ 11 մանկապարտեզը հիմնովին վերանորոգվել է, Մեծ Պարնիում կառուցվել է նոր մանկապարտեզի շենք, որը շուտով շահագործման կհանձնվի:

Երեխա/դաստիարակ հարաբերակցությունը կազմում է 1/16 նախորդ տարվա 1/14-ի փոխարեն:

2014-2018 թվականներին նախադպրոցական հաստատությունների քանակի և դրանցում ընդգրկված երեխաների թվի դինամիկան տրված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Տարեթիվը	Մանկապարտեզների թիվը	Խմբերի թիվը	Հաճախող երեխաների թիվը	5-6 տարեկան երեխաների թիվը
2014	69	155	4575	1828
2015	68	154	4538	1844
2016	68	152	4379	1807
2017	69	165	4856	1805
2018	70	177	4859	1805

Գյուղական համայնքների ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների թիվը կազմել է մարզի ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի 23.8%-ը: Այս բացը որոշ չափով լրացվում է գյուղական համայնքների դպրոցների կազմում գործող նախակրթարանների միջոցով:

Ընթացիկ տարում վերահսկողություն է իրականացվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման նկատմամբ: Ուսումնասիրություններ են իրականացվել 9 համայնքների (Արևաշողի, Լերմոնտովյի, Դեբեդի, Գուգարքի, Լեռնապատի, Ախթալայի, Սարչապետի, Օձունի, Վանաձորի) 30 ՆՈՒՀ-երում, տրվել են հանձնարարականներ՝ ուսումնասիրությունների արդյունքների ընթացքում բացահայտված ՀՀ օրենսդրության պահանջների, խախտումների և թերությունների վերացման վերաբերյալ:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում փորձարարական եւ նորարարական գործունեություն կազմակերպելու նպատակով մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը համագործակցել է Կրթության ազգային ինստիտուտի Լոռու մասնաճյուղի հետ:

Արդեն 4-րդ տարին է՝ դրական տեղաշարժ է արձանագրվում երեխա/դաստիարակ հարաբերակցության մեջ: Նախկինում 12 երեխայի համար հաշվարկվում էր 1 դաստիարակ: Երեխա-դաստիարակ հարաբերակցությունը 2014թ-ին կազմել է 1/12,5, 2015 թ-ին՝ 1/12,6, 2016թ-ին՝ 1/13, 2017թ-ին՝ 1/14, հաշվետու տարում՝ 1/16.6:

Միջնակարգ կրթություն

Մարզային ենթակայության 149 դպրոցում աշխատում է **2798** ուսուցիչ, որոնցից 2602-ը ունի բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն /93.1%-ը/, մնացած 192-ը՝ միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը մարզում կազմում է **1/9.5:**

Դասարանների միջին խտությունը 16.9 - է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 17.6 շաբաթական ժամ:

Մարզային ենթակայության հանրակրթական հաստատությունների հիմնական ցուցանիշները ըստ տարիների ներկայացված են աղյուսակ 2-ում և ստորև ներկայացված գծապատկերում:

Աղյուսակ 2.

Ցուցանիշներ	2014/2015	2015/2016	2016/2017	2017/2018	2018/2019
-------------	-----------	-----------	-----------	-----------	-----------

Դպրոցների քանակը	151	151	150	149	149
Աշակերտների թվաքանակը՝ այդ թվում	25226	26120	26435	26751	27544
1-ին դասարան	3017	3055	3223	3118	3007
/9-րդ/ դասարան	1132	2145	2031	2346	2363
/12-րդ/ դասարան	1190	1096	959	498	786
Միջին հաշվով 1 դպրոց հաճախում են	160	173	176	179	185
Դասարանների միջին քանակը մեկ դպրոցում	10.4	10.6	10.7	10.7	10.9
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	15.9	16.2	16.4	16.7	16.9

Գծապատկերից երևում է, որ 2018 թվականի սեպտեմբերին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աշակերտների թվի աճ՝ 793-ով:

Աշակերտների թիվն ըստ կրթական մակարդակների նախորդ տարվա համեմատ նվազել է տարրական դպրոցում՝ 0.03%, միջին դպրոցում աճել է՝ 0.007%, ավագ դպրոցում՝ աճել է 57,8%:

Լոռու մարզի հանրակրթության ոլորտում 2018 թվականի ՏԱՊ-ով նախատեսված միջոցառումներից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառում, դպրոցահասակ երեխաներին՝ հանրակրթական հաստատություններ ներգրավման աշխատանքներ:

Հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում համակարգվել և վերահսկվել են մարզի դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը և նրանց ընդգրկումը հանրակրթական դպրոցներ:

Արդյունքում՝ 2018թ. սեպտեմբերին 1-ին դասարան է ընդունվել 3007 երեխա: Այս ցուցանիշը 111-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից:

Ըստ դպրոցների տվյալների 2018թ. մարզի տարածքում հայտնաբերվել են հանրակրթական հաստատություններում գրանցված, սակայն պարտադիր ուսուցումից դուրս մնացած 80 երեխաներ: Պարտուսից դուրս մնացած երեխաների ծնողների կամ խնամակալների հետ կազմակերպվել են հանդիպումներ, կատարվել են բացատրական աշխատանքներ:

Կրթության ոլորտում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին միտված մարզի պարտուսի տարիքի երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական համակարգում կազմում է 99,8%:

ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների և այլ նորմատիվ ակտերի կատարման ապահովում, ինչպես նաև՝ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի 149 հանրակրթական դպրոցների խորհուրդներին՝ դպրոցների տարիֆիկացիաների կազմման, հաստիքացուցակների ձևավորման, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցերի

քննարկումների կազմակերպման, տնօրենների ու ուսուցիչների ընտրությունների և այլ հարցերում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը դիտելով առաջնահերթություն, մարզը հայտարարվել է «Սմարթ» մարզ: Այդ գաղափարախոսության շրջանակներում մարզի 24 հանրակրթական դպրոցներում գործում են «Սմարթ» դասարաններ՝ հազեցած ամենաժամանակակից տեխնիկական միջոցներով, բարձր հզորության համակարգիչներով, որից 8-ը 2018 թվականին /Օձունի թիվ 2, Վանաձորի թիվ 1, 3, 8, Գուգարքի, Լեռնապատի, Լեռնահովտի և Կաթնաջրի դպրոցներում/: Դասասենյակների վերանորոգումը, կահավորումը, համակարգչային տեխնիկայի ձեռքբերումը իրականացվել է դպրոցների խնայողությունների հաշվին: Կաթնաջրի դպրոցում ներդրումը իրականացրել է UCOM ընկերությունը:

Ստեղծված դասարանների բովանդակային հազեցվածության նպատակով, Հայաստանի Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամի հետ համագործակցությամբ, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում սմարթ դասարաններ ստեղծված մարզի 14 դպրոցների ինֆորմատիկա առարկայի ուսուցիչներ անցան ծրագրավորման լեզվի վերապատրաստման դասընթացներ: Դիլիջանի միջազգային քոլեջի հետ համատեղ, վերը նշված 24 դպրոցների համար համագործակցության հարթակ ստեղծվեց, ուսուցիչների փորձի փոխանակման, առարկայական online դասաժամերի, տնօրենների եւ գրադարանավարների համար վերապատրաստում-սեմինար կազմակերպելու համար:


Սմարթ դասարանների ստեղծման շարունակականությունն ապահովելու համար մարզպետարանի կողմից առաջարկ ներկայացվեց ՀՀ կառավարություն՝ Հնդկաստանի Հանրապետության կողմից Հայաստանի Համահայկական Հիմնադրամի միջոցով մարզերում իրականացվող համակարգչային դասարանների ստեղծման ծրագրում Լոռու մարզի դպրոցների ընդգրկման նպատակով:

Մարզում գործող թվով 22 արմատ լաբորատորիաներից 18-ը գործում են դպրոցներում, որից 2-ը հիմնադրվել են 2018 թվականին /Շնողի և Այրումի դպրոցներ/:

Տնօրենների կողմից սահմանված կարգով և պարբերականությամբ տեղեկատվություն է ներկայացվել գույքագրման, շենք-շինությունների ֆիզիկական վիճակի մասին: Ստացված տեղեկատվությունը մասնագիտական վերլուծության է ենթարկվել, որը հիմք է ծառայել հիմնանորոգման, արդիականացման ծրագրերի մշակման համար:

Մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական ուսումնական հաստատություններից 73-ը ջեռուցումը իրականացնում է լոկալ համակարգով /բնական գազ, կաթսայատուն կամ փոքր հզորության կաթսա/, 38-ը գազի վառարանով, 21-ը վառելափայտով, 19-ը էլեկտականությամբ, 2-ը հեղուկ վառելիքով /Զրաշեն, Արմանիս - երկու էներգակիր, Վանաձորի թիվ 28, Արևաշող- գազի վառարան և փոքր հզորության կաթսա/:

Դպրոցների ջեռուցումը



ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 26-ի թիվ 346-Ն որոշման համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության Աքորու դպրոցին ամրացված անշարժ գույքը հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը: Մարզային ենթակայության թվով 145 /թվով 3 դպրոց գործում է համայնքային սեփականություն հանդիսացող շենքում, մեկ դպրոց գիվորական տեղամասում/ դպրոցի ամրացված գույքից հանձնված է 73-ինը, որից 4-ը մասնակի:

Ներկայացվել է թվով երկու ՀՀ կառավարության որոշման նախագծեր անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի 35/1 հասցեում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող շենքային համալիրի միահարկ մասնաշենքից 163.09 քառ. մետր չափագրված մակերեսով տարածքը (այսուհետ՝ գույք) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով, 7 տարի ժամկետով տրամադրել «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպությանը (քաղ. Երևան, Պարոնյան 21/1)՝ «Համայնքային ինտեգրացված խնամք և առողջ ծերացում» ծրագրի շրջանակներում տնային խնամքի կենտրոն հիմնելու նպատակով:

ՀՀ Լոռու մարզի Գուգարք համայնքի 2-րդ փողոց, 1-ին նրբանցք, շենք 11 հասցեում գտնվող՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված պետական սեփականություն հանդիսացող շենքային համալիրի տարածքից 661.14 քառ. մետր մակերեսով տարածք (այսուհետ՝ անշարժ գույք) հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով 5 տարի ժամկետով տրամադրել ՀՀ Լոռու մարզի Գուգարք համայնքին՝ համայնքային ենթակայության «Երազիկ» մանկապարտեզի գործունեությունը կազմակերպելու նպատակով:


Արդյունքում կայացվել են ՀՀ կառավարության որոշումներ:

Մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2018թ. ընթացքում կատարվել է հերթական ներքին աուդիտ մարզի թվով 50 հանրակրթական ուսումնական հաստատություններում: 50 հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնասիրության արդյունքները քննարկվել են մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստերում և կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում: Հարկ է նշել, որ քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա մարզպետի կարգադրությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից կատարվել է լրացուցիչ ուսումնասիրություն մարզի թվով 5 հանրակրթական դպրոցներում: Արդյունքում՝ խախտումների համար մեկ տնօրեն ստացել է «խիստ

նկատողություն» կարգապահական տույժը (Լեռնավանի մ/դ) և մեկ տնօրեն՝ «նկատողություն» կարգապահական տույժը (Ուռուտի մ/դ) :

2018 թվականի ընթացքում ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական դպրոցներից 20-ում առաջացել են դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղեր: ՀՀ Լոռու մարզպետի և դպրոցի տնօրենի միջև կնքված աշխատանքային պայմանագրի լուծումից հետո թվով 13 դպրոցում ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակվել են գործող տնօրենները, 5 դպրոցում ժամանակավոր պաշտոնակատար նշանակվել է դպրոցի փոխտնօրեն և թվով 2 դպրոցում պաշտոնակատար նշանակվել են այլ անձիք: Ուսուցչի թափուր տեղի համար կազմակերպվել և անցկացվել է **1667** մրցույթ:

2018թ. հունվարից սկսած նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել մարզի **611** ուսուցիչների պարզ ընթացակարգով ատեստավորելու ուղղությամբ: Մասնավորապես, պատրաստվել և կրթության ազգային ինստիտուտի հետ համատեղ մշակվել է վերապատրաստման ենթակա ուսուցիչների վերապատրաստման ժամանակացույցը ըստ առարկաների, և ցուցաբերվել է աջակցություն ուսուցիչների վերապատրաստման գործընթացը կազմակերպելու համար: ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգի համաձայն 2018թ. ատեստավորման ներկայացված ուսուցիչներից պարզ ընթացակարգով ատեստավորվել են **596**-ը: Տարբեր պատճառներով վերապատրաստման դասընթացներին չեն մասնակցել, կամ մասնակցել են բայց չեն ատեստավորվել 15 ուսուցիչներ: 2018թ. նոյեմբեր ամսին ԾԻԳ-ի կողմի վերապատրաստվել են մարզի ինֆորմատիկայի և SMART դասարաններ ունեցող դպրոցների ուսուցիչները:



2018թ.-ի հունվար-մարտ ամիսներին հաշվառվել են մարզի բոլոր դպրոցների 9-րդ դասարանի աշակերտները՝ ըստ «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա», «Օտար լեզու», «Հայոց պատմություն», բնագիտական առարկաներ և «Ռուսաց լեզու» առարկաներից ավարտական քննություններ հանձնելու ցանկության:

Իրականացվել է ծավալուն նախապատրաստական աշխատանք ավարտական քննությունները 2017-2018 ուստարվա ավարտին և 2018-2019թ. ուստարվա համար նախատեսված 2018թ.-ի դեկտեմբեր ամսին կայացած սովորողների գիտելիքների ստուգման,

ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգի պահանջներին համապատասխան կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ:

Առարկայական օլիմպիադաների կազմակերպում

Փետրվարի 12-ից մարտի 16-ը կազմակերպվել և անց է կացվել օլիմպիադանների տարածքային և մարզային փուլերը, որոնց մասնակցել են համապատասխանաբար՝ 1675 և 707 աշակերտներ: Մարզային փուլի արդյունքում 120 /նախորդ տարում՝ 155/ աշակերտներ իրավունք են նվաճել մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին:

Վերջնական արդյունքում մարզը ունեցել է հանրապետական փուլի 32 / նախորդ տարում՝ 41/ մրցանակակիր, որոնցից.

ա/ 1-ին կարգի դիպլոմ – 4 / նախորդ տարում՝ 4/

բ/ 2-րդ կարգի դիպլոմ – 3 / նախորդ տարում՝ 6/

գ/ 3-րդ կարգի դիպլոմ – 7/ նախորդ տարում՝ 5/

դ/ գովասանագիր – 18/ նախորդ տարում՝ 26/:

ՆԶՊ առարկայից օլիմպիադայի հանրապետական փուլի մասնակիցները թիմային հաշվարկով գրավել են 3-րդ տեղը:

2017թ-ի ընթացքում Լոռու մարզում ՀՀ Կառավարության հաստատած ծրագրի շրջանակում Պաշտպանության, ԿԳ նախարարությունների կողմից կազմակերպվել են մի շարք շարադրությունների մրցույթներ՝ միտված մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության զարգացմանը, անկախ և հզոր հայրենիքի կերտման գաղափարի խթանմանը մեր երիտասարդության շրջանում:

Ուսուցիչների մրցույթների կազմակերպում


ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1354-Ն հրամանով հաստատված «Տարվա լավագույն ուսուցիչ, դաստիարակ, տնօրեն մրցույթների անցկացման մասին» կարգի պահանջներին համապատասխան ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. ապրիլի 19-ի թիվ 31, 32 և 33 կարգադրություններով ստեղծվել են «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների անցկացման հանձնաժողովներ:

Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի օգոստոսի 20-ի թիվ 734-Ա/Ք հրամանով հաստատված «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն/ առարկաների ուսուցիչների և դասվարների «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի անցկացման կարգը՝ ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. սեպտեմբերի 13-ի թիվ 167 կարգադրությամբ վերը նշված մրցույթի մարզային փուլի անցկացման նպատակով ստեղծվել է մարզային գնահատող հանձնաժողով: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ մրցույթի մարզային փուլի հաղթողներ ճանաչված ուսուցիչները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կմասնակցեն ՀՀ ԿԳ նախարարության և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին 2-րդի օրհնությամբ կազմակերպված «Լավագույն ուսուցիչ» մրցույթի հանրապետական փուլին:

Հաբուկ /ներառական/ կրթություն

2018 թվականին ներառական կրթություն իրականացրել են մարզի 89 հանրակրթական դպրոցներ, որտեղ, ընդհանուր հաշվով, ընդգրկված է 465/ միջին, ծանր և խորը ցուցանիշներով/ վկայկագրված աշակերտ:

Ստորև ներկայացված է 2014-2018թթ. մարզային ենթակայության ներառական կրթություն իրականացնող հաստատությունների քանակը և երեխաների թիվը:



* Գծապատկերում ներառված չեն ԿԳ նախարարության ենթակայության ներառական կրթություն իրականացնող ավագ դպրոցների տվյալները:

Հանրապետական գործադիր մարմինների հետ համագործակցության ապահովում եւ դրանց քննարկմանը վերջիններիս իրավասությանը վերաբերող մարզին առնչվող հարցերի ներկայացում:

Մարզում գործում են 6 բուհ՝ որից 2-ը ոչ պետական, 9 միջին մասնագիտական և 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ, որոնց հետ համագործակցելով և համապատասխան ուսումնասիրություններ իրականացնելով, մարզի սոցիալ-տնտեսական զարգացումների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ համապատասխան նախարարություններ՝ մասնագիտությունների ընտրության հետ կապված: Այս գործընթացը իրականացվում է յուրաքանչյուր տարի:

Ուղղմահայրենասիրական դաստիարակություն

Աճող սերնդի դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում ռազմահայրենասիրական աշխատանքների կազմակերպումը հանրակրթական դպրոցում: Այդ խնդիրների լուծման ուղղությամբ էական աշխատանք է կատարվել Լոռու մարզի հանրակրթական դպրոցներում: Հանրահայտ է, որ հանրակրթության բնագավառում առանձնահատուկ նշանակություն ունի ՆԶՊ առարկայի դասավանդման գործընթացի կազմակերպումը: Նրա նպատակն է պատրաստել ռազմահայրենասիրական ոգով դաստիարակված ռազմագիտական անհրաժեշտ գիտելիքներ և բարոյականային բարձր հատկություններ ունեցող պատանիներ: Այս գործում մեծ դեր ունի ՆԶՊ առարկայի դասավանդման որակը: Մարզի դպրոցներում կա 248 միավոր ուսումնական զենք, որից 130-ը ուսումնական ինքնաձիգ զենք է, 19-ը՝ նռնականետ, 99-ը՝ օդամղիչ հրացան: 2018թ.-ին դպրոցների ռազմագիտության դասասենյակները և լսարանները նորացվել են համապատասխան դիդակտիկ պարագաներով, ցուցադրական նյութերով, ստենդներով և տեսաֆիլմերով:

ՆԶՊ առարկայից 2018թ. դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին Լոռու մարզից մասնակցել են 7 աշակերտներ: Թիմային հաշվարկով

ռազմականացված խաղերից մարզի թիմը գրավել է 3-րդ տեղը, իսկ գրավոր աշխատանքից, ձգումներից և վազքից՝ 1-ին տեղը:

2018թ. ապրիլ ամսին հաջողությամբ կազմակերպվել է մեկօրյա ռազմադաշտային պարապմունքներ, մասնակցել են 11-րդ դասարաններում սովորող 440 պատանիներ:

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունի շրջանավարտների կողմից ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու աշխատանքների կազմակերպումը: Ուսումնական հաստատություններում, 2018թ. հանրապետության տարբեր ՌՈւՀ-եր է ընդունվել 4 դիմորդ ի շնորհիվ տնօրենների և զինղեկների:

Տարածքային զինկոմիսարիատների հետ համագործակցված աշխատանք է տարվում շրջանավարտների կողմից ՀՀ, ԱՊՀ և արտասահմանյան երկրների ԲՈւՀ-եր ընդունվելու համար: 2018թ. գարնանը մարզի բոլոր տարածաշրջաններում և քաղաքներում կազմակերպվել են հանդիպումներ շրջանավարտների, ՀՀ ՊՆ և ռազմական բուհերի դասախոսների հետ:

Ռազմամարզական խաղերի հանրապետական փուլին Լոռու մարզային թիմը 2 մարզաձևերից գրավել է 1-ին տեղը:

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործում կարևոր է դպրոցների հետ ռազմաշեֆական աշխատանքների կազմակերպումը: Ներկա դրությամբ մարզի բոլոր դպրոցները կապված են շեֆ - զորամասերի հետ և արդյունավետ աշխատանք են տանում սովորողների՝ ՀՀ ազգային բանակում ծառայության նախապատրաստելու և հայրենիքի նկատմամբ իրենց պարտքը բարձր մակարդակով կատարելու ուղղությամբ:

Դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների բաշխումը

Դասագրքերի շրջանառու համակարգով 2018-2019 ուստարվա սկզբում բաշխվել է 69 անուն 69 346 դասագիրք: Դասագրքերի վարձավճարների գանձումը մարզում կատարվել է 100 տոկոսով:

Ստացվել են տարրական դասարանների 46 անուն 41 001 դասագիրք:

Ոչ պետական միջոցներով կրթական օբյեկտների եւ նախադպրոցական հաստատությունների մասով իրականացրած ներդրումներ

Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից մարզի 143 դպրոցներում իրականացվում է <<Դպրոցական սնունդ>> ծրագիրը, որի շրջանակներում տարրական դասարանների և նախակրթարանների 11 833 երեխաների համար 1-անգամյա սնունդ է կազմակերպվում:

Ծրագրում ընդգրկված են նաև դպրոցներում գործող 37 նախակրթարանները: Նախադպրոցական կրթության զարգացման ուղղությամբ համագործակցություն է իրականացվել Կրթության ազգային ինստիտուտի, ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոնի, միջազգային, բարեգործական կազմակերպությունների («Վորլդ Վիժն», ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի UNICEF, ԱՐԴԱ, DSC ֆրանսիական միության հայաստանյան մասնաճյուղ, «Փրկեցեք երեխաներին», «Քայլ առ քայլ և այլն), հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ:

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի մոտ 13.04.2018թ. կայացած խորհրդակցության N 13/04 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ նախապատրաստվել է մարզի սոցիալապես անապահով, ծնողազուրկ 7-13 տարեկան 415 աշակերտների ցուցակը, որոնք իրենց ամառային հանգիստը 3 հերթափոխով

անց են կացրել Հանքավանի «Լուսաբաց» մանկական առողջարարական ճամբարում: Պատշաճ մակարդակով կազմակերպվել է երեխաների մեկնումը եւ վերադարձը:

Ղպրոցներում ինտերնետ կապով ապահովվածության ուղղությամբ և SS ոլորտում կատարված աշխատանքները

Մարզի հանրակրթություն իրականացնող բոլոր դպրոցները ունեն համակարգիչներ, համակարգչային դասարաններ՝ ապահովված համացանցով: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և զարգացման նպատակով հետևողական աշխատանք է տարվում դպրոցներում «Սմարթ դասասենյակ» ստեղծելու և կահավորելու ուղղությամբ:

Մարզային ենթակայության բոլոր 149 դպրոցներում ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի աջակցությամբ ստեղծվել և գործում են կայքէջերը:

ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.4 գ. դրույթի կատարումն ապահովելու նպատակով դպրոցներում իրականացվում են տեսադասեր և հեռավար դասեր, որոնց կատարման վերաբերյալ եռանսյակային ամփոփ հաշվետվությունը ներկայացվում է ԿԳ նախարարություն:

Կրթական հաստատություններում աշխատավարձի ժամանակին վճարում

2018 թվականի ընթացքում մարզի դպրոցների աշխատավարձերի վճարումները յուրաքանչյուր ամսվա համար կատարվել է ժամանակին՝ մինչև հաջորդ ամսվա 5-6-ը, իսկ դպրոցների մեծամասնությունը դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 28-ը:

Մարզպետարանի եւ մարզային ենթակայության կազմակերպությունների կրթության բնագավառում իրականացրած գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը

Կրթության բնագավառում մարզպետարանի գործունեության մասին հաշվետվությունը տեղակայվում է ՀՀ Լոռու մարզպետարանի կայքում՝ www.ori.mtad.am:

Կրթության բնագավառում մարզպետարանի գործունեության մասին տեղեկատվություններ են հրապարակվում «Լոռու մարզ», «Վանաձորյան խճանկար» թերթերում, ինչպես նաև տեղական հեռուստաալիքներում :

Մարզպետարանում գործում է «Թեժ գիծ»՝ 2-32-99 և 4-01-61 հեռախոսահամարներով:

ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- ❖ Շարունակում է խնդիր մնալ դպրոցների խորհուրդների թույլ աշխատանքը:
- ❖ Գյուղական դպրոցների մասնագետ ուսուցիչներով թերապահովվածությունը: Տարեց-տարի դպրոցները ստիպված են մի քանի անգամ տալ մրցույթների հայտարարություն, սակայն ժամերի քիչ լինելու պատճառով դիմողներ չեն լինում:
- ❖ Թույլ է ուսումնական հաստատությունների՝ սեփական նախաձեռնությամբ համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ: Մարզում դեռ խնդիր է մնում նախադպրոցական կրթության և մատչելիության ապահովումը, հանրակրթության արդյունավետության բարձրացումը, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնաձրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավումը, մասնագի-տական կրթության բովանդակության արդիականությունը և որակի բարձրացումը:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

ՀՀ Լոռու մարզում մշակութային քաղաքականության իրականացման և ապահովման նպատակով կազմակերպվում են պետական, ազգային և այլ տոների, հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ:

Ստորև ներկայացվում է կազմակերպված և անցկացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունը:

Ամանորյա և Սուրբ ծննդյան օրվան նվիրված հանդիսությունների կազմակերպում և անցկացում:

- Ամանորին նվիրված թատերականացված ներկայացումներ են կազմակերպվել Վանաձորի «Հայքի» հրապարակում, Հովհ.Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, Վանաձորի քաղաքապետարանի Տիկնիկային և «Բոհեմ» կամերային թատրոնում, Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տանը և այլ թատերականացված խմբերի ելույթներ մշակութային տարբեր հաստատություններում:

Նմանատիպ հանդիսություններ են կայացել մարզի այլ համայնքներում: Մասնավորապես Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր և այլ:

Հայոց բանակի կազմավորման 26- ամյակին նվիրված միջոցառումների սկիզբը հունվարի 28-ին ազդարարվեց Վանաձորի զինվորական պանթեոն այցով: Մարզային ու քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, ազատամարտիկներ, բարեկամներ, ինչպես նաև քաղաքացիներ իրենց խոնարհումը բերեցին Արցախյան ազատամարտում նահատակված հերոսների հիշատակին: Կատարվեց հոգեհանգստի կարգ: Ծաղկեպսակներ խոնարհվեցին նաև Վազգեն Սարգսյանի կիսանդրու առջև:

Բազմաբնույթ հանդիսություններ են կազմակերպվել մարզի կրթական հաստատություններում, մշակույթի ակումբներում, գրադարաններում:

- Գուգարաց թեմի հետ համատեղ մեծ հանդիսությամբ նշվել է Սուրբ Սարգիս Զորավարի և երիտասարդների օրինության տոնը:
- *Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի 103-րդ տարելիցի ոգևորչման մարզային միջոցառումներ. Այդ թվում.*

Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցում և թեմի բոլոր եկեղեցիներում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Սուրբ Պատարագի և հոգեհանգստի արարողություններ, երիտասարդական քայլերթեր:

Կազմակերպվել է մոմավառություն՝ Ծաղիկների և ծաղկեպսակների խոնարհում խաչքարին:

Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են գրական-երաժշտական ցերեկույթներ, հուշ-երեկոներ, բաց դասեր. (նվիրված Մեծ Եղեռնի զոհ դարձած հայ գրողներին), քաղաքական և հասարակական անվանի գործիչների հետ հանդիպումներ:

Կազմակերպվել են Մայիսյան տոներին նվիրված բազմաթիվ միջոցառումներ: Այդ թվում.

Հանրապետության տոնը և Ղարաբաղի իրադրության հերոսամարտի 100-րդ տարեդարձը: Ավանդույթի համաձայն՝ տոնական միջոցառումը կազմակերպվել էր Ղարաբաղի ճակատամարտի վայրում՝ «Կոտրած եկեղեցի» հուշակոթողի մոտ:

Մայիսի 9-ին մարզկենտրոն Վանաձորում մեծ շուքով նշվեց Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 73-ամյակը և Շուշիի ազատագրման 26-րդ տարեդարձը: Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշակոթողի մոտ, ուր առավուտից հնչում էր տոնական երաժշտություն, հավաքվել էր հոծ բազմություն:

ՀՀ Անկախության 27-ամյա հոբելյանին և Սահմանադրության օրվան նվիրված հանդիսություններ և տոնական համերգներ են կազմակերպվել մարզի համայնքներում, մասնակցությամբ մարզի լավագույն համույթների և անհատ կատարողների:

Մարզի վաստակաշատ կանանց շնորհավորելու նպատակով այս տարի նույնպես կանանց տոնին նվիրված միջոցառում է կազմակերպվել մարզպետարանի դահլիճում: Կրթության, առողջապահության, տեղական ինքնակառավարման, ոստիկանության, դատախազության, ազգային անվտանգության, և այլ ոլորտների շուրջ 30 մտավորական կանանց շնորհավորել է Լոռու նախկին մարզպետ Ա. Նլբանդյանը, թեմի առաջնորդ Ս. Չուլջյանը և այլ պաշտոնատար անձինք:

«Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի» նախաձեռնությամբ հանրապետության մարզերի երաժշտական եւ արվեստի դպրոցների երիտասարդ մանկավարժների համար անց են կացվել վերապատրաստման դասընթացներ:

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին»

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հետևյալ միջոցառում-հանդիսությունները.

ա/ «Պատանի երաժիշտ կատարողների» Լոռու մարզային մրցույթ-փառատոն

Փառատոնը կայացել է Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցում, մասնակցությամբ՝ մարզի քաղաքային և գյուղական համայնքների երաժշտական և արվեստի դպրոցների սովորող աշակերտների միջև: Մասնավորապես՝ Վանաձորի, Սպիտակի, Ստեփանավանի, Ալավերդու, Տաշիրի, Օձունի, Շնողի, Շիրակամուտ համայնքներից: Բոլոր մասնակիցները ՀՀ Լոռու մարզպետի կողմից պարգևատրվել են շնորհավորագրերով:

բ/ «Ազգային նվագարանների երգի-պարի, ասմունքի» ամենամյա Լոռու մարզային փառատոնը կայացել է Վանաձորի Շառլ Ազնավուրի մշակույթի պալատում մասնակցությամբ՝ մարզի քաղաքային և գյուղական համայնքներից շուրջ 13 մանկապատանեկան պարային համույթների, 27 անհատ կատարողների, մասնավորապես՝ Վանաձորի, Սպիտակի, Ստեփանավանի, Ալավերդու, Տաշիրի, Սարգսպետի, Օձունի, Մեծավան, Շնող և այլ համայնքներից: Բոլոր մասնակիցները ՀՀ Լոռու մարզպետի կողմից պարգևատրվել են շնորհավորագրերով և հուշանվերներով:

գ/ Ղարաքիլիսայի հերոսամարտի 100-րդ տարելիցին նվիրված հանդիսության փոխարեն կազմակերպվել է «Գնահատանքի» ցերեկույթ, որտեղ հրավիրված են եղել ՀՀ Լոռու մարզի արվեստագետներ, անհատ կատարողներ և ստեղծագործողներ, լրագրության ոլորտի անվանի աշխատողներ:

դ/ « Լոռի-Արցախ մշակույթի օր » խորագիրը կրող միջոցառման փոխարեն իրականացվել է Մարտակերտից թվով 35 երեխաների ակտիվ հանգստի կազմակերպումը Վանաձորի «Ծիծեռնակ» ճամբարում:

ե/ Հայկական Ավանդական ծիսակատարություններին, ավանդույթներին նվիրված հանդիսություն «Վարդավառ», «Խաղող օրինեք», «Խաչվերաց տոն»: Կազմակերպվել է ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու բակում, որտեղ մասնակցել էլ մարզի պարային համույթներ, անհատ կատարողներ, թատերականացված ելույթներ:

Այլ միջոցառումների թվում՝

- «ԹԱՏԵՐԱԿԱՆ ԼՈՌԻ 24» Փառատոնի կազմակերպումը Ալավերդի համայնքում:

- «Մշակութային և ինտելեկտուալ զարգացման» խմբակի ստեղծումը, Վանաձորի Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տանը:
- «ՊԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ» համերգ-հանդիսություններ:
- ԱՀ «ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» երգի-պարի պետական համույթի համերգները Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան և այլ համայնքներում:
- «ՖՐԱՆԿԱՖՈՆԻԱՅԻ ՕՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ծրագրի շրջանակներում բազմաթիվ միջոցառում-հանդիսություններ մշակութային կառույցներում:

Վանաձորի Սբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցու սրահ:

- Եվրոպական ժառանգության օրերը հայաստանում» մի շարք միջոցառումներ մշակութային հաստատություններում՝ համերգասրահներում:
- «Երգչախմբային արվեստի» միջազգային օրվան նվիրված հանդիսություն, մասնակցությամբ մարզում գործող երգչախմբերի:
- 1988թ. երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակի ոգեկոչման գրական-երաժշտական միջոցառումներ:
- Եվ այլ տարաբնույթ միջոցառումներ
- Վաստակավոր կոլեկտիվ, Հայաստանի Ազգային Ակադեմիական Երգչախմբի համերգը-պատարագը մատուրո Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ:

Լոռու մարզային գրադարանում

- Գրադարանի ամերիկյան կենտրոնում տեղի է ունեցել ցերեկույթ՝ նվիրված արձակագիր, դրամատուրգ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Գուրգեն Խանջյանին:
- Ինքնուս ստեղծագործողներ Երիտասարդ հաշմանդամների ձեռքի աշխատանքների ցուցահանդես վաճառք:
- «Ազգային գրադարանային շաբաթ» ծրագրի շրջանակներում.
ա/ «Աշխարհի գրադարանները» դասախոսություն
բ/ Հանդիպում գրողներ Մ. Միկոյանի, Խ. Գասպարյանի, Ժող. վարպետ Մ. Սարգսյանի հետ:
գ/ Արտավազդ Փելեշյան – 80.....
Եվ այլ բազմաթիվ տարաբնույթ միջոցառումներ:

Վանաձորի Հ. Իգիթյանի անվ. գեղագիտության ազգային կենտրոն.

- «Գարուն» խորագրով, Ալլա Գրիգորյանի նկարչական աշխատանքների ցուցահանդես
- Երիտասարդ նկարիչներ՝ Համլետ Հակոբյանի և Սենիկ Մանուկյանի գեղանկարչական աշխատանքների ցուցահանդես, նվիրված Մայրության և Գեղեցկության տոնին:
- «Բաց դռների օր» նվիրված երեխաների պաշտպանության օրվան:
- Հուշ-երեկո, նվիրված բանաստեղծ կարեն Առաքելյանին:
- Եվ այլ բազմաթիվ ցուցահանդես- միջոցառումներ:

Ստ. Զորյանի տուն թանգարան.

- Հանդիսություն, նվիրված Հայոց բանակի ստեղծման 26- ամյակին, մասնակցությամբ Վանաձորի թիվ 10 ավագ դպրոցի աշակերտների, մակավարժների, N գորամասի զինվորների, երկրապահ կամավորների միության ներկայացուցիչների միջև:

- Հանդիսության, նվիրված Զորյանի ծննդյան 129-ամյակին
- Սարգիս Գոքորյանի «Առանց նախապայմանների» գրքի շնորհանդես:
- Հանդիսություն, նվիրված Պոեզիայի միջազգային օրվան:
- Հանդիսություն, նվիրված մանկագիր Լիպարիտ Սարգսյանի ծննդյան 80-ամյակին:
- «Թանգարանների գիշեր» միջոցառումների կազմակերպում և անցկացում:
- Տուն-թանգարանի հյուրընկալ հարկի տակ ավանդաբար նշվող տոներից է Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրը, որը վերիջին տարիներին արժևորվում է նաև որպես Գիրք նվիրելու օր: Այս անգամ կազմակերպված միջոցառումը կրում էր «**Իմ Թումանյանը**» խորագիրը և նվիրված էր մեծն լոռեցու ծննդյան 149-ամյակին ու Մայրենի լեզվի օրվան:
- Հերմինե Զարմանյանի «Ստվերի սիրտը» գրքի շնորհանդեսի կազմակերպում

Վանաձորի Կ.Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան:

- Լոռու արվեստագետների ստեղծագործությունների «ԲԱԶՄԱՇԱՎԻՂ վանաձորյան ներկայնակ» խորագրով ցուցահանդեսը:
- Մայրության և Գեղեցկության տոնին նվիրված «ՀԱՎԵՐԺԻ ԳՐԱՎԱԿԱՆԸ» խորագիրը կրող ցուցահանդես:
- «Հաղթանակի գույնը» ցուցահանդես, նվիրված Ղարաքիլիսայի հերոսամարտի 100-ամյակին:
- Գեղանկարիչ Արմեն Լոռենցի «Լոռի իմ սեր, իմ թախիժ» խորագիրը կրող ցուցահանդեսը:
- Եվ այլ բազմաբնույթ միջոցառումներ

Վանաձորի Հովհ. Աբեղյանի անվան պետական դրամատիկական թատրոն:

- Արթուր Պապիկյանի 50. Ջիվան Սարգսյանի 60, Հրաչյա Սարուխանյանի 70 հոբելյանական երեկոների կազմակերպումը:
- Էֆիկ Զոհրաբյանի «Բյուրեղապակե մարդը» հեքիաթների գրքի շնորհանդեսը Եվ այլ հանդիսություններ...:

Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոց:

- Հայ պոեզիայի և ասմունքի համաքաղաքային մանկապատանեկան 25-րդ փառատոնի եզրափակիչ հանդիսություն:
- Կոմիտաս միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում Ֆրանսիայի «Ճամփորդող երգչախումբ» և «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբերի համերգը:
- Վանաձորի ուկրաինական համայնքի «Վերբիչենկո» երգչախմբի ստեղծման 20-ամյակին նվիրված համերգ-հանդիսություն
- Հաղպատի «Քեֆեյան» համալիրում կայացել է հանդիսություն, նվիրված երջանկահիշատակ արձակագիր Ֆելիքս Շաքարյանի ծննդյան 79 – ամյակին: Այդ օրը տեղի ունեցավ նաև գրողի անվան «Տարվա լավագույն պատմվածք» գրական մրցանակաբաշխության ամփոփումը:
- Ռոբերտ Ամիրխանյանի հեղինակային համերգը նվիրված «Աղուհացի» տոնին:
- Արամ Խաչատրյանի ծննդյան 115-ամյակին նվիրված հանդիսություն:

«Ազգային Գրադարանային Շաբաթ» ծրագրի շրջանակներում Լոռու մարզային գրադարանում և մարզի շուրջ 47 գրադարաններում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, որոնք անցել են պատշաճ մակարդակով:

«Թանգարանային գիշեր» խորագիրը կրող միջոցառումներ են կազմակերպվել մարզում գործող բոլոր թանգարաններում:

Երեխաների պաշտպանության օրվան նվիրված բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել մարզի համայնքներում: Մասնավորապես՝ Վանաձորի Հայքի հրապարակում կալճանկարի մրցույթ, Գեղագիտության ազգային կենտրոնի և գեղարվեստի դպրոցի ցուցասրահներում սաների ստեղծագործությունների ցուցադրություն, մանկական- թատերական ներկայացումներ մշակույթի տներում և ակումբներում:

Ուսուցիչների միջազգային օրն այն եզակի տոներից է, որն առանձնակի երախտագիտությամբ է նշում յուրաքանչյուր քաղաքացի՝ սիրով հիշելով, իր մանկավարժներին, իր առաջին ուսուցչին: Այն շնորհակալական խոսքեր հնչեցնելու ևս մեկ հրաշալի ու սպասված առիթ է: Տոնը երբևէ չի անտեսվում նաև մարզային իշխանությունների կողմից:

Ղարաբաղյան ազատամարտում ընկած զինվորների հուշաքարի մոտ կազմակերպվել է **Անհայտ Կորած Ազատամարտիկների** օրվան նվիրված միջոցառում, որտեղ իրենց մասնակցությունն էին բերել անհայտ կորած զինվորների հարազատներ, պետական և հոգևոր այրեր, վետերաններ, ազատամարտիկներ, մտավորականներ, ուսանողներ: Կատարվել է Ծաղկեպսակների և ծաղիկների խոնարհում: Անհայտ կորած զինվորների հարազատներին Լոռու մարզպետի կողմից հատկացվել է դրամական օգնություն: Միջոցառումը շարունակվել է Վանաձորի գեղագիտության ազգային կենտրոնում, որտեղ հանդես են եկել ասմունքողներ և անհատ երաժիշտ-կատարողներ:

«Բերքի Տոն-2018» տոնահանդեսի կազմակերպումը Վանաձորի Հայքի հրապարակում: Տոնակատարությունը համախմբել էր մարզի համայնքների հարյուրավոր բնակիչների, հյուրերի հանրապետության տարբեր մարզերից, մայրաքաղաքից ԱՀ-ից և արտերկրից: Մարզի տասնյակ համայնքներ, ձեռնարկատերեր ու անհատ ձեռներեցներ, հասարակական կազմակերպություններ պատրաստել էին ճոխ ու ինքնատիպ ձևավորված տաղավարներ, ուր ներկայացված էին տարվա ընթացքում արտադրված բազմազան բերքն ու բարիքը, լոռվա ավանդական խոհանոցն ու Լոռու կենցաղին բնորոշ կիրառական իրերը, ձեռքի աշխատանքներ:

Համերգային ծրագրում ընդգրկվել են մարզի մանկապատանեկան պարային համույթներ, անհատ կատարողներ, մարզական ցուցադրական ելույթներ:

Ախթալա համայնքում Կազմակերպվել է ավանդույթ դարձած «**Խորովածի տոն 2018**» մրցույթ-փառատոնը: Հանդիսությանը մասնակցել են մարզի լավագույն համերգային կոլեկտիվներ և անհատ կատարողներ:

«**Թումանյանական հեքիաթի օր**» տիկնիկային թատրոնների 13-րդ միջազգային փառատոնի կազմակերպումը մարզի համայնքներում որտեղ ներկայացումներով հանդես են եկել հանրապետության և մի շարք արտասահմանյան երկրների տիկնիկային թատրոններ:

Ավանդույթ են դարձել Լոռու մարզի հետ բարեկամության խոր արմատներ ձգած ԱՀ Մարտակերտի վարչական շրջանի դպրոցականների այցելությունները Լոռի, որտեղ բնության գրկում գտնվող «Ծիծեռնակ» և «Գուգարք» ճամբարներում նրանք հանգստանում են, կազդուրվում, բարեկամանում տեղի երեխաների հետ, էքսկուրսիաների շնորհիվ հաղորդակից

դառնում մայր հայրենիքի պատմաճարտարապետական արժեքներին, այցելում թանգարաններ, պատմական վայրեր:

Հիշատակի տուրք է մատուցվել 1988թ. արհավիրքի զոհերին: Լոռու մարզի Հայ Առաքելական եկեղեցիներում կատարվեց հոգեհանգստի կարգ: Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու Նահատակաց պուրակում հոգեհանգստյան աղոթք հնչեցվեց թեմակալ առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Զուլյանի հանդիսապետությամբ, որից հետո երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող-խաչքարին ներկաները՝ Վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը, Վանաձորի քաղաքապետ Մամիկոն Ասլանյանը, մարզային և քաղաքային իշխանությունների, ավագանու, մտավորականների ու հոգևոր դասի ներկայացուցիչները, բազմաթիվ քաղաքացիներ ծաղիկներ ու ծաղկեպսակներ խոնարհեցին: Հուշակոթողին ծաղկեպսակներ էին դրվել նաև ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության կողմից:

ՀՀ Լոռու մարզում 2018թ. ընթացքում իրականացվել են թվով 142 միջոցառումներ, այդ թվում՝

Ազգային պետական տոներ	Հիշատակի օրեր	Հոբելյանական ծննդյան տարեթվեր	Ավանդական տոներ	Այլ միջոցառումներ
✓ Ամանորի և Սբ. ծննդյան ✓ Բանակի օր ✓ Կանանց տոն ✓ Աշխատանքի օր ✓ Հաղթ. և խաղաղության օր ✓ Հանրապետ. օր ✓ Սահմանադր. օր ✓ Անկախության օր ✓ Երկրապահի օր	✓ Յեղասպանության ✓ Մեռելոցի օր ✓ Բռնադատվածներ ի ✓ Երկրաշարժի ✓ Անհայտ կորած ազատամարտիկների ✓ Աղրբեջանում կազմակերպված ջարդեր ✓ «Սուրբ Խաչի» տոն	✓ Հ.Թումանյան 149 ✓ Կոմիտաս 149 ✓ Ա.Խսահակյան 143 ✓ Հ.Շիրազի 104 ✓ Պ Սևակ 94 ✓ Ս.Զորյան 129 ✓ Հ.Մաթևոսյան 83 ✓ Ա.Փելեշյան 80 ✓ Հ.Սարուխան 70 ✓ Չարենց 120 և այլ...	✓ Ծաղկի տոն ✓ Թարգմանչաց տոն ✓ «Վարդատոն» ✓ Խաչվերաց տոն ✓ «Խորովածի» տոն ✓ Տիկնիկային թատրոնների 11-րդ միջազգ. փառատոն ✓ Ավանդական «Բերքի տոն2016» ✓ «Պանրի տոն» ✓ «Համբարձման» տոն	/Համերգ-հանդիսություններ, Գրական-երաժշտական ցերեկույթներ, Մրցույթ-փառատոներ պարի-երգի-ասմունքի, ժող. նվագարանների, Յուրահանդես-վաճառք, Գրքի շնորհանդեսներ, թատերականացված հանդիսություններ և այլ

ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մշակութային օբյեկտների շենքային պայմանների բարելավում:
- Առավել նշանակալից պատմամշակութային հուշարձանների ընդգրկում գրոսաշրջության երթուղիներում:
- Մշակութային կառույցներում տեխնիկական սարքավորումների հագեցվածության ապահովում ժամանակակից միջոցներով:
- Մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական վիճակի բարելավում և աշխատավարձի բարձրացում, մասնավորապես աշխատողների ընդգրկումը սոցիալական ապահովագրության փաթեթի մեջ:

Մշակույթի ոլորտում աշխատանքների հիմնական ուղղությունները

Ելնելով մշակույթի համաչափ զարգացման մասին ՀՀ կառավարության հիմնական գերակայություններից՝ կարևորվում է Լոռու մշակույթի ներկայացումը արցախահայությանը, ինչպես նաև հյուսիսային Հայաստանի և Արցախի ազգագրական, ծիսական առանձնահատկություններին երկկողմանի ծանոթությունը:

Մարզի դպրոցահասակ երեխաների էքսկուրսիաների կազմակերպում մարզի տարածքում գտնվում համաշխարհային մշակութային ժառանգություն հանդիսացող Հաղպատի ու Սանահինի հրաշակերտ վանական համալիրներ, առավել հայտնի Օձունի, Արդվու, Ախթալայի, Քոբայրի, Հնեվանքի, Սեդվու և այլ եկեղեցիներ:

Իրականացնել աշխատանքներ «Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում կազմակերպվող հանդիսություններին ընդգրկել ավելի շատ թվաքանակով համույթներ, անհատ կատարողներ:

Նպաստել դպրոցահասակ երեխաների պարբերաբար այցելությունները մարզում գործող թանգարաններ, մասնավորապես «Լոռի-փամբակ» երկրագիտական թանգարան, Վանաձորի Կերպարվեստի թանգարան, Ստեփան Զորյանի տուն-թանգարան, Դսեղում Հ. Թումանյանի տուն- թանգարան և այլ:

Սպորտի և երիտասարդության ոլորտ

- Մարզի տարածաշրջաններում ապա Վանաձորում կազմակերպվել են ՀՀ ԱԺ Գավաթի խաղարկության մրցումները՝ 1-6-րդ դասարանցիների միջև/հանրապետական փուլը չի կայացել/:

- Կազմակերպվել են անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների ամենամյա մարզական խաղերը /11 մարզաձևից/: Նշյալ մրցույթի հանրապետական փուլում հանդբոլ/տղաներ/, սեղանի թենիս /տղա, աղջիկ/ աթլետիկա/տղաներ/ մարզաձևերից մեր մարզի թիմերը գրավել են 1-ին տեղ: Տարբեր մարզաձևերից 2-րդ և 3-րդ տեղեր են զբաղեցրել 5 հավաքական թիմեր:

- Կազմակերպվել է հանրակրթական դպրոցների սովորողների 3-րդ ուսումնամարզական խաղերը:

- Կազմակերպվել է 1-3-րդ և 4-7-րդ դասարանցիների «Սպորտլանդիա», ՆՈՒՀ-երի «Սպորտլանդիա» մարզական միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերը հաղթողները մասնակցել են հանրապետական փուլերին:

- Կազմակերպվել է «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը, որի մարզային փուլի մրցանակակիր Ավետյանների և Հանիսյանների ընտանիքները եզրափակիչում գավել են համապատասխանաբար 2-րդ և 3-րդ տեղեր:

- Կազմակերպվել է «Լավագույն հաշմանդամ մարզիկ» մրցույթի Լոռու մարզային փուլը, որի արդյուքում ձևավորված մարզի հավաքական թիմը 3-րդ տարին անընդմեջ հանրապետական փուլում գրավել է 1-ին տեղ:

- Օգոստոսին «Լոռու, մշակույթ, սպորտ երիտասարդություն» հիմնադրամի ֆինանսավորմամբ Վանաձորի հայքի հրապարակում կազմակերպվել է երիտասարդության միջազգային օրվան նվիրված տոնական համերգ, երիտասարդ ստեղծագործողների, հաշմանդամություն ունեցող անձանց, տարբեր ՀԿ-ների ստեղծագործությունների ցուցահանդես վաճառք:

- Մարզի 7 համայնքներում կազմակերպվել է մարզական փառատոն միջոցառումը՝ որն ունեցել է շուրջ 8 հազար մասնակից:

- Կազմակերպվել է տարեցների մարզական խաղերի Լոռու մարզային փուլը, որի արդյունքում ձևավորված հավաքական թիմը հանրապետական փուլում գավել է 2-րդ տեղ:

- Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ Վանաձորում կազմակերպվել է գյուղական մարզական խաղերի եզրափակիչ փուլը, որտեղ Լոռու մարզի հավաքական թիմը զբաղեցրել է 2-րդ տեղ:

- Հոկտեմբերին կազմակերպվել է ռազմամարզական խաղերի տարածաշրջանային և մարզային փուլերը:

- «Լուսաստղ» ԲՀԿ –ի հետ կազմակերպվել է «Ներառական սպորտլանդիա»՝ Լոռու, Շիրակի, Տավուշի հաղթող դպրոցների միջև: Վանաձորի թիվ 30 դպրոցի թիմը ճանաչվել է հաղթող:

- ԿԳՆ-ի հետ Վանաձորում կազմակերպված մարզառազմական խաղերի եզրափակիչում մեր հավաքական թիմը գրավել է 2-րդ տեղ:

- Դիվիզանում կայացած հանրակրթական դպրոցների ֆուտբոլի առաջնությունում ապահովվել է Լոռու մարզը ներկայացնող Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցի թիմի մասնակցությունը, որը դարձել է մրցույթի հաղթող:

- Հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանցիների համար «Սպարտակիադա» մարզական միջոցառումը ներառում է 13 մարզաձև՝ տղաների և աղջիկների պայքարում: Վերոնշյալ մրցույթում գրավելով 4 առաջին, 6 երկրորդ և 2 երրորդ տեղ՝ Լոռու մարզը 10 մարզերի Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության թիմերի մեջ զբաղեցրեց 1-ին պատվավոր հորիզոնականը: Սա աննախադեպ արդյունք է:

- Կազմակերպվել են նաև պետական մարմինների միջև «Հրաձգություն», Ղարաքիլիսայի հերոսամարտի 100-ամյակին նվիրված սեղանի թենիսի բաց առաջնություն և այլ մասսայական, երիտասարդական միջոցառումներ, ցուցահանդեսներ: Մրցումներին պատշաճ մակարդակով մասնակցելուն մեծապես օժանդակել է «Լոռու, մշակույթ, սպորտ երիտասարդություն» հիմնադրամը՝ տրամադրելով մարզագույք, մարզահագուստ, ճանապարհածախս:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարզի ընդհանուր տարածությունը- 3798 կմ2, կազմում է ՀՀ տարածքի 12.7 %

Բնակչությունը 215.8 հազ.մարդ, կազմում է ՀՀ բնակչության 7.5 %-ը

2018թ. ընթացքում Լոռու մարզում գործել են հետևյալ բուժհաստատությունները

h/h	բուժհաստատության տեսակը	քանակը	մահճ-ի թիվը
1.	հիվանդանոց	1	45
2	բժշկական կենտրոններ՝	5	396
	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ		186
	«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ		60
	«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ		60
	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ		50
	«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ		40
3	դիսպանսեր	1	35
4	պոլիկլինիկաներ	4	

5	Լոռու մարզային արյան փոխներարկման կայան	1	
6	առողջության առաջնային պահպանման կենտրոններ /ամբուլատորիաներ/	19 (որից համայնքային ենթակայության՝ 5)	
7	առողջապահական ընկերությունների կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետեր	95	
8	Ընդամենը՝	31	476

Մարզի առողջապահական ընկերություններում աշխատում են՝ բժիշկներ - 416, միջին բուժաշխատողներ- 963, այլ- 541, ընդամենը՝ 1920 մարդ:

2018թ. ընթացքում առողջապահության համակարգում նախատեսված պետական պատվերի կատարողական աշխատանքների բազային ծավալը ներկայացվում է՝

2018թ.Բազային ծավալ հազ.դրամ		Կատարողական	Ֆինանսավորում
Հիվանդանոցային՝	1465332.7	1445837.1	1445837.1
Արտահիվանդանոցային՝	2059620.0	2228259.3	2228259.3
ԸՆԴԱՄԵՆԸ՝	3524952.7	3674096.4	3674096.4

Ընդունված կատարողականը ֆինանսավորվել է 100 %-ով:

Մարզային ենթակայության առողջապահական ընկերություններում վճարովի ծառայության մուտքերը ըստ տարիների՝

	Վճարովի ծառայության մուտքերը կազմել են՝ հազ.դրամ
2014թ.	475415.9
2015թ.	523786.7
2016թ.	526069.1
2017թ.	608255.7
2018թ.	722956.6

Նկատվում է վճարովի ծառայությունների աճ 2017թ. համեմատ՝ 18.9%:

Առողջապահության համակարգում ֆինանսավորումը շարունակվել է իրականացվել սահմանափակված բյուջեի ֆինանսավորման սկզբունքով:

Մարզպետարանի ենթակայության բաժնետիրական ընկերությունների ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական պատվերի ֆինանսավորումն ստանալուց եւ վճարումները կատարելուց հետո յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքերը չեն գերազանցում տվյալ ե

ռամսյակի համար մարզպետարանի կողմից հաստատված նախահաշվային գումարի մեկ երրորդը:

2018թ.արդյունքներով աշխատավարձի գծով պարտքեր առողջապահական ընկերությունները չունեն:

Ավարտվել է «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները՝ 154.900 մլն. ՀՀ դրամ, որի մեջ 2 մլն 612 հազ. ՀՀ դրամի գույք:

Ավարտվել է Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նորակառույց շենքը և մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի շենքը հանձնվել են շահագործման՝ ժամանակակից հագեցած բժշկական սարքավորումներով և գույքով:

«Հայաստանի մանուկներ հիմնադրամ» /COAF/ բարեգործական կազմակերպության կողմից 2018 թվականին «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացվել է ատամնաբուժական կաբինետի սարքավորումներ, նյութեր, գույք և այլ ապրանքներ մոտ 2500000 դրամ արժողությամբ: Օգոստոսից գործում է մանկան և ատամնաբուժական կաբինետը, որը սպասարկել է 200 երեխաների /700 հաճախում/:

«Հայաստանի մանուկներ հիմնադրամ» /COAF/ բարեգործական կազմակերպության կողմից «Վահագնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարել է վերանորոգում՝ 828,2 հազ. դրամ արժեքով և սեփական միջոցներով ձեռք է բերել 99,9 հազ. դրամ արժեքով:

«Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը Շնողի համայնքապետարանի կողմից ստացել է դրամաշնորհ՝ 219 հազ. դրամ, համակարգիչ՝ 230.0 հազ. դրամ արժեքով, ֆիզիոթերապևտիկ ապարատ Ռեֆտոն ՖՍ 01 /անհատական օգտագործման/ 350.0 հազ. դրամ արժեքով, գրասենյակային պահարաններ՝ 150.0 հազ. դրամ և «Շտիգեն» ընկերության կողմից արևային ջրատաքացուցիչ՝ 440.0 հազ. դրամ արժեքով:

«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՓԲԸ-ները սեփական միջոցներով ձեռք է բերել բժշկական սարքավորումներ՝ ընդամենը՝ 826.000 հազ. դրամ արժեքով:

«Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում կատարվել է ԷՍԳ սենյակի վերանորոգում՝ 200.0 հազ. դրամի չափով:

«Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով կատարվել են՝ ջեռուցման համակարգի ձեռք բերում և տեղադրում (նախագծում, շինանյութ, աշխատանքներ, գազաֆիկացման (գազամատակարարման վերականգնման) աշխատանքների կատարում, վարձատրություն), ընդամենը 2643,5 հազ. դրամ արժեքով:

«Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով կատարվել են կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվել սարքավորումներ 2179.6 հազ. դրամ, ձեռք է բերվել դյուրակիր համակարգիչ 418.0 հազ. դրամ արժեքով:

«Մարգահովիտի ԱԿ» ՊՈԱԿ-ը սեփական միջոցներով ձեռք է բերել Էլ. սրտագրիչ՝ 295,0 հազ. դրամ արժեքով:

«Գուգարքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք է բերվել 2 հատ համակարգչի մոնիտոր՝ 112,0 հազ. դրամ արժեքով:

«Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք է բերվել 1 նոթբուք՝ 166.0 հազ. դրամ արժեքով:

«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք են բերվել 4287.7 հազ. դրամի սարքավորում, 1470.1 հազ. դրամ արժեքով բարեգործական հիմունքներով տրամադրված գույք, սարքավորում, «Հայ ակնաբուժական նախագիծ» բարեգործական կազմակերպության կողմից տրվել է լազերային վիրահատությունների հավաքածու՝ 24230,2 հազ. դրամ արժեքով:

«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք են բերվել սարքավորում 1791.0 հազ. դրամ արժողությամբ, կատարվել են 375.0 հազ. դրամ արժեքով վերանորոգում, բարեգործական հիմունքներով տրամադրվել են 1354.8 հազ. դրամ արժեքով գույք, սարքավորում և վերանորոգման աշխատանքներ:

«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք են բերվել սարքավորում 1433.0 հազ. դրամ արժողությամբ, բարեգործական հիմունքներով տրամադրվել են 682.0 հազ. դրամ արժեքով գույք, սարքավորում:

«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ձեռք են բերվել սարքավորումներ՝ 30889.0 հազ. դրամ արժեքով, որից լիզինգով 30137,0 հազ. դրամ, սարքավորումների

վերանորոգում՝ 1019,0 հազ. դրամ արժեքով, շենքերի վերանորոգում՝ 514,0 հազ. դրամ արժեքով:

«Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք են բերվել 1378.0 հազ դրամ արժեքով սարքավորումներ և 368.0 հազ. դրամ արժեքով գույք:

«Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են Լոռի-Բերդի ԲՄԿ-ի ջեռուցման աշխատանքներ՝ 200,0 հազ. դրամ արժեքով:

«Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք են բերվել սարքավորումներ և կատարվել են վերանորոգման աշխատանքներ 109,5 հազ. դրամ արժեքով:

2018թ մարզի առողջապահական ընկերություններում սահմանված կարգով ապահովվել է բնակչության անվճար բուժօգնությունը, իրագործվել են պետական առողջապահական ծրագրեր: Մարզում գործող 5 ուղեգրող հանձնաժողովների կողմից տրամադրվել են շուրջ 123 ուղեգրեր՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված, սակայն անապահով վիճակում գտնվող անձանց բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Մարզից Երևան քաղաքի առողջապահական հաստատություններ են ուղղորդվել այն հիվանդները, որոնց բուժօգնությունը մարզում կազմակերպել հնարավոր չէր /տվյալ ծառայության բացակայություն կամ մասնագիտացված բուժօգնության կազմակերպում/:

«Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստեղծված մարզային ակնաբուժական կենտրոնում կատարվել են 791 վիրահատություններ, որից վճարովի սկզբունքով՝ 165 վիրահատություն, ՀԱՆ ծրագրով՝ 146 վիրահատություն, ՀՀ ԱՆ կուրության կանխարգելման ծրագրով՝ 130 վիրահատություն, հատուկ /առանձին/ և սոցիալական անապահով խմբերի անձանց՝ 350 վիրահատություն:

Մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների տնօրենների մրցույթները իրականացվում են գործող կարգի համաձայն /ՀՀ կառավարության 7 հուլիսի 2011թ. թիվ 992-Ն որոշում/: Կազմակերպվել և անց են կացվել «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» և «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ-ների տնօրենների թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթներ և նշանակվել տնօրեններ:

Կազմակերպվել և վերահսկվել է մարզի հարյուր տոկոս՝ պետության սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական ոլորտի բաժնետիրական ընկերությունների բժշկական անձնակազմի ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորման, մրցութի անցկացման օրինակելի կարգը և պայմանները /ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշում/:

2018թ. օգոստոսի 30-ի «Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն անհատույց տրամադրված շտապ օգնության ռեանիմոբիլները, շտապ օգնության գծային մեքենաները, դրանց օժանդակ սարքավորումները և պահեստամասերը նվիրաբերելու մասին» թիվ 970-Ա որոշմամբ՝ ՀՀ Լոռու մարզի 5 բժշկական կենտրոններին տրամադրվել է 10 շտապ օգնության գծային մեքենա և 5 շտապ օգնության ռեանիմոբիլ:

Համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի 24 մարտի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 285 - Ն որոշման «**Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա**», «Գուգարք կենտրոնական պոլիկլինիկա», «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» և «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերություններում

կատարվել են կառուցվածքային փոփոխություններ՝ ընկերությունների կազմում գործող գինեկոլոգիական կաբինետները տեղափոխվել «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն՝ ընկերության նոր մասնաշենք:

Կապված համայնքների խոշորացման հետ 2019թ. ևս նախատեսվում են օպտիմալացման աշխատանքներ:

Ոլորտում բնակչության առողջական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներ են հիվանդացությունը և մահացությունը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզում դեռևս բարձր են հիվանդացության մակարդակները: 2015-2018թթ. տվյալները, որը բերվում են ստորև, ցույց են տալիս, որ մարզում առկա է շաքարային դիաբետով, պարբերական հիվանդություններով հիվանդացության աճ, իսկ հոգեկան հիվանդությունների, նորագոյացություններով, սեռավարակների և տուբերկուլյոզի՝ նվազման միտում:

Հիվանդություններ	2015թ	2016թ	2017թ.	2018թ.
Շաքարային դիաբետ	4748	4906	5170	5965
Նորագոյացություններ	3497	3531	3656	3614
Հոգեկան հիվանդություններ	5062, այդ թվում 588-ը նարկոլոգ. կաբ./	5243, այդ թվում 604-ը նարկոլոգ. կաբ./	4841, այդ թվում 485-ը նարկոլոգ. կաբ./	4361, այդ թվում 487-ը նարկոլոգ. կաբ./
Սեռավարակներ	1312	1269	1128	1149
Պարբերական հիվանդություններ	502	478	515	526
Տուբերկուլոզ	368	372	334	312

MSF /բժիշկներ առանց սահմանի/ կազմակերպությունը շուրջ 9 տարի է զբաղվում է Լոռու մարզի դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների բուժմամբ: 2017թ.սկսվել է նաև դեղորայքակայուն տուբերկուլոզով՝ համակցված հեպատիտ C-ի հետ, հիվանդների բուժում և պրոֆիլակտիկա: Արդյունքում արձանագրվել է տուբերկուլոզի կայուն ձևերով հիվանդների թվի նվազեցում: 2018թ. նոյեմբեր ամիսին MSF /բժիշկներ առանց սահմանի/ կազմակերպությունը դադարեցրել է իր գործունեությունը, տվյալ աշխատանքը իրականացրել են տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետները՝ տուբերկուլոզի ազգային կենտրոնի հետ համատեղ:

Լոռու մարզում հաշվառված և ծրագրային հեմոդիալիզական բուժում են ստանում 65 հիվանդներ:

2018թ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվել է մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական ընկերություններում բնակչության անվճար բուժօգնությունը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի առողջապահական ընկերություններում անվճար հիվանդանոցային բուժօգնություն է ստացել 14825 հիվանդ, համավճարով՝ 589 հիվանդ:

ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով ՀՀ առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնից մարզի համար ձեռք է բերվել մարդասիրական օգնության ճանապարհով մարզին հատկացված 203 մլն 658 հազ. 850 դրամ արժեքով և կենտրոնացված գնումների միջոցով ձեռք բերված 130 մլն 145 հազ. 195 դրամ արժեքով դեղորայք: Մետադոնային ծրագրով հատկացվել է 2 մլն 870 հազ. 600 դրամ արժեքով դեղորայք:

ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ վարչությունը իրականացրել է նաև հատուկ /առանձին/ և սոցիալական անապահով խմբերի քաղաքացիներին հանրապետության առողջարաններ ուղեգրման գործընթացը: 2018թ. «Գանձաղյուր» առողջարան են ուղեգրվել 20, «ԱՍԱՐ» առողջարան՝ 5 քաղաքացիներ, իսկ «Արարատ» մոր և մանկան առողջարան՝ մինչև 18 տարեկան 9 երեխա և 8 խնամող:

Ձորակոչային և նախագորակոչային աշխատանքները մարզում ապահովում են 5 տարածաշրջանային և 1 ստացիոնար /վիրաբուժական և թերապևտիկ պրոֆիլ/ բժշկական հանձնաժողովները:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 27-ի No 983-Ա և ՀՀ պաշտպանության նախարարի 2017 թվականի ապրիլի 25-ի No 2-Ա «Հայաստանի Հանրապետությունում զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացման մասին» համատեղ հրամանի Լոռու մարզում նախագորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացը իրականացվել է համապատասխան ԱԱՊ հաստատության կողմից՝ ըստ Պատվաստումների ազգային օրացույցի:

Շարունակական բնույթ է կրել բժշկական անձնակազմի վերապատրաստման գործընթացը: Հայաստանի ամերիկյան համալսարանի մասնագետների կողմից կազմակերպվել են «Բուժօգնության որակի բարելավում» 2-օրյա դասընթացներ մարզի հիվանդանոցային ծառայություն իրականացնող բժշկական հաստատությունների բժիշկների համար՝ 80 մասնակից:

«Երազ» բարեգործական հիմնադրամի կողմից առաջին տիպի դիաբետով հիվանդ երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված՝ «Ունեմ դիաբետ, չունեմ խնդիր» ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի հանրակրթական դպրոցներին կցված դպրոցական բուժքույրերի (թվով 109) 3-օրյա վերապատրաստման դասընթացների կազմակերպում: Նույն ծրագրի շրջանակներում 1 մանկաբույժի 1-շաբաթյա վերապատրաստում ԵՊԲՀ-ի «Մուրացան» հիվանդանոցային համալիրի մանկական էնդոկրինոլոգիական կենտրոնում:

ՌԴ Մոսկվա քաղաքում «Անհետաձգելի բուժօգնության հիմնական սկզբունքները մանկաբուժությունում» թեմայով գիտագործնական դասընթացներին Լոռու մարզից մասնակցել են 1 մանկական անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, «Անհետաձգելի բուժօգնություն մանկաբուժությունում» թեմայով՝ 1 նեոնատոլոգ, 1 անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգի և 1 մանկաբույժ:

ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N34 արձանագրային որոշմամբ հաստատված «Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրի» 29-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերով, 33-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետերի համաձայն՝ ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2018թ-ի գործողությունների համատեղ ծրագրի շրջանակներում զարգացման խանգարումներով երեխաների վաղ հայտնաբերման, հաշմանդամ երեխաներին սպասարկող ծառայությունների ցանցի ընդլայնման, համայնքային ինտեգրացված ծառայությունների մոդելի ներդրման, տնային այցերի առկա համակարգի ուժեղացման, մայրերի հետ տարվող աշխատանքի բարելավման նպատակով ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի հունիսի 19-ի թիվ 1522-Ա հրամանով ԱԱՊ օղակի բուժաշխատողների համար կազմակերպվել են «Վաղ տարիքի երեխաների պատրոնաժ խնամք/պրոգրեսիվ խնամք» թեմայով 5-օրյա դասընթացներ երեխաների առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններում աշխատող մանկաբույժների/ընտանեկան բժիշկների և բուժքույրերի համար: Ուսուցում են ստացել 120 բուժաշխատող:

ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2018թ-ի գործողությունների համատեղ ծրագրի շրջանակներում 03-04.09.2018թ. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում կազմակերպվել է «Անհաս և հիվանդ նորածինների խնամքի հիմունքներ» թեմայով երկօրյա դասընթացներ ծննդօգնության ծառայություն իրականացնող բուժքույրերի համար (մասնակցել են 15 բուժքույր):

ՀՀ Լոռու մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների (առողջության առաջնային պահպանման օղակի) երեխաների հսկողություն իրականացնող բուժաշխատողների՝ մանկաբույժների և պատրոնաժ բուժքույրերի և սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) սոցիալական աշխատողների համար

«Թերսնուցման վաղ հայտնաբերում» թեմայով երկօրյա վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

«Վորլդ Վիժն Հայաստան»-ի Լոռու մարզային կառույցի կողմից 2018թ ընթացքում մարզում իրականացրել է առողջապահական հետևյալ միջոցառումները՝ Աջակցող - վերահսկող այցեր բուժ հաստատություններ, բժիշկների և բուժքույրերի վերապատրաստումներ՝ որի ժամանակ ստացել են կրեդիտներ, ծնողական կենտրոնների պատասխանատուների փորձի փոխանակման այցեր, բուժ հաստատությունների կողմից տրված ուղեգրումների վերլուծություններ, դրական ծնողավարման դասընթացներ ծնողների/խնամողների համար՝ Առողջապահական ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է մոտավորապես 18,000 դրլարին համարժեք դրամ:

2018թ. մարզում արձանագրվել են մանկական մահացության հետևյալ ցուցանիշները. 14 մեռելաձին դեպք, 0-1 տարեկան երեխայի 2 հիվանդանոցային (այդ թվում պերինատալ մահացության (0-7 օրեկան երեխայի) 0 դեպք), և 0 տնային մահ, 1-5 տարեկան երեխայի 5 հիվանդանոցային և 0 տնային մահ/ :

Լոռու մարզ	մանկական մահացություն /պրոմիլե/	պերինատալ մահացություն /պրոմիլե/
2015թ	8.2	13.3
2016թ	5.8	9.2
2017թ	5.6	9.7
2018թ	5.9	5.9

2015-2018թթ. Լոռու մարզում ծնելիության, մահացության և բնական աճի ցուցանիշներ

Լոռու մարզ		Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
2015	բացարձակ թիվ	2931	2777	0.6 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.1	10.5	
2016	բացարձակ թիվ	2856	2760	0.4 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.7	12.3	
2017	բացարձակ թիվ	2689	2630	0.3 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.2	11.9	
2018	բացարձակ թիվ	2361	2473	-0.5 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	10.9	11.4	

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության 27.06.2008թ. «Ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման գործընթացի մոնիթորինգի մասին» թիվ 927-Ա հրամանի ըստ պահանջվող ձևի յուրաքանչյուր ամիս ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացվել Լոռու մարզի բուժհաստատություններից հավաքագրվող տվյալներ ծնունդների վերաբերյալ:

Ուսումնասիրվել են Լոռու մարզի բուժկանխարգելիչ հաստատությունների հաստիքացուցակների և մատուցվող վճարովի ծառայությունների գները, կատարվել են համապատասխան փոփոխություններ և հաստատվել:

Կանոնակարգվել է Լոռու մարզի բուժկանխարգելիչ հաստատությունների տարեկան վիճակագրական հաշվետվությունների նախնական ստուգման և 2019թ. մարզի պետական պատվեր հավակնող մարզային և համայնքային ենթակայության, ինչպես նաև մասնավոր առողջապահական ընկերությունների բժշկական օգնության և սպասարկման պետական

պատվերի տեղադրման հայտերի նախնական վերլուծություն, գործող կարգին համապատասխանություն, այնուհետև ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնելու գործընթացը:

Մարզի գլխավոր մասնագետները կատարել են ուսումնասիրություններ՝ ցուցաբերելով մեթոդական աջակցություն, տարածաշրջանային առողջապահական ընկերություններում, վեր են հանել առկա բացթողումները և թերությունները: Կազմակերպվել է խորհրդակցություններ՝ հանձնարարվել է առողջապահական ընկերությունների տնօրեններին շտկել տեղ գտած թերությունները հետագայում դրանք բացառելու նպատակով:

2018թ. բուժաշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպվել և նշվել է մարզային նշանակության ամենամյա միջոցառում «Լավագույն բուժաշխատող» անվանակարգով: Մարզպետի կողմից ընտրվել և շնորհակալագրերով պարգևատրվել են վեց լավագույն մասնագետներ:

Համաձայն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի որոշմամբ «Լոռու մարզային հոգեկայրադարձական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում երկու անձ իրականացնում է այլընտրանքային ծառայություն:

«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպվել է կոնֆերանսներ, որին մասնակցել են մարզի բոլոր ակնաբույժները էնդոկրինոլոգները և ընտանեկան բժիշկները:

«Սանոֆի-Ավենտիս Գրուպ» կազմակերպության կողմից մարզում ԱԱՊ օդակի բժիշկների և բուժքույրերի համար կազմակերպվել է դասընթաց՝ հոգեկան առողջության խնդիրների վաղ հայտնաբերման և բուժման թեմայով:

Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից 2011թ. տրամադրվեց շարժական ստոմատոլոգիական կլինիկա, որի միջոցով անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում կստանա մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի ողջ ազգաբնակչությունը: Շարժական կլինիկան հերթականությամբ կայանվում է մարզի բոլոր պոլիկլինիկաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում և ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմի մեջ գտնվող բուժակ մանկաբարձական կետերի սպասարկման տարածքի ազգաբնակչությանը: Շարժական կլինիկան վերջացնելով Մարզահովիտ, Գուգարք, Դսեղ, Լեռնապատ, Գարգառ, Գյուլագարակ, Փամբակ, Շահումյան, Վարդաբլուր, Դարբաս, Կուրթան, Արչուտ, համայնքների ազգաբնակչության և Վանաձոր համայնքի Տարոն 4 թաղամասի խնամքի կենտրոնի շահառուների ստոմատոլոգիական սպասարկումը՝ սպասարկելով ընդհանուր հաշվով 2520 մարդ:

Հունական Բժշկական «Հիպոկրատ» հիմնադրամի և Ամքոր կազմակերպության հետ միասին Օձունի ենթաշրջանի գյուղերում կատարվել է «Համայնքային վերարտադրողական առողջության բարելավում իրազեկման և բուժսպասարկման միջոցով» ծրագիր: Կատարվել է 48 այց 5 գյուղեր՝ Օձուն, Ամոջ, Հազվի, Արդվի, Այգեհատ: ԾԲԹ-ում ընդգրկված էին հետևյալ մասնագետներ. էնդոկրինոլոգ, մամոլոգ և սոնոգրաֆիստ: Շահառուների թիվը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 871 վերարտադրողական տարիքի կանայք:

Մարզի տարածքում գործում են բուժական տարբեր թեքումներով հետևյալ կենտրոնները՝ 1. Վանաձորում «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական ատամնաբուժական և ակնաբուժական կենտրոնը սպասարկում է մանկական ազգաբնակչությանը:

Ակնաբուժական ծառայություն՝ տարվա ընթացքում ընդունել է շուրջ 6000 երեխա, անվճար տրվել է ակնոցներ, իրականացվել է ապարատային բուժում, ատամնաբուժական ծառայություն՝ տարվա ընթացքում ընդունել է շուրջ 10000 երեխա:

2. Սպիտակում՝ Ավետարանչական եկեղեցու հովանավորությամբ գործող «Հույս Հայաստանին» և «Ֆրանսահայ միության» մանկական բժշկական կենտրոնները, /հատկացվում է անվճար դեղորայք/:

Լոռու մարզ գործուղված, ինչպես նաև ոչ տեղաբնակ նոր նշանակված բժիշկ-մասնագետների բնակարանային կարիքները լուծելու հարցում ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն /«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 2 և «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում աշխատանքի են ընդունվել 1 սիրիահայ բժիշկներ/:

ՀՀ Լոռու մարզ հրավիրված երիտասարդ բժիշկներին ևս ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն:


Թարմացվել են առողջապահական ընկերությունների ինտերնետային կայք-էջերը, որտեղ արտացոլված են ընկերությունների ողջ գործունեությունն ու աշխատանքի ծավալը:

Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործում է /0322/ 2-33-99 հեռախոսահամարով թեժ՝ ազգաբնակչության կողմից բարձրացված հարցերին արագ արձագանքելու նպատակով: Թեժ գծի աշխատանքի արդյունքում նաև վեր են հանվում համակարգում առկա թերություններ, բացթողումներ: Արձանագրվել է 117 զանգ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. ռազմավարության մեջ համալիր կերպով ներկայացվել է սոցիալական ապահովության բնագավառը, որտեղ կարևորվում են բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը, իրազեկության բարձրացումը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և հատուկ կարիքներ ունեցող երեխաների հիմնախնդիրների լուծումը:

Մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները (ՍԱՏՄ-ներ) նկատելի աշխատանք են տարել Կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման գործում՝ անապահովության գնահատման համակարգի միջոցով: ՍԱՏՄ-ների կողմից յուրաքանչյուր ամիս թարմացվել են տեղեկատվական շտեմարանները, որը կարևոր հանգամանք է անապահով խմբերին ուղղված միջոցների հասցեականությունը առավել հստակեցման գործում: Մարզպետարանի կողմից իրականացվել են ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման հաշվետվությունների հավաքումն ու ամփոփումը, ինչպես նաև այդ տվյալների ամենամսյա վերլուծությունը:



2018թ. ընթացքում ՍԱՏՄ-ները փաստագրել են 20.296 ընտանիք, որից՝ նպաստառու 16.104 (կանխատեսվել էր 22.754-ը, որից՝ նպաստառու 18.379), նրանցից նպաստի իրավունքը պահպանել են 14.340-ը, իրավունքը կորցրել՝ 4.921 ընտանիք (որոնցից՝ 316-ը փաստագրման, 2.424-ը չփաստագրման, իսկ 2.181-ը՝ ՍԱՏՄ-ների ուսումնասիրության արդյունքում): Նոր

նպաստառու են դարձել 2.835 ընտանիքներ: 01.01.2019թ. դրությամբ նպաստառու են ամսական միջինացված 17.571 ընտանիք:

Մարզի ՍԱՏՄ-ները իրենց աշխատանքներն իրականացրել են պետության կողմից տրամադրված միջոցների սահմաններում: 2018թ. ընթացքում մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները տնտեսել են շուրջ 983.89 մլն դրամ:

Մարզում 2018թ. ընթացքում ՍԱՏՄ-ների կողմից վճարվել է ավելի քան 5 մլրդ 844 մլն դրամ պետական նպաստներ /ներառյալ՝ հրատապ օգնությունները/, այդ թվում՝ վճարվել է շուրջ 5.56 մլրդ դրամ ընտանեկան նպաստ /ներառյալ՝ սոցիալականը/ և հրատապ օգնություն՝ շուրջ 285 մլն դրամ:

Նպաստառու ընտանիքի 744 երեխայի համար վճարվել է կրկնակի չափով ծննդյան նպաստ՝ 38.0 մլն դրամ/, առաջին դասարան հաճախող 1.419 երեխայի համար վճարվել է միանվագ օգնություն՝ 33.875 մլն դրամ, 20 ընտանիքներում մահացած անդամի համար՝ 1.0 մլն դրամ, հրատապ օգնություն է վճարվել ավելի քան 212.0 մլն դրամ /միջին հաշվով յուրաքանչյուր ամիս 894 ընտանիքների/:

Ամբողջական վճարումների պատկերը, ըստ տարածաշրջանների.

Պետական նպաստների մասով՝

/մլն

դրամ/

Բնութագրիչներ		Վանաձոր		Սպիտակ		Ստեփանավան		Թումանյան		Տաշիր	
		Ընտ./ անձ /միջ./	Գումար	Ընտ./ անձ /միջ./	Գումար	Ընտ./ անձ /միջ./	Գումար	Ընտ./ անձ /միջ./	Գումար	Ընտ./ անձ /միջ./	Գումար
Ընտանեկան նպաստ	Ցուցա կային	4000	1470.48	3161	1168.1	3321	1145.75	1123	440.99	1044	397.71
	Վճարվ ած	3895	1439.4 1	3096	1134.75	3252	1120.85	1097	428.18	1024	386.91
Սոցիալական նպաստ	Ցուցա կային	2136	477.0	926	206.54	834	185.36	663	148.09	362	81.96
	Վճարվ ած	2162 2066	454.15	892	197.38	812	178.9	643	141.82	345	76.83
Ընդամենը՝	Ցուցա կային	6136	1947.48	4088	1374.6 4	4156	1331.11	1787	589.07	1405	479.67
	Վճարվ ած	5961	1893.56	3988	1332.12	4064	1299.75	1740	570.0	1369	463.75

Հրատապ օգնությունների մասով՝

/մլն դրամ/

Բնութագրիչներ		Վանաձոր		Սպիտակ		Ստեփանավան		Թումանյան		Տաշիր	
		Ընտ./ անձ /միջ./	Գումար	Ընտ./ անձ /միջ./	Գու- մար	Ընտ./ անձ /միջ./	Գու- մար	Ընտ./ անձ /միջ./	Գու- մար	Ընտ./ անձ /միջ./	Գու- մար
Երեխայի ծննդյան միանվագ օգնություն /50.000դր./	Ցուցա կային	199	9.95	281	14.05	151	7.6	60	3.0	56	3.55
	Վճար ված	197	9.85	281	14.05	151	7.6	59	2.95	56	3.55
Երեխայի առա- ջին դասարան հաճախման միանվագ օգնություն /25.000դր./	Ցուցա կային	493	12.325	361	9.025	244	6.1	205	3.5	120	3.03
	Վճար ված	489	12.225	361	9.025	244	6.1	205	3.5	120	3.03
Ընտանիքի անդամի մահ- վան դեպքում /50.000դր./	Ցուցա կային	8	0.4	6	0.3	3	0.15	2	0.1	2	0.1
	Վճար ված	8	0.4	6	0.3	3	0.15	2	0.1	1	0.05
Եռամսյակային հրատապ	Ցուցա կային	312	68.24	219	65.5	225	49.56	90	19.66	71	17.12

օգնություն /18.000 դր./ միջին.	Վճար ված	306	66.46	212	62.33	220	48.02	88	19.22	68	16.04
Ընդամենը վճարված			88.93		85.71		61.87		25.77		22.66

2018թ. մարզում սահմանված ժամկետներում վճարվել են պետական նպաստները և հրատապ դրամական օգնությունները:

2018թ.՝ 2017թ. համեմատությամբ նվազել են նպաստառու ընտանիքների թիվը /միջինը 19.443-ից՝ 17.571. նվազումը՝ 1.872/ և կատարված վճարումները /6.422 մլրդ դրամից՝ 5.844 մլրդ դրամ. նվազումը՝ 0.578 մլն դրամ/:

Համաձայն ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2018թ. ՀՀ Լոռու մարզում ծննդյան պետական նպաստ է տրվել 2.921 երեխայի /2017թ.՝ 3.072, 2016թ.՝ 2.964, 2015թ.՝ 3.774/ համար:

Ստորև, ըստ ծնված երեխաների հերթական կարգաթվի, ներկայացվում է համառոտ տեղեկատվությունը /2015-2018թթ.՝ համեմատականով/.

Տարածա- շրջանը		Երեխաների թիվը	Նպաստների թվաքանակը՝ ըստ երեխայի հերթական կարգաթվի				
			Առաջին երեխա	2-րդ երեխա	3-րդ երեխա	4-րդ երեխա	5-րդ և հաջորդ երեխա
Վանաձոր	2015թ.	1.613	718	636	217	32	10
	2016թ.	1.318	573	501	199	27	18
	2017թ.	1.367	1019	107	191	35	15
	2018թ.	1.235	796	189	210	27	13
Սպիտակ	2015թ.	737	342	268	114	10	3
	2016թ.	537	206	222	84	19	6
	2017թ.	564	425	30	85	16	8
	2018թ.	531	343	70	102	11	5
Ստեփանավան	2015թ.	425	200	137	71	13	4
	2016թ.	354	150	132	61	10	1
	2017թ.	341	234	24	67	10	6
	2018թ.	365	227	51	60	19	8
Թումանյան	2015թ.	653	274	242	116	17	4
	2016թ.	515	205	180	110	13	7
	2017թ.	521	366	42	98	13	2
	2018թ.	544	373	44	107	13	7
Տաշիր	2015թ.	346	164	132	38	9	3
	2016թ.	240	81	99	56	3	1
	2017թ.	379	197	20	51	8	3
	2018թ.	246	142	28	61	12	3
Ամբողջը՝	2015թ.	3.774	1.698	1.415	556	81	24
	2016թ.	2.964	1.215	1.134	510	72	33
	2017թ.	3.072	2.241	223	492	82	34
	2018թ.	2.921	1.881	382	540	82	36

Վերլուծելով տվյալները փաստում ենք, որ տարեցտարի ավելանում են ընտանիքում 5-րդ և ավելի երեխաների ծնունդները, իսկ 2018թ. մեծացել է ընտանիքում 2-րդ և 3-րդ երեխաներ ծնվելու իրողությունը:

ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից ստացված տվյալների /հարակից բազաներ/ համադրումները համակարգված ձևով է իրականացվում, իսկ հաշվետվային գործընթացը իրականացվում է մարզպետարանի կողմից թվային, իսկ մարզի ՍԱՏՄ-ների կողմից՝ անհատական տվյալների ներկայացմամբ և տեղեկատվական շտեմարանների փոխանակմամբ (աշխատավարձ, մաքսային, անհատ ձեռնարկատիրական, անշարժ գույքի և անձնական ավտոմեքենայի առկայություն, էլեկտրաէներգիա, մինչև 2 տարեկան երեխայի խնամք, կենսաթոշակային, հաշմանդամության և զբաղվածության տվյալներ և այլն): Նկատելի աշխատանքներ են տարվել համադրման արդյունքում քաղաքացիներին ավելի վճարված գումարների ետգանձման ուղղությամբ:

2018թ. ընթացքում մարզի սոցիալական ծառայությունները սխալ տեղեկություններ ներկայացրած քաղաքացիներից ետ են գանձել շուրջ 10.85 մլն դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2018թ. ընթացքում, ըստ մարզի ՍԱՏՄ-ների, ավելի վճարված նպաստների հետգանձման վերաբերյալ տեղեկատվություն, գործընթացը անընդհատ և շարունակական է՝

	Հետգանձման ենթակա	Փաստացի ետ է գանձվել 2018թ. ընթացքում /ՍԱՏՄ, ԴԱՀԿ, դատարան/	Սոցիալական աջակցության խորհուրդների և դատական ատյանի կողմից մարված	/մլն դրամ/ Մնացորդը՝ 01.01.2019թ. դրությամբ
Վանաձորի ՍԱՏՄ	15.37	3.87	0.82	10.68
Սպիտակի ՍԱՏՄ	3.44	1.59	0.11	1.74
Ստեփանավանի ՍԱՏՄ	1.38	0.93	0.42	0.02
Թումանյանի ՍԱՏՄ	3.43	2.18	0.54	0.71
Տաշիրի ՍԱՏՄ	3.73	2.28	0.26	1.19
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	27.2	10.85	2.16	14.35

Շարունակվել է վերահսկվել մարզի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից քաղաքացիներին տարբեր կազմակերպություններ /այդ թվում՝ հանրապետության բժշկական հաստատություններ, կրթական, կոմունալ և այլն/ ներկայացվող տեղեկանքների տրամադրման գործընթացը:

2018թ. ընթացքում մարզի ՍԱՏՄ-ների կողմից տրամադրվել են 7.273 տեղեկանքներ /2017թ.՝ 12.845, 2016թ.՝ 9.110, 2015թ.՝ 8.588 տեղեկանք, /, պատկերը, ըստ տրամադրված տեղեկանքների տեսակների, հետևյալն է.

Տեղեկանքների բնույթը և տրամադրող մարմինը	Վանաձորի ՍԱՏՄ	Սպիտակի ՍԱՏՄ	Ստեփանավանի ՍԱՏՄ	Թումանյանի ՍԱՏՄ	Տաշիրի ՍԱՏՄ	Լոռու մարզ
Ա /անձնագրային ծառայություն	499	82	240	22	1	844
Բ /բժշկական ընկերություններ	2.125	704	873	520	301	4.523
Գ /գիտա - կրթական հաստատություններ	883	181	144	64	69	1341
Դ /այլ ծառայություններ/	250	196	67	3	22	565
Ամբողջը՝	3.757	1.163	1.324	636	393	7.273

Մարզի ՍԱՏՄ-ների կողմից շարունակվել են ավանդի դիմաց տրվող փոխհատուցման գործընթացը: **2018թ. ընթացքում փոխհատուցվել է 391 անձ՝ ավելի քան 83.15 մլն դրամի չափով** /2017թ. փոխհատուցվել էր 263 անձ՝ ավելի քան 55.107 մլն դրամի չափով/:


2007-2018թթ. ընթացքում փոխհատուցվել են 16.350 քաղաքացիներ՝ ավելի քան 2 մլրդ 886.2 մլն դրամ:

Մարզպետարանի կողմից համակարգվել են ընտանեկան նպաստի գործունեությունը կանոնակարգող անհրաժեշտ օրենսդրական և մեթոդական հրահանգների ՍԱՏԳ-ներին տրամադրման աշխատանքները:

Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի մասնագետները տարվա ընթացքում իրավական և մասնագիտական /նախկինում՝ վարչական/ հսկողություն են իրականացրել թվով 10՝ Վանաձոր, Ախթալա, Գուգարք, Արևաշող, Լեռնանցք, Կաթնաջուր, Լեռնավան, Գյուլագարակ, Օձուն և Սարչապետ համայնքներում՝ ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից առաջարկված հարցաշարի հիման վրա:

Կենսաթոշակային ապահովություն

ՀՀ ԱՍՀՆ-ի սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) կողմից տրամադրվել է Լոռու մարզի առ 01.01.2019թ. կենսաթոշակառուների տեղեկատվական թվային բազան:




ՀՀ Լոռու մարզում կենսաթոշակ են ստանում 49.579 մարդ, հաշմանդամություն ունեն 16.268-ը՝ որից մանկուց հաշմանդամություն ունեն 664 երեխա, ծնողազուրկ են 2.153 երեխա:

Մարզում սահմանված ժամկետներում վճարվել են 2018թ. բոլոր ամիսների կենսաթոշակները:

Աշխատաշուկա և զբաղվածություն

2018թ. Լոռու մարզում շարունակվել է ակտիվ աշխատաշուկայի ստեղծման և զբաղվածության խթանման քաղաքականությունը: Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններից ստացված տվյալների հիման վրա պատկերը հետևյալն է. **առ 01.01.2018**



Գործազուրկների թիվը կազմում է առ 01.01.2019թ. դրությամբ՝ 9010 մարդ / նախորդ ժամանակահատվածում՝ 9065 մարդ/, որից՝ 6328-ը կանայք են (Վանաձոր՝ 4403/3016-ը կին, Ալավերդի 886/618, Ստեփանավան՝ 2193/1631, Սպիտակ՝ 1245/842, Տաշիր՝ 283/221): Քանի որ պետական ծրագրերը ավելի պահանջարկված ու նպատակամետ են, այդ պատճառով էլ նկատելիորեն բարձրացել է գործազուրկների ակտիվությունը տվյալ ծրագրերում ընդգրկվելու նախաձեռնողականությունը:

Աշխատանք փնտրողների թիվը 01.01.2019թ. կազմել է 9496 մարդ, նախորդ ժամանակահատվածում՝ 9526 մարդ /Վանաձոր՝ 4514, Ալավերդի՝ 1108, Սպիտակ՝ 1293, Ստեփանավան՝ 2255, Տաշիր՝ 326/: Նրանցից աշխատանքի է տեղավորվել 1080 մարդ, որից՝ 740 կին (Վանաձոր՝ 473 /որից՝ 174՝ կին/, Ալավերդի՝ 93 /որից՝ 58 կին/, Ստեփանավան՝ 298 /որից՝ 183 կին/, Սպիտակ 168 /որից՝ 116 կին/, Տաշիր՝ 48 /որից՝ 40 կին/):

Զբաղվածության ամենամյա ծրագրերով աշխատանքի է ընդունվել 196 մարդ /Վանաձոր՝ 105, Ալավերդի՝ 16, Սպիտակ՝ 36, Ստեփանավան՝ 30, Տաշիր՝ 9/:

2018թ. մարզում վարձատրվող հասարակական աշխատանքներ և գյուղական բնակավայրերի բնակչության շրջանում՝ աշխատաշուկայում աշխատաշուկայում անմրցունակ, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց ներգրավմամբ սեզոնային զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրեր չեն իրականացվել:

Զբաղվածության պետական գործակալության կողմից Վանաձորում 27.09.2018թ. անցկացվեց «Աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցություն ունեցան 36 գործատուներ, առաջարկվեց 555 /344 առկա և 211 սպասվելիք/ թափուր աշխատատեղեր, որից՝ 94-ը, Վանաձորի ՋՏԿ-ի երկամսյա ուսումնասիրության արդյունքում, լրացվել է:

Աշխատատեղերի պահանջարկը հիմնականում սպասարկման բնագավառից են /մատուցող, խոհարար, բարմեն, վարորդ, մեքենաների տեխսպասարկման մասնագետ, կաթի վերամշակման բնագավառի մասնագետ՝ պանրագործ, բժիշկ, գյուղական համայնքներում՝ մանկավարժ և այլն:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ համայնքների հետ համագործակցային եռամյա՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» (LIFE՝ Կյանք) ծրագրի աջակցությամբ համայնքի ենթակայության ներքո Վանաձորում կազմավորված բարեկարգման հարցերով և համայնքային գույքի պահպանման և սանմաքրման աշխատանքներով զբաղվող «Նեցուկ» ՀՈԱԿ-ում և Սպիտակում՝ ջերմոցային տնտեսությունում աշխատում են 14-ական հաշմանդամություն ունեցող անձինք: Վանաձորում գործող «Էթրիկոտ» ընկերությունում աշխատում են 15 հաշմանդամություն ունեցող անձ /որից՝ հուշանվերների արտադրությունում՝ 10, իսկ արծաթյա զարդերի արտադրությունում՝ 5/:

Աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցներին

Մարզի բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից 2018թ. հաշմանդամություն ունեցող անձանց համար լրացվել են 7.836 ՎԱԾ (վերականգնողական անհատական ծրագրեր, իսկ 2017թ.՝ 10.067), որից՝

Ըստ տարածաշրջանների և բնութագրիչների	Վերականգնողական անհատական ծրագրեր			
	Ամբողջը, որից՝	մասնագիտական	բժշկական	սոցիալական
Վանաձոր և Գուգարքի տարածաշրջան	4.667	1.392	1.638	1.637
Սպիտակ և Սպիտակի տարածաշրջան	998	917	69	12
Ստեփանավան և Ստեփանավանի տարածաշրջան	320	269	37	14
Ալավերդի և Թումանյանի տարածաշրջան	1.755	517	625	613
Տաշիր և Տաշիրի տարածաշրջան	96	79	16	1

Ամբողջը /2018թ./¹	7.836	3.174	2.385	2.277
Ամբողջը /2017թ./ ¹	10.067	4.310	2.898	2.859

2018 թվականի ընթացքում ՀՀ Լոռու մարզի հաշմանդամություն և սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց տրամադրված պրոթեզաօրթպեդիկ և վերականգնողական պարագաների բաշխումը իրականացվել է ՀՀ ԱՍՀՆ-ի հետ համագործակցված:

Պատկերը հետևյալն է.

Պարագայի տեսակը/ Քանակը	ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	
	2017թ.	2018թ.
Հաշմանդամի սայլակի ձեռքբերման պետական հավաստագիր	22	36
Լսողական սարքի ձեռքբերման պետական հավաստագիր	38	75
Լսողական սարքի ներդիր	44	2
Հենակներ	81	62
Քայլակ	11	14
Ձեռնափայտ	24	37
Պրոթեզի կոշիկներ	185	183
Կրծքագեղձի պրոթեզ	29	41
Ակնագնդի պրոթեզ	12	14
Ձայնաստեղծ սարք և ձայնաստեղծ պրոթեզ	8	13
Վերին և ստորին վերջույթի պրոթեզներ, մոդուլյար պրոթեզներ, բուժամարզական պրոթեզներ, բաշմակներ, օրթոպեդիկ կոշիկներ	95	150
Օրթեզներ	19	16
Սեղմիրան/Կորսեթ	12	2
Բանդաժներ/աղեկապ/	3	0
Սուպինատոր	3	7
Ամբողջը¹	586	652

Հաշմանդամություն ունեցող անձանց համակողմանի աջակցությունը շարունակում է մնալ մարզպետարանի առաջնահերթ գործառույթներից մեկը: Մարզպետարանը սերտ համագործակցային աշխատանք է իրականացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, գործընթացում ներգրավելով մարզի ակտիվ կառույցներին, մասնավորապես՝ հաշմանդամների վերականգնողական պարագաներով ապահովելու ուղղությամբ առանձնանում են «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը, «Լիարժեք կյանք», «Սպիտակ բազե» և «Երիտասարդական ալիք» ՀԿ-ները՝ աջակցություն ստանալով երևանյան «Սատար» հաշմանդամների հարցերով զբաղվող ՀԿ-ից /վերջինս զբաղվում է նաև հաշմանդամային գույքի արտադրությամբ/:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու ուղղությամբ աշխատանքները դեռևս բավարար չեն /մասնավորապես՝ թեքահարթակների կառուցման/ աշխատանքները, թեև առկա է նպաստավոր օրենսդրական դաշտ, սակայն պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն, շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար մուտքի մատչելիության ապահովումը դեռևս հիմնախնդիր է մնում:

Մարզի համայնքապետարաններում և խոշորացված համայնքների վարչական ղեկավարների նստավայրերում /թվով 113/ առկա են թեքահարթակներ 35-ում, 36-ը մատչելի է շինարարական տեսակետից անվասայլակ օգտագործող մարդկանց համար, իսկ 42-ում խնդիրն առկա է:

Մարզի 163 կրթական հաստատություններից 104-ում առկա է թեքահարթակ, շինարարական տեսակետից մատչելի են 33-ը, իսկ 26 դպրոցում դեռևս թեքահարթակ չկա: Այդ պատճառաբանվում է մատչելի մուտք ունենալով կամ շահառուների և անհրաժեշտության բացակայությամբ:

Կրթական հաստատություններից տարբերակվում է Վանաձորի թիվ 18 հիմնական դպրոցը՝ բոլոր չափորոշիչներին համապատասխան մատչելի միջավայրի ապահովմամբ /թեքահարթակներ, վերելակ և այլն/, իսկ Վանաձորի թիվ 16 դպրոցում վերակառուցվել է սանհանգույցը:

Դերետ համայնքում գործում է «Սմարթ» կենտրոնը, որն ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման միջազգային չափանիշներով սահմանված անհրաժեշտ պայմաններով:

Մարզի իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող 31 առողջապահական ընկերություններից 28-ում առկա են թեքահարթակներ, շինարարական տեսակետից մատչելի են 3-ը: Նույն ընկերությունների կազմում գործող շուրջ 90 բուժակ-մանկաբարձական կետերից 12-ում կառուցված են թեքահարթակներ, իսկ մնացածը կարելի է մատչելի համարել, քանի որ տեղակայված են հիմնականում միահարկ շինություններում:

2018թ. շահագործման է հանձնվել Վանաձորի բժշկական կենտրոնը, որտեղ պահպանված են հաշմանդամություն ունեցող անձանց համար իրավական ակտերով սահմանված շինությունների մատչելիության պայմանները:

«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն վերանորոգումից հետո նոր մակարդակի մատչելիություն է ապահովել /ստացիոնարում տեղադրված 86 է վերելակ/:

Մարզպետարանի պատվիրատվությամբ նախագծվող և կառուցվող բոլոր շինություններում նույնպես հատուկ ուշադրություն է դարձվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պահպանմանը:

Հանձնաժողովը 2018թ. ընթացքում հրավիրել է 6 նիստ /07.02.2018թ., 18.04.2018թ., 15.06.2018թ., 17.07.2018թ., 14.11.2018թ., 22.12.2018թ./, **որից՝ 1-ը արտագնա** /«Օրբան» կազմակերպության Վանաձորի «Գրիգորյան կենտրոնում»/ օրակարգային 29 հարցերով: Հանձնաժողովի նիստերը եղել են ընդլայնված, դոնբաց և լուսաբանվել են ՀԼՄ-ներով /մամուլ, հեռուստաընկերություն/, իսկ Լոռու մարզային հանձնաժողովի գործունեության մասին առկա բոլոր տվյալները տեղակայվել են մարզպետարանի կայք-էջում՝ առանձնացված ըստ նիստերի հերթականության և արձանագրությունների: Հանձնաժողովի նիստերին օրակարգային են եղել ՀՀ ԱՍՀՆ հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության և Վանաձորի զբաղվածության կենտրոնի մասնագետների թեմատիկ զեկուցումները, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության և նրա միջազգային գործընկեր «Եվրախորհրդի չափանիշների քարոզչության կենտրոն» (ACCESS, Ստրասբուրգ, Ֆրանսիա) հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող Help ծրագրի աշխատանքների մասին, «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման գործընթացի թափանցիկության բարձրացում՝ ի նպաստ հաշմանդամություն ունեցողների» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքների մասին, «Ազաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի և ԱՄՆ Մոբիլիթի Ինթերնեշնլ (MIUSA) կազմակերպության հետ համատեղ իրականացվող Հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների և շահագրգիռ անձանց հետ՝ հաշմանդամության և խտրականության վերաբերյալ դասընթացաշարի և «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի մասին,

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագրի ուղղությունները, պատասխանատուները, թիրախային ցուցանիշներին հասնելու միջոցառումների մասին, Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման /ԱՀԿ ՖՄԴ/ ներդրման հայեցակարգի ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների, գաղափարախոսության, ներդրման նպատակների և կատարված աշխատանքների, առողջական և սոցիալական բաղադրիչների մասին, ԱՀԿ ՖՄԴ - ԵԵ կիրառման առավելությունները ծառայությունների մատուցման գործընթացում, ՀՀ կառավարության 27.09.2018թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2019թ. տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1025-Լ որոշման մասին, Հանձնաժողովի անդամ ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների մասին տեղեկատվության տրամադրում, հրատապ թեմաներ պարունակող հարցեր և այլն:

Հանձնաժողովը 2018թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը հայտարարվել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հիմնահարցերի լուծմանը նվիրված միամսյակ:

Մարզպետարանը սերտ համագործակցության մեջ է մարզում գործող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների /նրանց մասնաճյուղերի/ հետ, նրանցից մեծ մասը ընդգրկված են մարզպետարանում գործող տարբեր հանձնաժողովներում կամ տարածաշրջանային համակարգող խորհուրդներում: Մասնավորապես՝ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, «Վորլդ Վիժն Հայաստան» ՄԲԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ, «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամ, «Երիտասարդական ալիք» ՀԿ, «Սպիտակ բազե» ՀԿ, «Լուսաստղ» ԲՀԿ, «Մանկական կենտրոն» ԲՀԿ, «Մոլորակ» ԲՀԿ, «Ունիտոն» ՀԿ, «Սպիտակ-Ֆերմեր» ՀԿ, «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ, «Ապագա Սպիտակ» տարածքային զարգացման ՀԿ, «ՀՀ պատերազմի, զինված ուժերի, աշխատանքի վետերանների խորհուրդ» ՀԿ, «Ստեփանավանն է խոսում» ԲՀԿ, «Զոհված ազատամարտիկների ընտանիքների միություն» ՀԿ, «Համայնքային համախմբման և աջակցման կենտրոն» համայնքային ՀԿ, «Համայնքային իրավաբանների միավորում» ՀԿ, Գործատուների տարածքային միություն, Երիտասարդ տնտեսագետների ասոցիացիա և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնահարցերով զբաղվող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկությամբ ներկայացված է ստորև:

ա/ Տեղեկատվություն մարզում գործող ցերեկային կենտրոնների վերաբերյալ

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառու- ների թիվը /տարեկան/	Ֆինանսա- վորման աղբյուրը
1	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ /ոնսուրս կենտրոններ/	Վանաձոր, Ներսիսյան 6	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	140 (որից՝ 40 հաշ- մանդամ)	ՀՀ պետ- բյուջե, ԱՄՔՈՐ և այլ դոնոր կազմա- կերպություն- ներ
2		Սպիտակ, Չարենցի 10	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	120 (որից՝ 30 հաշ- մանդամ)	
3		Ալավերդի, Սանա- հին Սարահարթ թաղամաս 1/11ա	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	140 (որից՝ 26 հաշ- մանդամ)	
4		Տաշիր, Խանջան 3ա	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	55 (որից՝ 15 հաշ- մանդամ)	
5	«Լիարժեք կյանք» ՀԿ	Ստեփանավան, Նժդեհի 17/23ա	Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթադաստիարակ- չական ծառայություն	40՝ մշտական հաճախ- մամբ	պետբյուջե

6		Տաշիր, Գագարինի 7	Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթադաստիարակչական ծառայություն	20՝ մշտական հաճախմամբ	պետություն
7	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ	Տաշիր	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	60	դոնոր կազմակերպություններ

բ/ Տեղեկատվություն մարզում գործող տնային պայմաններում միայնակ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման վերաբերյալ.

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառուների թիվը /տարեկան/	Ֆինանսավորման աղբյուրը
1	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ /ոնսուրս կենտրոն/	Վանաձոր, Ներսիսյան 6	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	70 (որից՝ 32 հաշմանդամ)	ՀՀ պետություն, ԱՄՔՈՐ և այլ դոնոր կազմակերպություններ
2		Ալավերդի, Սանահին-Սարահարթ թաղամաս 19ա	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	25 (որից՝ 7 հաշմանդամ)	
3	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ	Վանաձոր	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	80	դոնոր կազմակերպության միջոցներով
4	Հայկական Կարմիր խաչի Լոռու մարզային մասնաճյուղ	Վանաձոր	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք /ծրագիրը շարունակական է, շահառուների թվի մեծացման միտումով/	57	Շվեյցարական և Հայկական կարմիր խաչի աջակցությամբ

գ/ Տեղեկատվություն մարզում գործող հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամք տրամադրող հաստատությունների վերաբերյալ.

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառուների թիվը /տարեկան/	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Վանաձորի տարեցների տուն	Վանաձոր, Մայմեխի խճ. 8	Միայնակ, սոցիալապես անապահով տարեցների խնամք	50-55 /միջինը/	ՀՀ ֆինանսավորում և պետական աջակցություն
2.	Կյանքի հաց ՀԿ-ի «Հույսի տուն» հանգստավայր	Վանաձոր, Աբեղյան	անօթևան, անժառանգ /անխնամ/ և անկողնային խնամքի կարիք ունեցող տարեցների /ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց/ խնամքի ծառայություն	30-50 /միջինը/	մասնավոր կառույց է

Ընդգրկուն աշխատանքներ են իրականացնում մարզում գործող տեղական ՀԿ-ները /ներկայացվում է համառոտագիրը/:

«Լիարժեք կյանք» ՀԿ-ն առանձնանում է իր բազմակի ծրագրերով, շարունակել է գործել ՀԿ-ի «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» պետական ծրագրով Հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների համայնքային կենտրոնը, որտեղ սպասարկվում են Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների ավելի քան 60 շահառուներ, ինչպես նաև 160 դիսկի գոտում գտնվող երեխաներ ու պատանիներ /համակարգչի իմացություն, լեզվի ուսուցում, առողջ ապրելակերպի, առաջին օգնության, իրավունքի, երթևեկության կանոնների դասընթացներ, արտթերապիա, մասնավորապես՝ կավագործության, երաժշտաթատերական մանրապատումների և այլ ուսուցողական հմտությունների ձեռքբերում և այլն/։ Անհատական պարապմունքներին մասնակցող

շահառուների հետ աշխատում են սուրդո մանկավարժը, հորեքան-մանկավարժը, հատուկ մանկավարժը և սոցիալական աշխատողը: Իսկ Կենտրոնում կազմակերպվում են նաև տարաբնույթ միջոցառումներ, էքսկուրսիաներ, ճամբարներ:

Ավելի քան 10 տարի է, ինչ ՀԿ-ն կազմակերպում է «Ամառային ներառական ճամբարը», որտեղ 2018թ. իրենց ամառային հանգիստն են անցկացրել «Լիարժեք կյանք» ՀԿ-ի երևանի և Ստեփանավանի երեխաների զարգացման կենտրոնի սաների շուրջ 150 սան: Ճամբարի տևողության յոթ օրերը անցնում են շատ հագեցված և հետաքրքիր, երեխաները մասնակցում են տարբեր դասընթացների, այդ թվում՝ կավագործության, արտ թերապիայի, ինտերակտիվ թատրոնի, նկարչության, խաղաթերապիայի, բոջիայի, երթևեկության կանոնների և այլ դասընթացների: 2018 թվականի ճամբարի կայացմանը աջակցել են «Մանես» բարեգործական հիմնադրամը, անհատ բարերարներ և ծնողներ:

Ստեփանավանում գործում է «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Անկախ կյանքի կենտրոնը:

✓ **«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ»** ՀԿ-ն այս տարի «Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության կենտրոնի» աջակցությամբ (ԵՄ-ի ֆինանսավորմամբ) «Հայկական գույներ» ծրագրի շրջանակներում Վանաձորում 2017թ. ապրիլին հիմնադրված կարի սոցիալական ձեռնարկությունը արդյունավետ գործում է:

2018թ. հունիսից, Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կողմից տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում, մեկնարկած «Մարդու իրավունքներ. մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագիրը նպատակ ունի նպաստել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը՝ խթանելով ոլորտում հանրային քաղաքականության բարելավմանը, իսկ առանձնահատուկ նպատակը՝ նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց շահերի և իրավունքների պաշտպանությանը: Հետազոտությունն իրականացվել է: Ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվել է «Հանուն հավասար իրավունքների» կոնսորցիումի անդամ հանդիսացող «Լրագրողներ Հանուն Մարդու Իրավունքների», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Իրավունքի Ուժ» և «Ազատ Լրագրողներ» ԲՀԿ-ների համագործակցությամբ: Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ ղեկավարությամբ գործող կոնսորցիումի միջոցով: Սույն հետազոտության համար ընտրվել էր հանրային նշանակություն ունեցող 15 պետական կառույցներ:

2018թ. մարտի 1-ից ՀԿ-ի արտաքին հարաբերությունների ստեղծման և հաղորդակցության հմտությունների զարգացմանը՝ հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավման նպատակով իրականացվում է «Ճանաչում, արտաքին հաղորդակցություն՝ հանուն կազմակերպության հզորացման» ծրագիրը:

Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու համար 2018թ. կազմակերպության երկու կամավորներ տարբեր անվանակարգերում հաղթող են ճանաչվել՝ ա/ «Մշակույթի բնագավառում հավասար հնարավորությունների ստեղծման գործում ներդրած ջանքերի համար» անվանակարգում՝ կամավոր Մարիամ Առաքելյանը՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի ծրագրային աշխատանքներին ակտիվ մասնակցության /տիկնիկների պատրաստում, նոր դեկորատիվ բարձերի հեղինակ/ և EREOstyle-ի էջի շարունակական թարմացման համար և բ/ «Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության բնագավառում ներդրած ջանքերի համար» անվանակարգում՝ նկարչուհի Աստղիկ Մելքոնյանը՝ թվով 10 հաշմանդամություն ունեցող անձանց համար անվճար վարսահարդարման, մատնահարդարման և դիմահարդարման կանանց գեղեցկությանն ուղղված միջոցառումներ նախաձեռնելու և կազմակերպելու համար:

«Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի տնօրեն Ժակլին Հեքիմյանը 2018թ. ևս շարունակեց իր համագործակցային և բարեգործական գործունեությունը: Իսկ «Սոցիալական ծառայությունների մատչելիության և հասանելիության գործում ներդրած ջանքերի համար» անվանակարգում պարգևատրվել է

հիմնադրամի տնօրենը՝ Հաշմանդամություն ունեցող անձանց, ՀՀ Լոռու մարզի բուժհաստատություններին, ազատամարտիկների և անապահով ընտանիքներին բազմաթիվ բարեսիրական ծրագրեր իրականացնելու համար:

«Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ-ն կազմակերպել է մի շարք մարզամշակութային միջոցառումներ և էքսկուրսիաներ: ՀԿ-ն ակտիվ է եղել հատկապես մարզական միջոցառումների ժամանակ: ՀԿ-ի մարզիկները ևս ունեցել են մարզական հաջողություններ:

Վանաձորի «Մանկական կենտրոն» ՀԿ-ի աջակցությամբ իրականացվում են տարբեր ծրագրեր, մասնավորապես՝ իրականացվում է Լոռու մարզի ողնաշարի հետ կապված խնդիրներ ունեցող հաշմանդամ երեխաների բուժզննումը /շահառուներ են ընդգրկվում նաև Շիրակի մարզից/:

«Սպիտակ բազե» և «Երիտասարդական ալիք» ՀԿ-ներն իրականացնում է մի շարք ծրագրեր, նաև՝ վերականգնողական տարբեր պարագաների բաշխում /անվասայլակ, քայլակ, հենակ, ձեռնափայտ և այլն/, **«Խաչվող ուղիներ»** ՀԿ-ն՝ հաշմանդամ երեխաների շրջանում իրականացնում է «Արթերապիա», «Հատուկ կարիքներով երեխաների սոցիալ-հոգեբանական և զարգացման ցերեկային խնամքի կենտրոն» ծրագրերը, **«Մոլորակ» մշակութային լրատվական ԲՀԿ**-ն կազմակերպում է հաշմանդամ երեխաների մասնակցությունը տարբեր միջոցառումներին, իսկ **«Ինֆորմացիոն կենտրոն»** ՀԿ-ն հաշմանդամների իրականացնում է համակարգչային դասընթացներ և այլն:

Շնորհիվ ստեղծված նպաստավոր պայմանների ՀՀ Լոռու մարզի **հաշմանդամություն ունեցող մարզիկները** 2018թ. արձանագրել են մի շարք հաջողություններ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար, մասնավորապես՝

- «Լոռու մշակույթ, սպորտ, երիտասարդություն» հիմնադրամի միջոցով աջակցություն է ցուցաբերվել «Ալեքս» մարզական ակումբի վերանորոգման աշխատանքներին, որտեղ մարզվում են նաև հաշմանդամ մարզիկներ,
- տրամադրվել է անհրաժեշտ մարզագույք՝ մարզումներ անցկացնելու համար,
- պայմանավորվածություն է ձեռք բերվել մարզադպրոցների հետ՝ անվճար մարզումներ կազմակերպելու ուղղությամբ,
- Վանաձորի շախմատի ակումբում հաշմանդամները մշտապես զբաղվում են շաշկի և շախմատ խաղալով:

Կազմակերպվել են նաև մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- Կազմակերպվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» հանրապետական մրցույթի Լոռու մարզային փուլ, այնուհետև 2018թ. հանրապետական մրցույթում Լոռու մարզի հավաքականը, երրորդ անգամ անընդմեջ, գրավել է առաջին տեղը:

- Կազմակերպվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթի հաշմանդամություն ունեցող լավագույն ընտանիքների մարզային փուլը, այնուհետև 2018թ. հանրապետական մրցույթում Ստաս Նազարյանի ընտանիքը հերթական անգամ գրավել է առաջին տեղը:

- ՀՀ Լոռու մարզի քաղաքներում անցկացվել են «Մարզական փառատոն», որին մասնակցել են հաշմանդամություն ունեցող մարզիկներ: Մասնավորապես՝ Սերոբ Աբրահամյանը բազկամարտի աշխարհի առաջնությունում գրավել է առաջին տեղը՝ դառնալով աշխարհի կրկնակի չեմպիոն, իսկ հանրապետական տարբեր ստուգատեսներում լոռեցի հաշմանդամ մարզիկները գրավել են մրցանակային տեղեր:

- Վանաձորի քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպվել են կույրերի և խուլերի մասնակցությամբ շախմատի և շաշկու առաջնություններ:

- «Լիարժեք կյանք» ՀԿ-ն «Հաշմանդամային սպորտի հայկական ազգային ֆեդերացիայի» հետ համագործակցությամբ և ՀՀ Սպորտի և երիտասարդության նախարարության ֆինանսական աջակցությամբ՝ «Բոջիան հանուն հավասար հնարավորությունների և առողջ ապրելակերպի» ծրագրի շրջանակներում Ծաղկաձորում 2018թ. դեկտեմբերին անցկացրեց

Հայաստանի բոլորի բաց առաջնություն: Մասնակիցների թվում էին «Ձեզ համար», «Էմիլի արեգակ», «Լիարժեք կյանք», «Հայկական ճամբար», «Փյունիկ», «Հայաստանի մանուկներ հիմնադրամ» և «Երեխաների աջակցության հիմնադրամ» - «Սկարպ» թիմերը ՀՀ-ից, «Քոկսի վերականգնողական կենտրոն» թիմը Արցախից և ΠαραΠλαη թիմը Ռուսաստանի Նիժնի Նովգորոդ քաղաքից:

2018թ. ընթացքում ևս առողջարանային ուղեգրերով մարզի շահառուները /ներառյալ նաև հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների միջնորդությամբ/ կազմակերպվել են Աղվերանի «Գանձադրյուր» և Վանաձորի ԱՍԱՐ առողջարաններում՝ համապատասխանաբար 20 և 5 հաշմանդամներ: Ջերմուկի «Արարատ» մոր ու մանկան առողջարան են ուղեգրվել մինչև 18 տարեկան 9 երեխա և 8 խնամող:

Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում իրականացված ջանադիր աշխատանքի համար ՀՀ Լոռու մարզպետի կողմից հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններ և անհատներ պարգևներ են ստացել ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սահմանված անվանակարգերի:

Մարզպետարանի ուշադրության կենտրոնում են եղել նաև տարեց անապահով քաղաքացիների հիմնահարցերը: Լոռու մարզի բնակչության /215.800/ շուրջ 15%-ը տարեց ներ են: Տարեցների շրջանում /նրանց մի մասը նաև հաշմանդամություն ունեցող անձինք են/ ակտիվ գործունեություն են ծավալում շուրջօրյա գործող «Վանաձորի տարեցների տունը» /50-55 տարեցների խնամքով, շուրջ երեք տասնյակ ծերեր էլ խնամվում են տնային պայմաններում/ և «Կյանքի հաց» ԲՀԿ-ի «Հույսի տուն» ծերերի հանգստավայրը /տարվա տարբեր ժամանակահատվածներում 30-50 անօթևան, անժառանգ /անխնամ/ և անկողնային խնամքի կարիք ունեցող տարեցների խնամք/:

Զգալի աշխատանքներ է իրականացնում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն, որի շահառուները բարեգործական ճաշարաններից օգտվող, տնային կարիք ունեցող հարյուրավոր տարեցներն են (շահառուների թիվը Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի և Տաշիր քաղաքներում տաք սնունդ են ստանում 396 մարդ), իսկ շահառուների ընտրությունը և մասնակի ֆինանսավորումը կատարում են համայնքները: Մարզկենտրոն Վանաձորում և Ալավերդիում համապատասխանաբար ևս 65 և 22 անձինք սպասարկվում են տնային պայմաններում: Կազմակերպության մասնակցությամբ իրականացվում է նաև «Հրատապ օգնություն Սիրիայից տեղահանված ընտանիքներին» ծրագրերը:

Գնահատելի է նաև «Հայկական Կարիտաս» ՄԲՀԿ-ի գործունեությունը «Տնային խնամք» ծրագրով Վանաձորում՝ 80 և Տաշիրում՝ ցերեկային կենտրոնի 60 շահառուների ընդգրկումով:

ՀՀ Լոռու մարզպետը միշտ աջակից է Տարեցների օրվա միջոցառումների կազմակերպման գործում: Այս տարի Տարեցների օրվա առթիվ Վանաձորի տարեցների տուն այցելեցին մարզպետը և մարզպետարանի պատասխանատու պաշտոնյաներ, իսկ Վանաձորի տարեցների տանը տոնական միջոցառումը կազմակերպել էր «Վանաձորի թիվ 1 մշակույթի տուն» ՀՈԱԿ-ը /տնօրեն՝ Սիրվա Անտոնյան/: Վանաձորի տարեցների տանը և «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի Վանաձորի համայնքային կենտրոնին տոնական միջոցառումների և խնջույքի կազմակերպման համար հատկացրել է 150.000 և 100.000 դրամ:

Մարզի պետական խնամակալական հաստատություններում և բարեգործական կազմակերպությունների /Հայկական Կարմիր Խաչի հայկական ընկերություն, «Առաքելություն Հայաստան», «Հայկական Կարիտաս»/ ծրագրերում ընդգրկված բնակվող տարեցներին տարվա ընթացքում բազմաթիվ այցելություններ են կատարվում:

Ինչպես ամեն տարի այս տարի ևս «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Տնային խնամք միայնակ ծերերին» ծրագրի շահառուների համար կազմակերպվեցին տոնական միջոցառումներ: Իսկ «Բարին արա» ծրագրին ակտիվ մասնակցեցին մարզի դպրոցները և այլ կազմակերպություններ՝ իրենց երգ ու պարով, ասմունքով:

Մարզկենտրոնում ավանդույթ դարձած «Վանաձորի օր» միջոցառումների շրջանակներում տեղ էին գտել նաև տարեցներին նվիրված միջոցառումները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված 100 և ավելի տարեկան թվով 7 երկարակյաց բնակիչներին համայնքների ղեկավարների կողմից կատարվել են այցելություններ, հանձնվել նվերներ:

Հոկտեմբերին մարզի մի շարք համայնքներում անցկացվել են Տարեցների մեծարման միջոցառումներ: Այցելությունները և տոնական միջոցառումները լուսաբանվել են մարզի ՀԼՄ-ների կողմից:

Մարզի ՍԱՏՄ-ների կողմից 2018թ. ընթացքում 26 անձանց համար կազմվել են փաստաթղթային փաթեթ՝ ծերանոցներում տեղավորելու խնդրով /նախորդ տարի՝ 10/:

Փախստականների և միգրացիայի հիմնահարցեր

01.01.2019թ. դրությամբ մարզում փաստացի բնակվում են ավելի քան 7500 փախստական, որից քաղաքացիություն են ստացել շուրջ 6000 անձ:

Աշխատունակ են՝ 3.465 մարդ (46.2%), նախկին քաղաքաբնակներ՝ 6.750 մարդ (90%):

1999-2005թթ. բնակարանային խնդիր է լուծվել փախստականների 292 ընտանիքների համար /Փախստականների նորվեգական խորհրդի, ՄԱԿ-ի և ՀՀ պետությունների միջոցներով (20՝ Արջուտում, 16՝ Տաշիրում, 54՝ Վանաձորում, 52՝ Սպիտակում, 56՝ Ստեփանավանում, 58՝ Նոր Խաչակապ, Ղուրսալի, Ջրաշեն, Սարամեջ համայնքներում):

2006-2018թթ. Լոռու մարզում փախստական ընտանիքների բնակարանային ապահովման պետական ծրագրի չի իրականացվել:

Դեռևս բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը մարզում կազմում է 139 /որից՝ 24-ը առաջնահերթության, իսկ 115 ընտանիք ընդհանուր հերթացուցակում/: Մեծաթիվ ընտանիքներ /47 ընտանիք/ գտնվում են արտերկրում /մեծ մասը՝ ՌԴ-ում/: Ներկայումս մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինների կողմից իրականացվում են ուսումնասիրություններ՝ ցուցակների վերաճշտման նպատակով:

Զոհված և հաշմանդամ զինծառայողների հիմնահարցեր

ՀՀ կառավարության 10.08.2017թ. թիվ 1016-Ն և 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշումների պահանջներով են ընթանում զոհված (մահացած) և հաշմանդամ (վիրավոր) զինծառայողների (ազատամարտիկների) ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աշխատանքները:

Ներկայումս ՀՀ Լոռու մարզում բնակարանի կարիքավոր են 61 (11 զոհվածի և 50 զին-հաշմանդամություն ունեցողի) ընտանիքներ /անօթևան են 33-ը/: Նախորդած տարիներին Լոռու մարզում բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն են ստացել զոհվածի և զինհաշմանդամի 242 ընտանիքներ:

2018թ. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բնակապահովման ծրագրի չի իրականացվել: ՀՀ ՊՆ է ներկայացվել մարզի անօթևան 2-րդ և 3-րդ խմբերի զինհաշմանդամների, ինչպես նաև 2018թ. հաշվառված երկու զոհված զինծառայողների ընտանիքների /Սպիտակ, Ստեփանավան/ ցուցակները: Բնակապահովման հարցերը ընթացք կստանան աշխատանքները կանոնակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

29.06.2018թ. Վանաձորում նշվել է անհայտ կորած զինծառայողների հիշատակի օրը՝ թվով 16 անհայտ կորած զինծառայողների ընտանիքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործում է թեժ գիծ՝ 0322 2-33-99 հեռախոսահամարով /առողջապահության և սոցիալական ապահովության հարցերով/, իսկ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից իրականացվող «Ամեն ինչ մեզ համար, մեզ հետ» ծրագրի շրջանակներում գործում է 080001311 անվճար թեժ գիծը: Հեռաձայնողների հարցերն առնչվում են առողջապահական, սոցիալական և շատ այլ ոլորտներում խախտված իրավունքներին, որոնց անմիջապես անդրադարձ է եղել: «Լիարժեք կյանք» ՀԿ-ի և գործընկեր կազմակերպությունների գրասենյակներում իրավաբանի կողմից մատուցվել է անվճար իրավաբանական խորհրդատվություն:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՆԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրվել են թվով 530 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ, կատարվել են նրանց կարիքների գնահատում, ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր և ապահովվել դրանց իրականացումը համապատասխան հաստատություններում:

Կատարվել են ավելի քան 50 տնայցեր երեխաներին մանկատուն, խնամքի հաստատություն տեղավորելու նպատակով, որոնց արդյունքում որոշ երեխաներ տեղավորվել են հաստատություն: Մյուսների մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություն կանխարգելվել է ընտանիքին հասցեական աջակցություն, մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու, կամ ցերեկային խնամքի կենտրոն ուղղորդելու արդյունքում:

Իրականացվել են երեխայի հետ կապված հատուկ դեպքերի ուսումնասիրում և երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանության ապահովում:

Կարգավորվել են ամուսնալուծվող ընտանիքների երեխաների՝ ծնողներից մեկի կամ մյուսի մոտ խնամքի և տեսակցության հարցեր /փոխհամաձայնությամբ/, ընտանիքի վերամիավորմանն ու ամրապնդմանը ուղղված խորհրդատվություններ:

Իրականացվել են դատարան եզրակացություն ներկայացնելու կամ միջդատական վարույթում խորհրդատվական բնույթի աշխատանքներ: Երեխայի կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու /սանիտարահիգիենիկ վատթար պայմաններ, ջեռուցման բացակայություն և այլն/ դեպքում, բռնության ենթարկված քաղաքացիների պաշտպանության համար բաժինը համայնքի և այլ պատկան մարմինների հետ համատեղ կատարել է ուսումնասիրություն, կարիքների գնահատում և ուղղորդում համապատասխան կառույցներ /վերականգնողական, խնամքի տրամադրման, կրթական, բժշկական աջակցության տրամադրման և այլ/:

Բաժնի մասնագետները մասնակցություն են ունեցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների և դատական նիստերի, ներկայացրել ենք ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցեր:

Խնամքի շուրջօրյա հաստատություններ տեղավորում, դուրսգրում, կանխարգելում

2018թ-ին 25 երեխայի տրվել է եզակացություն մանկատուն տեղավորման համար, որից՝

- Վանաձորի մանկատուն են տեղավորվել առանց ծնողական խնամքի մնացած և կյանքի և առողջության համար անբարենպաստ պայմաններում գտնվող թվով 17 երեխա:
- 8 երեխայի տրվել է եզրակացություն մասնագիտացված մանկատուն տեղավորելու համար :

Մանկատնից դուրս է գրվել 17 երեխա, որոնցից 9-ը վերադարձել են կենսաբանական ընտանիք, 8-ը՝ հանձնվել է խնամատար ընտանիք: 08.01.2019թ. դրությամբ մանկատանը բնակվում է 34 երեխա:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպման արդյունքում մարզում ստեղծվել է Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն, որտեղ մարզի 85 կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին տրամադրվում են բազմաբնույթ ծառայություններ:

Հաշվի առնելով երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում բարեփոխումների ներկայիս ընթացքը, 2017 թ-ին առավել ծավալուն աշխատանք է տարվել երեխաների գիշերային խնամք իրականացնող հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելելու ուղղությամբ և խորհրդատվությունների, ուղղորդումների, բազմամասնագիտական խորհրդակցությունների շնորհիվ ունեցել ենք տեսանելի արդյունք: Բացի այդ 55 երեխայի մուտքը հաստատություններ կանխվել է Առավոտ ԲՀԿ-ի հետ համատեղ իրականացվող կանխարգելման ծրագրի շրջանակներում ընտանիքներին փաթեթային աջակցություններ տրամադրելու արդյունքում:

Վանաձորի երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունից դուրս են գրվել 56 երեխա, որոնք ընդգրկվել են տարբեր ծրագրերի մեջ, ընտանիքներն ստանում են աջակցություն սննդի և կոմունալ ծախսերի մասնակի փոխհատուցման տեսքով և որոշակի ուղեկցող մասնագիտական աջակցություն:

Վերջին չորս տարիներին հաշվառված երեխաների վերաբերյալ տեղեկատվություն

	2015թ	2016թ	2017թ	2018թ
Առանց ծնողական խնամքի մնացած երեխա և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ	21	30	26	15
Որդեգրել ցանկացող անձ	17	21	13	16
Որդեգրման ենթակա երեխա	18	8	10	6
Մանկատուն տեղավորված երեխա	18	23	11	25
<i>Ընդամենը</i>	74	82	60	62

2 երեխա որդեգրվել է, որից 1-ը խորթ մոր, 1-ը խնամակալի կողմից:

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ավտոմատացված տեղեկատվական համակարգի վարում

2018թ-ի ընթացքում «Նորք» ավտոմատացված տեղեկատվական համակարգ են մուտքագրվել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ՝ դրանում հաշվառելով.

ա) 15 առանց ծնողական խնամքի մնացած երեխա և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ և օրենքով սահմանված կարգով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կենտրոնացված հաշվառման,

բ) 16 որդեգրել ցանկացող անձ, ով բաժնի կողմից տրված դրական եզրակացության հիման վրա հաշվառվել է որպես որդեգրողի թեկնածու/ տվյալները գրանցվել են հաշվառման մատյանում, լրացվել է որդեգրողի թեկնածուի անձնական քարտը և, պատճենը փոխանցվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/

գ) 6 որդեգրման ենթակա երեխաներ, ում տվյալները եւ անձնական քարտերի պատճենները ներկայացվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար:

դ) մանկատուն տեղավորված 25 երեխաներ:

Ոստիկանության ԱԳ բաժինների հետ համագործակցություն

Ոստիկանության համապատասխան ծառայությունների և ԽՀՀ-ների հետ համատեղ քննարկվել են մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների խնդիրները, անհրաժեշտության դեպքում արվել են ուղղորդումներ համապատասխան հաստատություններ: Պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացվել իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների հետ: Իրականացվել է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հանրակրթական /հատուկ հանրակրթական/

ուսումնական հաստատություններում: Ընդհանուր հաշվառման մեջ են գտնվում 34 երեխա. Ամփոփ պատկերն է՝

Հ / Հ	ԲԱԺԻՆ	ընդ թիվ	հանցանք կատարած	զանցանք կատարած	մուրացիկ	թափառաշրջիկ	պարտույ սից դուրս մնացած	անօթևան և ընտանիք չլրացած	տղա	աղջիկ	ծնող
1	ՏԱՐՈՆ	7	1	3	-	1	1	1	5	2	2
2	ԲԱԶՈՒՄ	8	5	1	-	-	1	1	7	1	-
3	ԹՈՒՄԱՆՅԱՆ	5	2	3	-	-	-	-	3	2	-
4	ՏԱՇԻՐ	2	1	-	-	-	1	-	2	-	-
5	ՍՊԻՏԱԿ	6	3	1	1	-	-	1	5	1	1
6	ՍՏԵՓԱՆԱՎԱՆ	5	4	1	-	-	-	-	4	1	-
7	ԳՈՒԳԱՐՔ	1	1	-	-	-	-	-	1	-	-
8	ԸՆԴՀԱՆՈՒՐ	34	17	9	1	1	3	3	27	7	3

Պրոբացիոն ծառայության գրասենյակ 2018թ.-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանից ուղղորդվել են 3 անչափահաս: Յուրաքանչյուր ամիսը երկու անգամ անչափահասը ներկայանում է բաժին, իսկ ամիսը մեկ անգամ բաժնի ծառայողը այցելում է բնակության վայր, հանդիպում է ծնողի հետ, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն: Համապատասխան մասնագետների համարումից հետո ծառայությունը կդառնա ավելի արդյունավետ և հուսով ենք անչափահասները տարված աշխատանքներից հետո կփոխեն իրենց վարքն ու հետաքրքրությունները:

Ներառական կրթություն կազմակերպում մարզի դպրոցներում, կրթության առանձնահատուկ պայմանների վկայագրում

2018թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ Լոռու մարզում ընդհանուր ներառական դպրոցներում վկայագրվել են առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 718 երեխա

Տարածաշրջան	ներառական կրթություն կազմակերպող դպրոցների քանակ	վկայագրված երեխաների թիվ
Վանաձոր	23դպրոց	242
Գուգարք	11դպրոց	58
Ստեփանավան	24դպրոց	165
Ալավերդի	26դպրոց	135
Սպիտակ	18 դպրոց	90
Տաշիր	8 դպրոց	28

Մարզում ունենք 110 դպրոց, որտեղ կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների վերբերյալ տեղեկավորություն (2018-2019թթ)

Տարածաշրջան	աշակերտների թիվը
Վանաձոր քաղաք	15
Գուգարքի տարածաշրջան	24
Ալավերդու տարածաշրջան	17
Սպիտակի տարածաշրջան	14
Ստեփանավանի տարածաշրջան	6
Տաշիրի տարածաշրջան	17
Ընդամենը	93

Արտերկրում գտնվում են՝ 10 երեխա, տեղեկություն չկա՝ 3, 6տ երեխաներ՝ 39

Աշխատանք խնամատար ընտանիքների հետ

Մարզի 11 խնամատար ընտանիքներում տարվա ընթացքում խնամվել են 16 երեխաներ, որոնցից 9-ը Վանաձորում, 1-ը Մարգահովիտ, 4-ը Օձուն և 2-ը Բազում համայնքում:

Բաժնի կողմից տարվա ընթացքում նշված ընտանիքները մշտապես ստացել են խորհրդատվություն, եղել են հանդիպումներ երեխա-խնամատար ծնող- կենսաբանական ծնող – բաժնի մասնագետներ խմբով, հարթվել են ծագած տարածայնությունները, վերականգնվել է վստահությունը ընտանիքի անդամների և կենսաբանական ծնողի միջև:

տարվա ընթացքում ցուցակագրվել են խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձինք, որոնք պետք է մասնակցեն համապատասխան դասընթացների:

**ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

/	Միջոցառման անվանումը	Կատարած աշխատանքները	Ֆինանսական ապահովումը
1.	Կազմակերպվել է մշտադիտարկում մարզի հասարակության կյանքի առանցքային ոլորտներում գենդերային հավասարության առաջնության, կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվության վերաբերյալ	Վերլուծվել է մարզի հասարակական-քաղաքական կյանքին կանանց մասնակցության հետ կապված իրավիճակը, մշակվել են երաշխավորություններ, որոնք նպաստել են որոշումների կայացման մարզային բոլոր մակարդակներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության ապահովմանը:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ

2	Կազմակերպվել են գործընկերային հարաբերությունների բարելավման մեխանիզմների ներդրմանն ուղղված հանդիպում-քննարկումներ մարզում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության նպատակով	Խորացվել է սոցիալական գործընկերությունը պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև՝ գենդերային խտրականության հաղթահարման, գենդերային հավասարության առաջնության և երկրում ժողովրդավարության խորացման համար:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ
3.	Մարզի համայնքներում /ընտրությամբ/ իրականացվել է ընտանեկան խնդիրների մշտադիտարկում	Բացահայտվել են ընտանիքներում կանանց և տղամարդկանց ներդաշնակ հարաբերություններին առնչվող խնդիրներ, մշակվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ

Հ/Հ	Ցերեկային կենտրոն	2018թ.	2017թ.	2016թ.
1	Փոքրիկ Իշխան / Վանաձոր/	86	87	75
2	Փոքրիկ Իշխան /Տաշիր/	10	33	36
3	Շող	68	61	71
4	Օրբան	117	114	103

4.	Կազմակերպվել են մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում) կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության վերաբերյալ իրազեկման հանդիպումներ	Վանաձորում կազմակերպվել են 2-օրյա իրազեկման հանդիպումներ գյուղական համայնքների 23 կին ներկայացուցիչների հետ, որոնց արդյունքում բարձրացել է տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մոտ կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության վերաբերյալ իրազեկման մակարդակը, ինչպես նաև նրանց գենդերային զգայնությունը: Ներկայումս մարզում ունենք ավագանու 12 կին անդամներ	Լոռու մարզպետարան, դրամաշնորհային ծրագրեր
----	--	---	---

Ցերեկային խնամք իրականացնող կենտրոններ

Վանաձորում գործող ցերեկային կենտրոնների հետ բաժինը սերտորեն համագործակցում է, ունենում ենք դեպքերի համատեղ քննարկումներ, դժվար իրավիճակում հայտնված և կենտրոնների ռեսուրսներից լայն միջամտության անհրաժեշտության դեպքում աջակցություն, ուղղորդում, այլ կառույցների ու կազմակերպությունների ներգրավում:

5	Առավուտ	40		
---	---------	----	--	--

Ծրագրեր եւ միջոցառումներ ուղղված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների եւ երեխաների աջակցմանը

➤ Տարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ գիշերային խնամք իրականացնող հաստատությունների վերակազմակերպման և երեխաներին ընտանիք վերադարձնելու համար նրանց կարիքներն ու վերադարձի ռիսկերը գնահատելու համար: Կատարվել է ուսումնասիրություն մարզում շուրջօրյա խնամքի հաստատությունների երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորման արդյունքում առաջացող կարիքների ու ռիսկերի շուրջ, վերհանվել են այն աջակցության տեսակներն ու ծառայությունները, որոնք կնպաստեն երեխաների վերադարձին ընտանիք և որոշ ժամանակ կուղեկցեն վերամիավորումից հետո: Վանաձորի խնամքի կենտրոնի երեխաների ընտանիքների հետ վերամիավորման ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր ընտանիքի տրամադրվել է հասցեական աջակցության միջազգային UNICEF, DIAKONIA, SOAR, COAF կազմակերպությունների ներդրումներով, ինչն այս ընտանիքների տնտեսական վերականգնման և խոցելիության նվազման աշխատանքներում մեծ դեր է ունեցել:

➤ Ուսումնասիրվել են մարզի ԽՀՀ-ների գործունեությունը, կատարվել է խորհրդատվություն, տրամադրվել է մեթոդական աջակցություն ԽՀՀ-ների աշխատանքների վերաբերյալ:

➤ Կազմակերպվել են հանդիպումներ ԽՀՄ-ների ներկայացուցիչների հետ, որտեղ կատարվել են իրազեկման աշխատանքներ օրենսդրական դաշտի վերաբերյալ, տրամադրվել են նյութեր, աշխատանքների բարելավման նպատակով իրականացվել են դեպքերի համատեղ քննարկումներ, արդյունքում տրվել են աշխատանքային ցուցումներ:

➤ Բաժնում կատարվել է մոտ 2400 քաղաքացիների ընդունելություն, որի ընթացքում տրվել են համապատասխան ցուցումներ և խորհրդատվություններ սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, իրավաբանական հարցերի շուրջ:

▶ Կազմակերպվել են դեպքերի քննարկումներ, համատեղ տնայցեր, երեխաների և ընտանիքների կարիքների գնահատում ոլորտի մասնագետների հետ և համապատասխան աջակցություն է տրամադրվել կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող ընտանիքներին՝ խորհրդատվական, ծառայությունների մատուցման կամ էլ նյութական-հումանիտար օգնության տեսքով: «Ամենամամա» նախաձեռնության հետ համագործակցությամբ որոշ ընտանիքների տրամադրվել է վառելափայտ, ամանօրյա միջոցառման մասնակցություն և նվերներ են ստացել անապահով ընտանիքների երեխաներ:

▶ Մարզում գործող ցերեկային խնամք իրականացնող կազմակերպությունների հետ տարվա ընթացքում ունեցել ենք սերտ համագործակցություն: Վանաձորի «Շող» երեխաների համայնքահեն ցերեկային կենտրոնի, Հայկական Կարիտաս բարեսիրական կազմակերպության Վանաձորի եւ Տաշիրի «Փոքրիկ իշխան» կենտրոնների և «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ բաժինը պարբերաբար կատարել է շահառու կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների հետ տարվող աշխատանքների և դեպքերի քննարկում, որի արդյունքում կանխարգելվել է մեծ թվով երեխաների մուտքը հաստատություններ: Առանձին դեպքերում իրականացվել են համատեղ տնայցեր, մասնագիտական խորհրդատվություն և թեմատիկ քննարկումներ: Այն ընտանիքների հարցերով, որտեղ առկա են եղել բարդ կամ կազմակերպության ռեսուրսներից լայն խնդիրներ, բաժնի միջամտությամբ կազմակերպվել են ընդլայնված քննարկումներ՝ հարցերին առավել ամբողջական լուծում տալու նպատակով: Որոշ ծնողների հետ կազմակերպության

առաջարկությամբ տարվել են սոցիալ-հոգեբանական և ծնողավարման հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Արտաքին կապերի և միջազգային համագործակցության շրջանակներում 2018թ. մարզում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, որոնք զգալի ներդրում են ունեցել մարզի զարգացման գործընթացում: Այսպիսով, արդյունավետ համագործակցություն է իրականացվել բազմաթիվ միջազգային կառույցների հետ:

Հայ-Ֆրանսիական համագործակցության շրջանակներում ՀՀ Լոռու մարզ - Ֆրանսիայի ՊԱԿԱ /Պրովանս-Ալպեր-Լազուրի Ափ/ ղեկին: Համագործակցության շրջանակներում նախապես մշակված ծրագրերից գերակա նախագիծ ընտրվել էր Ախթալայի Ս. Բարսեղ Կեսարացի XIIIդ. եկեղեցում ցուցասրահի մեկնաբանության կենտրոնի հիմնումը, որի նախապատրաստական աշխատանքներում ընդգրկված էր շրջանակային հուշագրի վավերացում համագործակցող շահագրգիռ կառույցների միջև: Ֆրանսական պատվիրակության այցի շրջանակներում կազմակերպվել և իրականացվել են բազմաթիվ հանդիպումներ այդ գերատեսչությունների (ՀՀ Մշակույթի նախարարություն, Մատենադարան, ՀՀ Պատմության թանգարան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ), տեղական իշխանությունների (Լոռու մարզպետարան, Գուգարաց Թեմի առաջնորդարան, Ախթալայի համայնքապետարան) և մարզային այլ կազմակերպությունների («Վալենթ խումբ» ընկերություն, Վանաձորի Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան) հետ: 2018թ.-ին վանական համալիրում ցուցասրահի կազմակերպելու վերաբերյալ ձեռք են բերվել թույլտվություն՝ Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնից, այլ համաձայնություններ՝ պատկան այլ կազմակերպություններից: Ծրագրի իրականացումը տեղափոխվել է 2019թ.:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն - Լոռու մարզում ԱՐԴԻ ծրագրի կողմից 2018թ.-ին իրականացվել են դրամաշնորհային ծրագրեր՝ այգեգործության, ջերմոցային տնտեսության, անասնաբուժության գյուղական տուրիզմի զարգացման և գյուղ, տեխնիկայի տրամադրման ոլորտներում: Ծրագրերն իրականացվել են Ալավերդի և Մեծ Պարնի համայնքներում, Գարգար համայնքում իրականացվել է արևային կայանից սնվող պոմպակայանի տեղադրման աշխատանքներ:

ՌԴ-ի կողմից ֆինանսավորվող ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում 2018թ. հունիսին Լոռու մարզի մարզկենտրոն Վանաձորում հիմնվել են Լոռու զբոսաշրջության զարգացման հետազոտության և տեղեկատվական կենտրոնները: «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագիրն աջակցում է Հայաստանի գյուղական համայնքներին՝ ստեղծելու այլընտրանքային եկամտի աղբյուրներ գյուղաբնակների համար, զբոսաշրջության զարգացման միջոցով: Կազմակերպության առաքելությունն է՝ Հայաստանի կարիքավոր գյուղական բնակավայրերում երեխաների համար բարեկեցիկ ապագայի կառուցմանը՝ կրթության, առողջապահության, համայնքային կյանքի և տնտեսական պայմանների բարելավման միջոցով:

«Հայաստանի մանուկներ հիմնադրամ» (COAF) - Շուրջ երկու տարի առաջ Դեբեդի գեղատեսիլ հովտում մեկնարկեց հիմնադրամի կողմից Սմարթ կենտրոնի կառուցումը, 2018թ. մայիսին շահագործման հանձնվեց և իր դռները բացեց առաջավոր երեխաների ու երիտասարդների առաջ:

Հիմնադրամի կողմից մարզում տարվել են աշխատանքներ կրթական, առողջապահական, երեխաների եւ ընտանիքի աջակցության, սմարթ նախաձեռնության շրջանակներում, որոնք շարունակվելու են հաջորդ տարիների ընթացքում:

«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղ - Կազմակերպությունը Թումանյանի եւ Ստեփանավանի իր գրասենյակների միջոցով շարունակել է Լոռու մարզում գործունեության իրականացումը շահառու համարվող 29 համայնքներում: Ծրագրային

աշխատանքներն հիմնականում ընթացել են հումանիտար, առողջապահական, տնտեսական, այդ թվում՝ զբոսաշրջություն, երիտասարդական եւ երեխաների պաշտպանության ուղղություններով:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) (GIZ) կողմից 2018թ-ին շարունակվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակների հիմնման եւ վերազինման աշխատանքներ, այս անգամ Ստեփանավան, Օձուն եւ Ախթալա համայնքներում: Այս նույն համայնքներում ներդրվել են Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր (ՀԿՏՀ):

Մարզի խոշորացված համայնքների պլանավորման համար կարողությունների բարելավում, Ալավերդում աջակցություն է ցուցաբերվել Տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ) մշաման եւ Թումանյան համայնքի համար ՏԱՊ մշտադիտարկման իրականացում:

Կանանց հզորացում, Տեղական կին քաղաքական գործիչների կարողությունների զարգացում ծրագրի շրջանակներում, ԳՄՀԸ աջակցությամբ տեղական կին քաղաքական գործիչների կողմից, 3 փոքր դրամաշնորհային ծրագրերի իրականացում Գյուլագարակում, Տաշիրում, Վանաձորում:

«Քաղաքների ցանց» ծրագրի շրջանակներում թափոնների կառավարման, թափոնների տեսակավորման և վերամշակման կազմակերպման վերաբերյալ Վանաձորի քաղաքապետարանի եւ 77 ուսուցիչների համար կազմակերպվել է բնապահպանական կրթության, բնապահպանական խնդիրների և թափոնների տեսակավորման ինչպես նաև վերոնշյալ տեղեկատվությունը երեխաներին ճիշտ մատուցելու, ուսուցման մեթոդների և մեխանիզմների վերաբերյալ սեմինարներ:

ԵՄ կողմից ֆինանսավորվող Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանման ծրագրի շրջանակներում «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվում է Ճամփեզրյա կայանի կառուցման աշխատանքները:

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամը շարունակել է հումանիտար օգնության բաշխումը մարզի տարածքում: **Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե (ԱՄՔՈՐ), Հայաստան** - բարեգործական հիմնադրամի կողմից Թումանյան համայնքի Քարինջ վարչական տարածքում իրականացվել է կաթի մթերման կետի վերանորոգման աշխատանքներ և սարքավորումների ձեռք բերում: **«Վերջին օրերի սրբեր» բարեգործական կորպորացիա** Ամերիկյան ՎՕՍ ԲԿ-ի կողմից Լոռու մարզի Արջուտ, Պուշկինո, Հովնանաձոր և Կաթնաջուր համայնքներում իրականացվել են ջրամատակարարման համակարգի վերանորոգման և խմելու ջրագծի տեղադրման աշխատանքներ:

Ավստրիայի զարգացման և համագործակցության գործակալության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ մեկնարկվել է «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս» երկարաժամկետ ծրագիրը, որի իրականացման համար մարզից ընտրվել են 38 համայնքներ, Բովաձոր, Լեջան, Սվերդլով, Ագարակ Կաթնառատ, Բլագոդարնոյե և Կուրթան համայնքներում հիմնվել են անասնաբուժական կետեր:

ՀՀ ԱՆ և ՉԺՀ-ի առևտրի նախարարության միջև ստորագրված համաձայնագրի շրջանակներում Չինաստանի կառավարության կողմից ՀՀ կառավարությանն անհատույց տրամադրվել են շտապօգնության ռեանիմոբիլներ, շտապ օգնության գծային մեքենաներ և օժանդակ սարքավորումներ: Մեքենաներից 15-ը տրամադրվել են Լոռու մարզի 5 տարածաշրջանների բժշկական կենտրոններին:

Ճանաչողական եւ մշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակներով մարզ են այցելել **ՀՀ-ում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան** Պետրո Լիտվինին, ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնակատար, դեսպանի տեղակալ, առաջին քարտուղար Յան Պլեշինգերին, առևտրի և տնտեսական բաժնի աշխատակից Դավիթ Դիլանյանին, ՀՀ-ում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասը:

Հայաստանում **Եվրոպական միության պատվիրակության ղեկավար**, արտակարգ և լիազոր դեսպան, նորին գերագանցություն Պյոտր Սվիտալսկին, տիկնոջ Աննա Սվիտալսկայի հետ հերթական այցով Լոռի էր ժամանել: Հանդիպման ժամանակ նշվել էր, որ ՀՀ կառավարության առաջարկությամբ Լոռու մարզն, ի թիվս հանրապետության երեք մարզերի, ընդգրկվել է Եվրոպական միության 2018թ.-ին տարեկան գործողությունների ծրագրում, կիրականացվեն բազմաբնույթ ծարգեր և կուղվվեն տարբեր ոլորտների զարգացմանը:

Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանատան աջակցությամբ իրականացվել է Վանաձորի մանկատան խոհանոցի ամբողջությամբ վերանորոգման եւ կահավորման աշխատանքներ: Խոհանոցի բացմանը ներկա է գտնվել **ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպան Ն.Գ. պարոն Ջասիմ Մուհամմադ Ալ Կասիմին:**

ՀՀ Ճապոնիայի դեսպանատան կողմից իրականացված «Կրթության բարենպաստ պայմանների ապահովում Սպիտակի Ան. Շիրակացու անվան թիվ 8 միջնակարգ դպրոցում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել են դպրոցի գազաֆիկացման ջեռուցման համակարգի կոռուցման և արևային մարդկոցների տեղադրման եւ այլ տիպի աշխատանքներ, որին ծանոթանալու համար դպրոց էին այցելել ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանը, **ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջուն Յամադան:**

Լոռու մարզպետարանում հյուրընկալվեցին **ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ռազմական համագործակցության գրասենյակի** երկկողմանի հարաբերությունների գծով սպա, մայոր Դոնալդ Հարպերին և Չադ Մյուրոնին: Այցի նպատակը սեպտեմբերին Լոռու մարզում դեսպանատան կողմից նախաձեռնվող մարզի հրշեջ-փրկարարական ջոկատներում «Վտանգավոր նյութերի դեմ պայքարի ծրագրի» վերապատրաստումների կազմակերպչական հարցերի քննարկումն էր:

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

2018թ.-ի փետրվարի 24-ին աշխատանքային այցով Լոռու մարզ է այցելել ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը Տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանի և այլ պաշտոնատար անձանց ուղեկցությամբ: Նրանք ներկա գտնվեցին մարզխորհրդի նիստին, որի ժամանակ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը հանդես եկավ 2017թ.-ի կատարած աշխատանքների մասին հաշվետվությամբ: Մարզպետ Արթուր Նալբանդյանը ներկայացրեց 2017թ. կատարված աշխատանքները և հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները:

Օգոստոսի 22-ին մի խումբ պաշտոնատար անձանց ուղեկցությամբ աշխատանքային այցով Լոռու մարզում էր ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը: Նա մարզպետ Հրանտ Մարգարյանի, փոխմարզպետներ Արամ Խաչատրյանի, Սերգեյ Սարուխանյանի և Անդրեյ Ղուկասյանի ուղեկցությամբ նախ եղավ Գոգավանի մաքսակետում, ապա մարզպետարանի պատասխանատու պաշտոնյաների, հարկային, տեսչական մարմինների, ուժային կառույցների ղեկավարների, Վանաձորի քաղաքապետի մասնակցությամբ խորհրդակցություն անցկացրեց Լոռու մարզպետարանում:

2018թ.-ի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը Լոռու մարզ է այցելել 5 անգամ:

Առաջին այցը հունիսի 4-ին էր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը Լոռու մարզպետարանի աշխատակիցներին, հանրապետական գործադիր մարմինների տարածքային կառույցների ներկայացուցիչներին, համայնքների ղեկավարներին ներկայացրեց նորանշանակ մարզպետ Հրանտ Մարգարյանին:

Երկրորդ այցը հունիսի 11-ին էր Ստեփանավան քաղաքում ուր տեղի ունեցավ Քաղաքացիների սպասարկման գրասենյակի (ՔՍԳ) պաշտոնական բացման արարողությունը:

Երրորդ այցը օգոստոսի 31-ին էր, այցի նպատակը շահագրգիռ պաշտոնյաների հետ մարզի զբոսաշրջային ներուժը քննարկելն էր և համայնքային խնդիրներին տեղում ծանոթանալը: Ծանաչողական եռօրյա այցելության առաջին օրը Սուրեն Պապիկյանին և մշակույթի նախարար Լիլիթ Մակունցին ընդունեցին Լոռու մարզպետ Հրանտ Մարգարյանը, տեղակալներ Սերգեյ Սարուխանյանն ու Անդրեյ Ղուկասյանը և մարզպետարանի մի շարք պաշտոնյաներ:

Չորրորդ այցը սեպտեմբերի 3-ին էր: Եռօրյա աշխատանքային այցով Օձուն խոշորացված համայնքում նախարարը հանդիպեց բնակիչների, վարչական ղեկավարների և ավագանու անդամների հետ, լսեց նրանց առաջարկություններն ու խնդիրները, որոնք վերաբերվում էին գյուղատնտեսությանը, ճանապարհաշինությանը, կրթական ուսուցիչական ոլորտներին: Հանդիպում տեղի ունեցավ նաև Ալավերդի քաղաքում:

Հասարակական կազմակերպություններին ներկայացուցիչների և բնակիչների հետ նախարարն ու Լոռու մարզպետը քննարկեցին Ալավերու զբոսաշրջային արահետների ծրագրային մոտեցումները, խոսեցին արդյունաբերական քաղաքի բնապահպանական խնդիրների մասին:

Հաջորդ այցը հոկտեմբերի 11-ին էր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում Լոռու մարզպետարանի աշխատակիցներին, հանրապետական գործադիր մարմինների տարածքային կառույցների ներկայացուցիչներին, համայնքների ղեկավարներին ներկայացրեց նորանշանակ մարզպետ Անդրեյ Ղուկասյանին:

Հունվարի 22-ին Թումանյան համայնքում ակտիվացած սողանքը դիտելու նպատակով համայնք էին այցելելի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի տնօրեն Սերգեյ Վալկոն, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչները, տարածաշրջանի համայնքների ղեկավարները, այլ պատասխանատու պաշտոնյաներ: Տեղում քննարկվեցին սողանքային մարմնի հետագա ակտիվացումները կանխելուն ուղղված տարբերակները:

Մարտի 28-ին աշխատանքային այցով Լոռու մարզում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Իզնատի Առաքելյանը: Նախարարին ուղեկցում էին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի գյուղատնտեսական խորհրդատվական տնօրինության ղեկավար Դավիթ Բաբայանը և պաշտոնատար այլ անձինք: Նրանք նախ եղան «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի Վանաձորի մասնաճյուղում, շրջեցին գործարանում, ծանոթացան արտադրական հզորություններին և զարգացման ծրագրերին: Այնուհետև խորհրդակցություն անցկացրեցին Լոռու մարզպետարանում համայնքների ղեկավարների, անասնաբուժական ծառայության ներկայացուցիչների և այլ պատասխանատուների մասնակցությամբ:

Հուլիսի 19-ին աշխատանքային այցով Լոռու մարզում էին ՀՀ գյուղատնտեսության նախարար Արթուր Խաչատրյանը, նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը, կառավարության ներկայացուցիչներ: Լոռու մարզպետ Հրանտ Մարգարյանը, փոխմարզպետ Արամ Խաչատրյանը և մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գրիգոր Հակոբյանը նախարարին դիմավորեցին Մեծ Պարնի համայնքում,

որտեղ կայացավ գյուղատնտեսության նախարարության անասնաբուժական և գյուղատնտեսական սպասարկման կենտրոնի բացման արարողությունը:

Ապրիլի 6-ին աշխատանքային այցով Լոռու մարզում էր ՀՀ առողջապահության նախարար Լևոն Ալթունյանը: Մարզպետ Արթուր Նալբանդյանի ուղեկցությամբ Լ. Ալթունյանը եղավ Վանաձորի բժշկական կենտրոնի նորկառույց մասնաշենքում, ծանոթացավ ստեղծված պայմաններին:

Հոկտեմբերի 12-ին ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնակատար Արսեն Թորոսյանը, Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Ավետիք Էլոյանը, Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը մասնակցեցին նորակառույց Վանաձորի բժշկական կենտրոնի հանդիսավոր բացման արարողությանը:

Հունիսի 30-ին աշխատանքային այցով Լոռու մարզում էր ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը: Նա նախևառաջ եղավ Սպիտակի բժշկական կենտրոնում, տնօրեն Արսեն Մկրտչյանի ուղեկցությամբ շրջեց բուժհաստատությունում, ծանոթացավ պայմաններին և մատուցվող ծառայություններին, ապա զրուցեց բուժանձնակազմի և հիվանդների հետ:

Հուլիսի 7-ին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում անցկացվող Հայաստանում ինժեներական երկրորդ համաժողով-ցուցահանդեսին մասնակցելու նպատակով Վանաձոր էին ժամանել ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանը և Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների փոխնախարար Հակոբ Արշակյանը: Նրանք Լոռու մարզպետ Հրանտ Մարգարյանի հետ միասին մարզպետարանում կարճ խորհրդակցություն անցկացրեցին փոխմարզպետներ Արամ Խաչատրյանի, Անդրեյ Ղուկասյանի, Սերգեյ Սարուխանյանի և ոլորտային պատասխանատու պաշտոնյաների մասնակցությամբ՝ ոլորտներում առկա խնդիրները քննարկելու նպատակով: Այնուհետև նրանք մարզի ղեկավարի և փոխմարզպետների ուղեկցությամբ ներկա գտնվեցին ինժեներական երկրորդ համաժողով-ցուցահանդեսին:

Օգոստոսի 28-ին Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում մարզի դպրոցների տնօրենների ու ուսուցիչների հետ հանդիպեց ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը:

Օգոստոսի 10-ին աշխատանքային այցով Լոռու մարզում էր ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը փոխնախարար Վահե Բուդումյանի ուղեկցությամբ: Նա մարզպետի տեղակալներ Սերգեյ Սարուխանյանի, Արամ Խաչատրյանի և Անդրեյ Ղուկասյանի, մարզպետարանի պաշտոնյաների, մարզի մտավորականների մասնակցությամբ խորհրդակցություն անցկացրեց մարզպետարանի դահլիճում:

«Վանաձորի օր-2018» համաքաղաքային ավանդական տոնակատարության «Հաղթող սերունդների քաղաք» խորագիրը կրող միջոցառումների մեկնարկը տրվեց Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցուց, որտեղ տեղի ունեցավ միասնական աղոթք և մոմավառություն՝ հանդիսապետությամբ Տեր Օհան ավագ քահանա Լուսարարյանի: Ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը, Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը, փոխմարզպետ Արամ Խաչատրյանը, Վանաձորի քաղաքապետ Մամիկոն Ասլանյանը, մարզպետարանի ու քաղաքապետարանի աշխատակիցներ, հյուրեր:

Դեկտեմբերի 4-ին աշխատանքային այցով Լոռու մարզում էր ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը՝ տիկնոջ Նունե Սարգսյանի հետ: Նրանց մարզում ուղեկցում էր մարզպետի տեղակալ, մարզպետի ժամանակավոր պաշտոնակատար Սերգեյ Սարուխանյանը:

Նախագահի առաջին կանգառը եղել է բազմաճյուղ տնտեսություն վարող Սպիտակի «Ագրոհոլդինգ Արմենիա» ընկերությունում: Նախագահ Արմեն Սարգսյանը և տիկին Նունե Սարգսյանը Ս. Սարուխանյանի ուղեկցությամբ այնուհետ եղել են Սպիտակ քաղաքում, ծաղիկներ են խոնարհել 1988 թվականի ավերիչ երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարին: Աշխատանքային այցի ավարտին այցելություն է կատարվել նաև Լոռու մարզի Դեբեդ համայնքում 2018 թվականի մայիսի 27-ից գործող «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (COAF) ՍՄԱՐԹ-կենտրոն:

Դեկտեմբերի 7-ին Լոռու մարզում էր ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը 1988-ի աղետալի երկրաշարժի 30-րդ տարելիցի առթիվ, զոհերի հիշատակի տուրք մատուցելու նպատակով: Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանի և այլ պաշտոնյաների ուղեկցությամբ նա նախ եղավ Սպիտակ քաղաքում, ծաղիկներ խոնարհեց երկրաշարժի զոհերին նվիրված հուշարձանին, այնուհետև Սպիտակի սուրբ Հարություն եկեղեցում մասնակցեց մոմավառությանը:

Վարչապետի պաշտոնակատարի հաջորդ կանգառը Վանաձոր քաղաքում էր: Նախ ծաղկեպսակ տեղադրվեց Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու Սրբոց Նահատակաց պուրակում կանգնեցված երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված խաչքարի մոտ, որից հետո ներկաները մասնակցեցին միասնական աղոթքին և մոմավառությանը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, մարզպետ Անդրեյ Ղուկասյանը, Վանաձորի քաղաքապետ Մամիկոն Ասլանյանը և այլ պաշտոնյաներ ներկա գտնվեցին նաև Վանաձորի թիվ 11 մանկապարտեզի բացման հանդիսավոր արարողությանը:

Դեկտեմբերի 22-ին ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը Վանաձորում ներկա գտնվեց ռուս-իրանական «ՌԱԴ ՍԱՆ ՎԱՇԱՄԻՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կոմպոզիտային բալոնների (գազաբալոնների) արտադրության առաջին հոսքագծի բացման արարողությանը: Ներկա էին նաև փոխվարչապետի պաշտոնակատար Տիգրան Ավինյանը, Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը, այլ պաշտոնյաներ, հյուրեր:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Լրափոփություն

Լոռու մարզում գործում են 5 հեռուստաընկերություն («Ֆորտունա», «Լոռի ԹՎ», «ՄԻԳ ԹՎ», «Վանաձոր», «Անկյուն+3»), 1 ռադիոխմբագրություն, տեղական լրատվական երկու կայք (lorinews.am, armweeklynews.am), 13 տպագիր պարբերական («Լոռու մարզ», «Վանաձորյան խճանկար», «Սպեղանի», «Հայրենիք և եկեղեցի», «Հրաշամանուկ», «Երկունք», «Կանաչ Լոռի», «Մաշտոց», «Արվեստագետ», «Թումանյանական աշխարհ», «Լուսարձակ», «Բազում», «Մարգահովտի Ջորավիգ»): Բացի տեղական լրատվամիջոցներից, մարզում լրագրական գործունեություն է ծավալում նաև հանրապետական զանգվածային լրատվամիջոցների 8 թղթակից:

Տպագիր լրատվամիջոցներ ունեն Վանաձորը (1 օրաթերթ, 1 շաբաթաթերթ, 4 պարբերաթերթ և 3 ամսագիր), Ալավերդին՝ 1 շաբաթաթերթ, Սպիտակը՝ 2 ամսաթերթ և Մարգահովտ գյուղը՝ 1 պարբերաթերթ:

Հեռահաղորդակցություն

Մարզի տարածքում հեռուստաաշտարակային ցանցով հեռարձակվում են հանրապետական և օտարերկրյա թվով 8 հետևյալ հեռուստաընկերությունների հաղորդումները՝

- «Հ1» հանրային հեռուստաընկերություն
- «Հ2» հեռուստաընկերություն
- «Արմենիա» հեռուստաընկերություն
- «Շողակաթ» հեռուստաընկերություն
- «Շանթ» հեռուստաընկերություն
- «Կենտրոն» հեռուստաընկերություն
- «Երկիր մեդիա» հեռուստաընկերություն(հեռարձակվում է միայն Վանաձորում):
- PTP հեռուստաընկերություն:

Բացի վերոհիշյալներից, Վանաձորում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ, որոնք առավել մեծ թվով ծրագրեր դիտելու հնարավորություն են ընձեռում:

Լրատվություն

Լոռու մարզում գործում են 5 հեռուստաընկերություն, 1 ռադիոխմբագրություն/, տեղական լրատվական երկու կայք /lorinews.am, armweeklynews.am/, 13 տպագիր պարբերական:

Հեռահաղորդակցություն

Թվային հեռարձակման շնորհիվ մեկընդմիջտ լուծվել է հատկապես գյուղական համայնքներում հեռուստահաղորդումների որակի ապահովման երբեմնի խնդիրը:

Բացի վերոնշյալներից, Վանաձորում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ, որոնք առավել մեծ թվով ծրագրեր դիտելու հնարավորություն են ընձեռում:

Հեռուստաընկերություն ունի 2 համայնք՝ Վանաձորը՝ 4, մեկ հեռուստաընկերություն՝ Ալավերդին: Սպիտակ և Տաշիր քաղաքներում նախկինում գործող հեռուստաընկերություններն այլևս հաղորդումներ չեն հեռարձակում:

Տեղական ռադիոցանց ունի Վանաձոր քաղաքը:

Մարզային և հանրապետական զանգվածային լրատվամիջոցներով մշտապես լուսաբանվել են մարզպետարանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող իրադարձությունները, մարզխորհրդի նիստերը, հանրային հնչեղության բանակցությունները, խորհրդակցությունները: Իսկ այնպիսի հարցերի մասին, որոնք իրենց բնույթով ռազմավարական, սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն են ունեցել, մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների և գլխավոր մասնագետների հետ կազմակերպվել են հարցազրույցներ, ասուլիսներ և այլն:

2018թ.-ի ընթացքում տեղական հեռուստահաղորդումներով և մարզային թերթում բավարար չափով լուսաբանվել են մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը, իրադարձային միջոցառումները, իսկ մարզխորհրդի նիստերը բաժնի կողմից ընդարձակ լրատվությամբ լուսաբանվել են տեղական լրատվամիջոցներով և մարզպետարանի պաշտոնական կայքէջում, ֆեյսբուքյան և յուրօրինակ էջերում:

Մարզի բոլոր ԶԼՄ-ներին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն Լոռու մարզպետարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, ծրագրերի, կազմակերպվող միջոցառումների մասին: Հանրապետության բարձրաստիճան

պաշտոնյաների մարզային աշխատանքային այցելությունների ժամանակ ՁԼՄ-ների ներկայացուցիչներին տրամադրվել են մամլո հաղորդագրություններ, սահմանված կարգով կատարվել լրագրողների հավատարմագրում:

Հաշվետու տարվա ընթացքում օպերատիվորեն սպասարկվել է նաև Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքէջի «Տեղեկատվական հարթակ» բաժինը, ուր զետեղվել են հաղորդագրություններ մարզին առնչվող հանրային կարևորության իրադարձությունների, դեպքերի մասին:

Բաժինը հետևողական է եղել հանրապետական և տեղական լրատվամիջոցներում Լոռու մարզին վերաբերող հարյուրից ավելի կարևորագույն հրապարակումների նկատմամբ: Քննադատական բնույթի հրապարակումների կրկնօրինակները տրամադրվել են մարզպետին, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների պետերին համապատասխան հետևություն անելու, հարկ եղած դեպքում արձագանքելու համար:

Լոռու մարզպետարանի գործունեության հանրային իրազեկման գլխավոր տեղեկատվական բազան շարունակում է մնալ տարածքային կառավարման միասնական համակարգում գործող մարզպետարանի www.ori.mtad.am պաշտոնական կայքը, որի «Տեղեկատվական հարթակ» բաժնի «Նորություններ» էջի սպասարկումը համարվում է բաժնի կարևորագույն գործառնություններից մեկը: Այստեղ զետեղվում է Լոռու մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը լուսաբանող տեսանյութերով մշտապես թարմացվող ամենօրյա տեղեկատվություն: Այդ էջում են լուսաբանվել նաև ՀՀ պաշտոնատար անձանց, արտերկրի պատվիրակությունների այցելությունները, մարզային հիշարժան դեպքերն ու իրադարձությունները:

«Լոռու մարզպետարան» ֆեյսբուքյան էջի բաժանորդների թիվը ներկա պահին հասնում է 5000-ի: Մարզպետարանի յուրօրյան էջում ևս օպերատիվ կարգով տեղ են գտնում մարզպետարանի գործունեությանն առնչվող տեսանյութեր:

Բաժինն իրականացնում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակներում զանգվածային լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից ու քաղաքացիներից մարզպետարանին ուղղված հարցումներին ժամանակին և պատշաճ պատասխանելու կանոնակարգման պարտականությունը: 2018թ. ստացվել է մարզպետին և կառուցվածքային ստորաբաժանումներին ուղղված 25 գրավոր և շուրջ 100-ից ավելի բանավոր հարցում, որոնց տրվել է հիմնավոր պատասխան՝ օրենքով սահմանված ժամկետների մեջ:

Այս մասին յուրաքանչյուր կիսամյակ տեղեկատվություն է ներկայացվում «Ինֆորմացիայի ազատության կենտրոնին»:

Աշխատանք Հասարակական կազմակերպությունների հետ

Մարզում գրանցում ունեն 50-ից ավելի հասարակական կազմակերպություններ, որոնցից ակտիվորեն գործում են շուրջ 30-ը: Դրանցից շատերը ակտիվ համագործակցում են մարզպետարանի աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի, մյուս ստորաբաժանումների հետ:

Մարզպետարանի հետ առավել ակտիվ փոխհամագործակցում են «Առավոտ», «Խաչվող ուղիներ», հունական «Էլպիդա», «Օրիոս» բնապահպանական, «Օրրան», «Հայկական Կարիտաս», կազմակերպությունները, «Հայկական Կարմիր Խաչի Լոռու մարզային կազմակերպությունը», «Թոփչք», «Համալսարանական կրթությամբ կանայք»,

«Լիարժեք կյանք», «Զանգակ», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Մանկական կենտրոն» և այլ ՀԿ-ներ:

ՀԿ ներկայացուցիչները մշտապես հրավիրվում են մարզպետարանում տեղի ունեցող կամ մարզպետարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին, բաժինը մշտապես համագործակցում է ՀԿ-ների հետ, անհրաժեշտության դեպքում օգնելով նրանց մարզում նրանց կողմից կազմակերպվող միջոցառումների ժամանակ:

Ազգային փոքրամասնությունները բաժնի գործառույթներում

Լոռու մարզի ներկայիս տարածքը խորհրդային տարիներին ազգային փոքրամասնություններով ամենաբնակեցվածներից էր: Սակայն վերջին մեկուկես-երկու տասնամյակներում տարածաշրջանում սկիզբ առած էթնիկական տեղաշարժերի հետևանքով արտագաղթեցին նաև մեծ թվով այլազգի բնակիչներ:

Լոռու մարզում բնակվում է շուրջ 3000 ռուս, 800 հույն, 600 եզդի, 20 քուրդ, 8 ասորի, 300 այլ ազգերի ներկայացուցիչներ: Հայ ազգաբնակչության հետ նրանք ապրում են իրավահավասարության պայմաններում և բոլոր պայմաններն ունեն ազգային մշակույթի ու կրթության պահպանման համար: Դրանց են նպատակաուղղված ազգային հասարակական ու մշակութային կազմակերպությունները:

Մարզպետարանը մարզում բնակվող ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներին իրազեկվում, հարկ եղած դեպքում համակողմանի աջակցություն է ցուցաբերում նրանց հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Մարզում գործում է այդպիսի 5 կազմակերպություն՝ հունական սփյուռքի ազգապահպանական «Էլպիդա», «Պոնտոս» և «Ակմի», ռուսազգի փոքրամասնության սոցիալական, մշակութային, կրթական հիմնախնդիրներով զբաղվող «Օբշչեստվո Ռուսիի», ազգային մշակույթի և ազգամիջյան կապերի զարգացման հարցերով զբաղվող «Ուկրաինա»: Նրանց ներկայացուցիչները մշտապես հրավիրվում են պետական, ազգային տոների հանդիսություններին, համահամայնքային և մարզային միջոցառումներին: Տոնահանդեսներում կատարումներով հանդես է գալիս ուկրաինացիների երգչախումբը:

2018թ. նույնպես մարզի զանգվածային լրատվամիջոցները բազմիցս լուսաբանել են ազգային փոքրամասնությունների առօրյան:

Ազգությունների ներկայացուցիչների հետ հարաբերություններում տիրում է փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ:

Աշխատանք կրոնական կազմակերպությունների հետ

2018թ. մարզում գործունեություն են ծավալել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գուգարաց թեմը, Հայ կաթողիկե եկեղեցու Տաշիրի թեմը, Հայ Ավետարանական եկեղեցու Լոռու թեմը, Վանաձորի Ավետարանական հավատքի, մորմոնների(Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբեր), Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցիները, Եհովայի վկաների հետևորդները:

Մարզպետարանի առնչությունները՝ գործող կրոնական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ, եղել են պաշտոնեական գործառույթներից բխող հանգամանքներով:

Տարվա ընթացքում Լոռու մարզի զանգվածային լրատվամիջոցները՝ անդրադարձել են ազգային փոքրամասնությունների առօրյայի ու խնդիրների լուսաբանմանը, կրոնական կազմակերպությունների գործունեությանը:

Կրոնական կազմակերպությունների առաջնորդները, ներկայացուցիչները որևէ դժգոհություն չունեն մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվություններից:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Լոռու մարզային փրկարարական վարչությունը ամբողջությամբ և ժամանակին է կատարել 2018 թվականի ընթացքում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ով նախատեսված միջոցառումները, վերադասի կողմից արձակված հրամանները, հրահանգները և հանձնարարականները, ինչպես նաև լրացուցիչ պահանջվող միջոցառումները:

Մշակվել և սահմանված կարգով մարզպետի հաստատման է ներկայացվել Լոռու մարզի տարածքում 2018թ. ընթացքում հնարավոր ջրհեղեղների հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման մասին, որոշման նախագիծը հավելվածների հետ միասին, որը հաստատվել է 8 փետրվարի 2018թ. թիվ 35-Ա որոշմամբ:

2018 թվականի ընթացքում Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից սպասարկվել են արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների առաջացման վերաբերյալ 1258 ահազանգ, որոնցից՝ 448-ը – տեխնածին, 32-ը – տարերային, 778-ը – սոցիալ - կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Արտակարգ դեպքերի ու պատահարների հետևանքով զոհվել են 35, վիրավորվել 1106 մարդ: Նյութական վնասի չափը կազմել է 135.020.364 դրամ:

2017 թ-ի ընթացքում ԼՄՓ վարչություն հաղորդագրություններ են ստացվել մարզում գրանցված 969 արտակարգ դեպքերի և պատահարների վերաբերյալ, որոնցից՝ 645-ը - տեխնածին, 44-ը - տարերային և 280-ը - սոցիալ-կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Զոհվել են 45, վիրավորվել 680 մարդ: Նյութական վնասը կազմել է 177.470.219 դրամ:

2017թ-ի համեմատությամբ ընդհանուր դեպքերն աճել են 289-ով, ընդ որում 498-ով աճել է սոցիալ-կենցաղային և այլ բնույթի դեպքերը, իսկ 197-ով և 12-ով նվազել են համապատասխանաբար տեխնածին և տարերային բնույթի դեպքերը: Զոհվածների թիվը նվազել է 13-ով, վիրավորներիինը՝ աճել 426-ով: 2017թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ 42.449.845 դրամով նվազել է արտակարգ դեպքերի հետևանքով առաջացած նյութական վնասի չափը:

Դեպքերի արձագանքման և հետևանքների վերացման նպատակով ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումների կողմից իրականացվել է՝ 1459 ելք (2017թ.՝ 1788), այդ թվում՝ հրդեհների - 297 (2017թ.՝ 517), վթարների և պատահարների - 123 (2017թ.՝ 141), կեղծ կանչի 28 (2017թ.՝ 40), կենցաղային օգնության - 137 (2017թ.՝ 128), այլ մեկնումներ - 874 (2017թ.՝ 877):

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անց են կացվել՝

❖ Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն

սեպտեմբերի 14-ին «Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում»

թեմայով: Ուսումնավարժության գործնական աշխատանքներին ներգրավվել են՝ Լոռու մարզային փրկարարական վարչությունից և ենթակա ստորաբաժանումներից՝ 6 միավոր տեխնիկա և 30 մարդ անձնակազմ, անտառտնտեսության Գուգարքի ու Եղեգնուտի մասնաճյուղերից՝ 2 միավոր տեխնիկա և 20 մարդ անձնակազմ, ՊՆ թիվ 3 բանակային կորպուսից՝ 3 միավոր տեխնիկա և 15 մարդ անձնակազմ, «Հարավ-Կովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ից՝ հրշեջ-գնացքը և 8 մարդ անձնակազմ, «ՀԷՅ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղից՝ 1 միավոր տեխնիկա և 4 մարդ անձնակազմ, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Լոռի մասնաճյուղից՝ 1 միավոր տեխնիկա և 2 մարդ անձնակազմ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից՝ 1 միավոր տեխնիկա և 3 մարդ անձնակազմ, Ոստիկանության Լոռու մարզային վարչությունից և ՃՈ 2-րդ սպայական գումարտակի 5-րդ վաշտից՝ 3 միավոր տեխնիկա և 9 մարդ անձնակազմ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռու ԳԳՄ-ից՝ 2 միավոր տեխնիկա և 8 մարդ անձնակազմ, Փամբակ, Դարպաս և Վահագնի համայնքների արձագանքող ստորաբաժանումներից՝ 15 մարդ անձնակազմ: Ընդհանուր առմամբ գործնական աշխատանքներին մասնակցել են 20 միավոր տեխնիկա և 114 մարդ անձնակազմ: Ներկա են գտնվել ԱՄՆ Կանգաս նահանգի Ազգային Գվարդիայի պատվիրակությունը՝ ղեկավար գեներալ-լեյտենանտ Լի Թաֆանելիի գլխավորությամբ, Միացյալ Թագավորության դեսպանատան ռազմական կցորդի տեղակալ, մայոր Ուիլյամ Ջորջը:

❖ **Շտաբային ուսումնավարժություններ**

✓ հոկտեմբերի 24-ին՝ «ՀՀ Լոռու մարզի բնակչության և տարածքային պաշտպանության կազմակերպումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով,

✓ *ապրիլի 10-23-ը՝ «Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հեղեղանքների վերացում» թեմայով Տաշիր, Մեծավան, Սարչապետ, Արևաշող, Գեղասար, Գոգարան, Լեռնանցք, Լեռնավան, Լուսադրյուր և Խնկոյան համայնքների կողմից,*

✓ *հունիսի 1-14-ը՝ «Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում» թեմայով Սպիտակ, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Հարթագյուղ, Ղուրսալ, Շիրակամուր, Ջրաշեն, Սարալանջ, Սարահարթ և Սարամեջ համայնքների կողմից,*

✓ սեպտեմբերի 17-28-ը՝ «Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով Ստեփանավան, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Գուգարք, Դարպաս, Լերմոնտովո, Մարգահովիտ, Ֆիոլետովո և Լեռնապատ համայնքների կողմից,

❖ **Հատուկ տակտիկական ուսումնավարժություններ.**

✓ 02.02-ին «Ավտոճանապարհին առաջացած մերկասառույցի վերացման միջոցառումներ» թեմայով՝ «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից,

✓ 09.02-ին «Ձնաբքի հետևանքով ավտոճանապարհին ձյան մեջ խցանված ավտոմեքենաների դուրսբերում և ավտոճանապարհի մաքրում» թեմայով՝ «Տաշիր ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից,

✓ 04.10-ին «Ավտոճանապարհին առաջացած քարաթափման հետևանքների վերացում» թեմայով՝ «Սպիտակի Ճանապարհ» ՓԲԸ-ի կողմից,

✓ 12.10-ին «Ավտոճանապարհին առաջացած սելավների և ջրհեղեղների հետևանքների վերացում» թեմայով՝ «Թումանյան ՃՇՇՁ»-ի կողմից,

✓ 06.11-ին «Միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմայով՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռի ԳԳՄ-ի կողմից,

✓ 13.11-ին «Էներգետիկ համակարգում վթարի հետևանքի վերացում» թեմայով՝ «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի կողմից,

✓ 21.11-ին «Վանաձոր քաղաքի ջրամատակարարման համակարգի խոշոր վթարի դեպքում բնակչությանը ջրով ապահովման կազմակերպում» թեմայով՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի Վանաձորի տեղամասի կողմից,

✓ 28.11-ին «Հեռավոր և դժվարամատչելի տարածքներում աշխատանքներ իրականացնող փրկարարական ուժերին կապով ապահովում» թեմայով՝ «Արմենթել» ՓԲԸ Հյուսիսային տարածքային կենտրոնի կողմից:

✓ ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ՝

Վանաձորի թիվ 8, Սպիտակի թիվ 3 հիմնական, Գյուլագարակի միջնակարգ դպրոցներում «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում տարահանման կազմակերպումը» թեմայով, իսկ Օձունի թիվ 2 միջնակարգ, Վանաձորի թիվ 5 ավագ և Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոցներում «Հակառակորդի օդուժի հարձակման դեպքում պատսպարման միջոցառումների կազմակերպումը» թեմայով:

Մարզի ուսումնական հաստատություններում «Մարտի 1-ը Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության օրն է» թեմայով դասախոսություններ են անցկացվել Վանաձորի №1 հիմնական, Վանաձորի №13 ավագ, Բազումի միջնակարգ, Մարգահովիտի միջնակարգ, Ղուրսալի միջնակարգ, Սարահարթի միջնակարգ, Ալավերդու №5 ավագ և Հաղպատի միջնակարգ դպրոցներում:

✓ ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ՝

սեպտեմբերի 6-ից 7-ը Լոռի Բերդի հիմնական, Արևաշողի միջնակարգ և Գուգարքի թիվ 1 ավագ դպրոցում՝ «Հրեջ-փրկարարական գույքի ցուցադրում» թեմայով, իսկ Վանաձորի թիվ 27 հիմնական, Սարչապետի միջնակարգ և Ախթալայի թիվ 1 միջնակարգ դպրոցներում՝ «Տուժածների դուս քերումը կիսաքանդ շենքի 3-րդ հարկից» թեմայով անց են կացվել հատուկ տակտիկական ուսումնավարժություններ:

Մարզի ուսումնական հաստատություններում ԱԻ աշխատակցի օրվան նվիրված «ՀՀ ԱԻ նախարարության գործունեությունը և հիմնական խնդիրները» թեմայով դասախոսություններ են անցկացվել Սպիտակի №5 հիմնական, Լերմոնտովյի միջնակարգ, Վանաձորի №25 ներառական, Նորաշենի միջնակարգ, Օձունի №1 միջնակարգ, Ստեփանավանի №3 հիմնական, Վանաձորի №4 հիմնական և Վանաձորի №13 ավագ դպրոցներում:

❖ Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն.

06.12-ին՝ «Ուժեղ երկրաշարժի դեպքում Վանաձորի պետական համալսարանի աշխատակազմի և ուսանողների պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով:

❖ Օբյեկտային վարժանք.

✓

մարտի 23-ին ՀՀ ԱՆ

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի կողմից՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը համաճարակի հանգեցնող ինֆեկցիոն հիվանդության ծագման դեպքում» թեմայով,

✓ սեպտեմբերի 13-ին Վանաձորի №1 հայրուկ (օժանդակ) դպրոցի և սեպտեմբերի 19-ին «Վանաձորի մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի կողմից՝ «Ուժեղ երկրաշարժի դեպքում

կազմակերպության անձնակազմի և սաների պաշտպանության կազմակերպումը» թեմայով:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի №34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 46-Ն որոշման համաձայն մշակված և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 10.01.2018թ-ին հաստատված պլանի՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2018թ. ուսումնական տարում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման դասընթացներին, 2018թ-ի ընթացքում ուսուցման ծրագրով նախատեսված 35 ուսուցանվողներից փաստացի ուսուցում են անցել 30 մասնակիցներ:

Կապի և ազդարարման համակարգ

Մարզի բնակչության ազդարարման համար պահանջվում է 203 էլեկտրական չլակ:

2018թ. ճշգրտվել են ՀՀ Լոռու մարզում բնակչության ազդարարման համար տեղադրված էլեկտրական չլակների քանակներն ու դրանց տեխնիկական վիճակները: Բոլոր չլակները լուսանկարվել են: Արդյունքում պարզվել է, որ մարզում առկա է 49 էլեկտրական չլակ, որոնցից 14-ն անսարք է:

ԶՈՐԱԿՈՉ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Իրականացվել է վարչական հսկողություն մարզի 18 համայնքներում:
2. Ի կատարումն ՀՀ կառավարության որոշման անց է կացվել թվով 3 շտաբային մարզումներ:

Ս/թ սեպտեմբերի 11-ից 13-ը ՀՀ Լոռու մարզում անց է կացվել «Շանթ-2018» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարություններ, որը անց է կացվել պահանջվող մակարդակով: Ի հայտ են եկել որոշ թերություններ, խնդրահարույց հարցեր և արվել են մի շարք առաջարկություններ:

Վերամշակվել է շտաբային մարզումների հետ կապված մի շարք փաստաթղթերի ցանկ՝ տեղանքի քարտեզների հետ միասին:

3. Աջակցություն է ցուցաբերվել տարածքային զինվորական կոմիսարիատներին, հատկապես պարտադիր զինվորական ծառայության զորակոչի իրականացման գործում, առաջին զորակոչերը կազմակերպվել և հանրապետական հավաքակայան են ուղարկվել մեծ տոնախմբությամբ, որի ժամանակ Լոռու մարզպետի կողմից զորակոչիկներին տրամադրվել է առաջին օգտագործման պարագաներ:

4. 2018թ. զորակոչի պետական առաջադրանքը կատարվել է 108.5 %-ով (2018թ. ձմեռային զորակոչը 104 %, 2018թ. ամառային՝ 113 %):

«Ես եմ» ծրագրով զորակոչվել են 15 զորակոչիկներ:

5. Պարբերաբար հսկողական և բացատրական աշխատանքներ են տարվել Լոռու մարզի տարածքում այլընտրանքային (7 մարդ) աշխատանքային ծառայության անցած աշխատողների հետ:

6. Վերանայվել է զոհված զինծառայողներին ընտանիքներին ամրագրված պաշտոնատար անձանց տվյալները:

7. Իրականացվել է Լոռու մարզպետարանի անձնակազմի, Լոռու մարզի համայնքների, դպրոցների և զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների զինապարտ քաղաքացիների ամրագրման գործընթացը:

8. Մշտական աշխատանքներ է տարվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձանց շրջանում, որպեսզի ժամանակին և սահմանված ձևով վարեն զինապարտների գրանցամատյանները, զինվորական հաշվառման ենթակա անձանց ցուցակները ներկայացնեն նրանց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ:

9. Բարոյական, ֆինանսական և նյութական աջակցություն է ցուցաբերվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և ադրբեջանական զորքերի շփման գծում 2016 թվականի ապրիլի 2-5-ը տեղի ունեցած քառօրյա պատերազմի ժամանակ զոհված ու վիրավոր զինվորների ընտանիքներին: Համայնքների ղեկավարների և տարածաշրջանային զինվորական կոմիսարների հետ համատեղ մշտական ուշադրության կենտրոնում է պահվել զոհված և վիրավոր զինծառայողների ընտանիքներին: Այս գործընթացը ունի շարունակական բնույթ: Հունվարի 28-ին Հայոց բանակի կազմավորման 25 – ամյակի և Նոր Տարվա կապակցությամբ (թվով 6 ընտանիք) այցելել ենք զոհված և վիրավոր զինծառայողների ընտանիքներին և աջակցել ենք դրամական օգնությամբ:


10. Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու հարցի վերաբերյալ ՀՀ Լոռու մարզային զորակոչային հանձնաժողովը կայացրել է 4 նիստ, հաստատվել են թվով 58 անձնական գործեր և տրվել են եզրակացություններ:

11. Մասնակցություն ենք ունեցել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում 2018 թվականի օգոստոսի 27-ից 31-ը անցկացվելիք միջգերատեսչական վերապատրաստման դասընթացին՝ «Պետության պաշտպանության կազմակերպումը խաղաղ և պատերազմական ժամանակ՝ խորհրդարանական կառավարման և միջգերատեսչական համագործակցության պայմաններում» թեմայով, օգոստոսի 28-ին ՀՀ ԱԻՆ Լոռու մարզային փրկարարական վարչությունում մասնակցել են Ուսումնավարժության նախապատրաստական աշխատանքային խորհրդակցությանը՝ «Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով, «Ուժեղ երկրաշարժի դեպքում Վանաձորի պետական համալսարանի աշխատակազմի և ուսանողների պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը՝ 2018թ. դեկտեմբերի 5-ին Հայքի Հրապարակում իսկ 2018թ. դեկտեմբերի 6-ին Վանաձորի պետական համալսարանում:

12. Ակտիվ մասնակցություն ենք ունեցել «Պատիվ ունեն», «Ես եմ» ծրագրի իրականացման գործընթացին և միաժամանակ լուրջ աշխատանքներ են տարվել հանրակրթական դպրոցներում նախազորակոչային պատրաստության գործընթացին: Տեղի է

ունեցել «Ես եմ» ծրագրի լուսաբանում և խորհրդակցություն Վանաձորի Հ.Թումանյանի անվան N3 հիմնական դպրոցում:

13. Մշտական ուշադրության կենտրոնում է հանրակրթական դպրոցներում նախազորակոչային պատրաստության իրականացման գործընթացը և հետևողական աշխատանք է տարվել ռազմական ուսումնական հաստատություններում դիմորդ-թեկնածուներով շարքերը համալրելու գործում:





ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Լոռու մարզի ոստիկանության վարչության և ենթակա բաժինների կողմից 2018թ. ընթացքում գրանցվել է **1651** հանցագործություն, որը նախորդ տարվա համեմատ աճել է 291-ով կամ 21.4%-ով: Բացահայտումը կազմել է **80.6%**, կամ 9.7%-ով պակաս քան 2017թ.-ին:

ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Տնտեսական հանցագործություն - 20 հանցադեպ, 2017թ. համեմատ աճել է 1-ով կամ 5.3 %-ով

Այլ ծառայությունների գծով - 1631 հանցադեպ, 2017թ. համեմատ աճել է 290-ով կամ 21.6%-ով:



2018թ. նախորդ տարվա համեմատ փոփոխվել է հետևյալ հանցատեսակների քանակը.

Սպանություններ

4 հանցադեպ՝ կայուն է

Անձնական գույքի հափշտակում

491 հանցադեպ՝ աճել է 118-ով կամ

31.6%-ով

Հասարակական վայրերում կատ. հանցագործութ.

0 հանցադեպ՝ նվազել է 2-ով կամ

200%-ով

Անչափահասների կողմից կատ. հանցագործութ.

22 հանցադեպ՝ նվազել է 3-ով կամ

12.0%-ով:

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզպետարանում կա 138 հաստիք, որից 120-ը՝ քաղաքացիական ծառայողների հաստիքներն են (21-ը առանձնացված ստորաբաժանումներում), որից թափուր է 14-ը: 4 պաշտոններ ժամանակավոր (ֆիզ.արձակուրդ) թափուր են:

2018 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 1 մրցույթ, անց է կացվել 1-ը, ընդհանուր դիմորդների քանակը՝ 1, մասնակիցների քանակը 1, իսկ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից Լոռու մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոն զբաղեցնելու համար՝ 1 մրցույթ: Ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարվել է անց է կացվել 14 մրցույթներ:

Վերապատրաստվել են 32 քաղաքացիական ծառայողներ

2018 թվականի ընթացքում աշխատանքից ազատվել են 32 քաղծառայողներ, ընդունվել 14-ը: Քաղաքացիական ծառայության մասով խրախուսվել է 1 և կարգապահական տույժի է ենթարկվել 1 աշխատակից: 2 քաղծառայողների շնորհվել է իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված դասային աստիճան, 1 քաղծառայողի իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան:

2018թ-ին նախապատրաստվել են՝

- ✓ Լոռու մարզպետի 113 որոշումների և 300 կարգադրությունների նախագծեր,
- ✓ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 510 հրամանների նախագծեր,
- ✓ մրցույթով անցած 20 դպրոցի տնօրենների պայմանագրերի նախագծերը,
- ✓ ՔԾԽ-ի 18 գրությունների նախագծեր,
- ✓ Աշխատակիցների 21 տեղեկանքներ
- ✓ 12 քաղաքացիների դիմումների պատասխանների նախագծեր:

Ամփոփվել է աշխատակիցների կիսամյակային և տարեկան կատարողականների գնահատման արդյունքները (բոլոր աշխատակիցները ունեցել են կատարողականի 60%-ից բարձր ցուցանիշ):

**ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2018Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2018թ. ընթացքում մարզպետի կողմից

- ընդունվել է 441 որոշում,
- արձակվել է 346 կարգադրություն:

Մարզպետի որոշումները վերաբերում են հետևյալ հարցերին.

• ՏԻՄ	8	1.8%
• առողջապահություն և սոց. ապահովություն	51	11.6%
• կադրային հարցեր	106	24.0%
• կրթություն, մշակույթ և սպորտ	112	25.4%
• ֆինանսական հարցեր	114	25.9%
• տրանսպորտ	2	0.5%
• ԱԻ և ՔՊ	16	3.6%

• զորակոչ	1	0.2%
• գաղտնի	10	2.3%
• իրավական և մասնագիտական հսկողություն	1	0.2%
• այլ	20	4.5 %

Մարզպետի կարգադրությունները վերաբերում են հետևյալ հարցերին.

• կադրային հարցեր	300	86.75%
• ֆինանսական հարցեր	4	1.2%
• առողջապահություն և սոց. ապահովություն	7	2.0%
• կրթություն	10	2.9%
• քաղաքաշինություն	1	0.3%
• գյուղատնտեսություն և բնապահպանություն	3	0.9%
• հողօգտագործում	5	1.4%
• մշակույթ և սպորտ	3	0.9%
• այլ	13	3.8%

Մշտապես իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննություն, խմբագրման աշխատանքներ, համարակալում, գրանցում գրանցամատյաններում և էլեկտրոնային առաքում շահագրգիռ ստորաբաժանումներին: Մարզպետի որոշումների և կարգադրությունների պատճենները յուրաքանչյուր ամիս ներկայացվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով: ՀՀ օրենսդրության խախտումների հիմնավորմամբ հետ վերադարձված իրավական ակտեր չունենք:

Մարզպետարանի գլխավոր քարտուղարի կողմից 2018թ. ընթացքում արձակվել է 557 հրաման՝ հիմնականում կադրային հարցերի վերաբերյալ:

2018թ. ընթացքում բաժնի կողմից կազմվել է 327 գրություն (2017թ.՝ 245), որոնցից՝ 70 դիմումի պատասխան (2017թ.՝ 32) և 257 գրություն (2017թ.՝ 213):

Նախորդ տարիներին մարզի համայնքներին հատկացված սերմացուների դիմաց գոյացած պարտքերի գումարների մի մասը վերականգնվել են, մարզպետարանի պարտավորությունը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նկատմամբ նվազեցվել է պարտատիրոջ կողմից և արդյունքում 2018թ. դեկտեմբերի 27-ի դրությամբ սերմացուների դիմաց մարզի կողմից ենթակա է վճարման 1.434.983 դրամ, որից՝ 1.347.619 դրամը չկատարված պայմանագրային պարտավորությունն է, 87.364 դրամը՝ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի կողմից Լոռու մարզի մի շարք դպրոցների վերաբերյալ 18.07.2018թ. կայացվել են պարտավորության գումարների վերաբերյալ գանձման որոշումներ: Ըստ այդ որոշումների Լոռու մարզի թվով 8 դպրոցների պարտավորությունը կազմել է 2.936.169 ՀՀ դրամ: Մարզպետարանը դիմել է ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովին՝ վերը նշված բռնագանձման որոշումներն անվավեր ճանաչելու և բարենպաստ վարչական ակտ կայացնելու խնդրանքով: Բողոքարկման հանձնաժողովի կողմից 25.09.2018թ. կայացվել է թիվ 56/5 որոշումը, որով ամբողջությամբ պարտավորության գումարները ներվել են:

2018թ. իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն նախատեսված 20 համայնքներում իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն, որի արդյունքում կազմվել են ակտեր: Հայտնաբերված թերությունների ու խախտումների վերացման նպատակով համայնքների ղեկավարներին տրվել են մեթոդական ցուցումներ: Հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին պարբերաբար ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել ամփոփ տեղեկատվություն:

2019թ. ընթացքում նախատեսվում է իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնել մարզի 19 համայնքներում:

Հաշվետու ողջ ժամանակահատվածում պարբերաբար իրականացվել է շուրջ 170 քաղաքացիների ընդունելություն, անհրաժեշտության դեպքում՝ իրավական խորհրդատվություն:

Յուրաքանչյուր աշխատանքային տարվա ավարտից հետո արխիվացվում են մարզպետի և գլխավոր քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի թղթային տարբերակները և հանձնվում մարզպետարանի արխիվ՝ մշտական պահպանության:

Մշտապես մարզպետարանի համապատասխան ստորաբաժանմանը տրամադրվում է տեղեկատվություն մարզպետարանի կայքում տեղադրելու համար /մարզպետի որոշումներ և կարգադրություններ, համայնքների ավագանիների որոշումներ, իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում լրացված հարցաշարեր և կազմված արձանագրություններ, վճիռներ, այլ տեղեկատվություն/:

Բաժնի կողմից կատարվել է նաև մարզի համայնքներից մարզպետարան ներկայացված իրավական ակտերի՝ համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների և ավագանիների որոշումների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ստուգում:

2018թ. ՄԱՐԶԴԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018թ. ընթացքում, Լոռու մարզպետարանում մուտք է արվել **23238** գործ (պաշտոնական և ոչ պաշտոնական գրություններ, հանձնարարականներ, դիմումներ և այլն), ընթացք տրված կամ առաքված գործերի քանակը կազմում է ավելի քան **13211**:

2018թ. Mulberri համակարգ է մուտքագրվել **4122** /պաշտոնական գրություն, որից **1301**-ը հսկողական գրություններ են: Դրանցից **1271** հանձնարարականի պատասխանվել է սահմանված կարգով և ժամկետներում, մնացած հանձնարարականների կատարումը ընթացքի մեջ է:

Հաշվետու ժամանակաշրջանում առցանց համակարգով և առձեռն եղանակով մարզպետարան է մուտք եղել շուրջ **3919** դիմում, բողոք, առաջարկություն, տեղեկատվական հարցում, որոնցից **301** -ը ստացվել են Նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովից, ՀՀ Վարչապետի աշ, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից

Քաղաքացիների ընդունելության կարգի պահանջների համաձայն, հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է ՀՀ Լոռու մարզպետի մոտ ընդունելության գրանցվողների հետ նախնական ընդունելություն /թվով մոտ **922** քաղաքացի/, որոնց պարզաբանվել և մեթոդական ու իրավախորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել,

բացատրվել է նրանց իրավունքները, ուղղորդվել ըստ դիմումի բովանդակության, տարբեր մարմիններ ու գերատեսչություններ: Նշված քաղաքացիներից թվով **490**-ը գրանցվել են մարզպետի մոտ ընդունելության, որից **399**-ը Վանաձորում, իսկ **91**-ը տարածաշրջաններում, նրանց բարձրացրած հարցերին տրվել են համապատասխան պարզաբանումներ և ցուցաբերվել համապատասխան աջակցություններ և օժանդակություն: Բավարարվել է **163** խնդրանք:

2018թ-ի ընթացքում Լոռու մարզպետարան տարբեր եղանակներով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից մուտքագրվել է շուրջ **15197** գրություն, որոնց տրվել է համապատասխան ընթացք՝ սահմանված կարգի պահպանմամբ:

2018թ. ընթացքում իրականացվել է Լոռու մարզպետի մոտ կայացած թվով **36** խորհրդակցությունների արձանագրում, հանձնարարականների առաքում ըստ հասցեատերերի և այլն:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ